Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՓԱՐԱՄԱՔ

ԵՐԵՎԱՆ

329.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՓՈՐՈՄՈՂ

Ա 82697

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1992

ԳՄԴ 63.3 (22) 52
Փ 280 Պ

Տպագրվում է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր
Ա. Ս. Համբարյան

Պողոսյան Հ. Մ.
Փ 280 Պ *Փարամազ [Պատ. խմբ.՝ Ա. Ս. Համբարյան] ՀԳԱ պատմության ին-տ—Ներ.՝ ՀԳԱ հրատ. 1992. 96 էջ, նկ.։*

Գրքում լուսաբանված են հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Փարամազի կյանքի և գործունեության դրվագները (1863—1915 թթ.), մինչև նրա կախաղան հանվելը։ Ընթերցող լայն շրջաններին հասցեագրված սույն գրքում հայրենիքում առաջին անգամ տպագրվում են 1898 թ. Վանի թուրքական դատաբանում նրա արտասանած ճառը և երկու հոդվածներ։

Պ $\frac{0503080913}{703\ (02)-92}$ Զնույց. ԳՄԴ 63.3 (22) 52

© Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1992



Փարամազ (Մատթեոս Սարգսյան)

ՍԱՐԳՍՅԱՆ—ՓԱՐԱՄԱԶՅԱՆ ՄԱՏԹԵՈՍ (ՓԱՐԱՄԱԶ) (1863—1915)

Հայկական Հնչակյան սոցիալ-դեմոկրատական կուսակցության կարկառուն դեմքերից մեկը՝ Փարամազը, ծնվել է 1863 թ., Մեղրի ավանում։ Ծննդավայրում նրան անվանել են Սարգսենց Փարա[1]։ Կ. Գևորգյանի տարեգրքում գրված է, որ Փարամազը ծնվել է Ղարաբաղում և «մեծ դեր ունեցած է Վանա ինքնապաշտպանական կռիվներուն»[2]։ Իրականում Փարամազը Ղարաբաղում չի ծնվել ու չի մասնակցել Վանի 1896 թ. ինքնապաշտպանական կռիվներին և իր խմբով այնտեղ է ժամանել մի տարի ուշ։

Փարամազը սկզբնական կրթությունն ստացել է հայրենի Մեղրի ավանի տարրական դպրոցում, ապա ընդունվել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Նրա՝ ճեմարան ընդունվելու և այնտեղից հեռանալու մասին կան իրարամերժ կարծիքներ։ Փարամազի կենսագիր Սիրվարդը գրում է, որ նա Գևորգյան ճեմարան է ընդունվել 1878 թվականին[3], որը և ճիշտ է։ Կենտրոնական պատմական արխիվում գտնվող Գևորգյան ճեմարանի աշակերտների մատյանում այդ մասին ասված է. «Մատթեոս Փարամազյան Սարգսյանց ի Մեղրի գեղջի Տաթևու վիճակի։ 15 ամաց։ Ունի ծննդյան վկայագիր, ի 22 օգոստոսի 1878 ամի, ընդ հրամանավ 186, պատվաստի ծաղկի ի 30 հուլիսի նույն ամի, և ուսման ի 20 օգոստոսի այնր տարվո։ Ըմուտ աշակերտության ճեմա-

---

1 Ասս, *Դատաստան*, Կ. Պոլիս, 1909, էջ 10։

2 Գևորգյան Կ., *Ամենույն տարեգիրքը*, 1965, էջ 169։

3 Սիրվարդ, *Փարամազ (Մատթեոս Սարգիսյան), կյանքն ու գործունեությունը*, Փրովիդենս, 1954, էջ Ա։

յանի սրբ. էջմիածնի 25 սեպտեմբերի 1878 ամի։ Ընկյալ հղև երկրորդ դասարան։ Փոխադրվեցավ երրորդ դասարան ի 10 սեպտեմբերի 1879 ամի։ Փոխադրվեցավ ի չորրորդ դասարան ի 11 սեպտեմբերի 1880 ամի։ Փոխադրվեցավ ի Ե. դասարան ի 14 սեպտեմբերի 1881 ամի։ Փոխադրվեցավ ի Զ դասարան ի 5 սեպտեմբերի 1882 ամի։ Փոխադրվեցավ ի Է լսարան ի 25 մայիսի 1883 ամի։ Ըստ որոշման ուսուցչական ժողովոյ արտաքսվեցավ հաշակերտութենն ի 29 դեկտ. 1883 ամինն[1]։

Ինչպես տեսնում ենք բերված քաղվածքից, Փարամազը հեռացվել է ճեմարանից 1883 թ. վերջին։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ռուսաստանում ավելի աշխուժացան հեղափոխական տրամադրությունները, որոնք, շատ բնական է, պետք է փոխադրվեին Անդրկովկաս և իրենց ոլորտի մեջ առնեին նաև տեղի երիտասարդությանը։ Հատկապես ուժեղացան ուսանողական և դպրոցների բարձր դասարանների աշակերտների հուզումները, որոնք ընդգրկեցին Թիֆլիսի, Գորու, Բաքվի, Շուշու, Երևանի դպրոցների աշակերտներին, որոնց թվում նաև 1874 թվականից գոյություն ունեցող էջմիածնի Գևորգյան ճեմարանի սովորողներին։ Ճեմարանում առաջին խռովությունն սկսվեց 1878 թ. փետրվարին։ Հուզումները շարունակվեցին նաև հետագա տարիներին։ Աշակերտները գտնում էին, որ իրենց նկատմամբ դաժան են վարվում, շատ են ծանրաբեռնում, պարտադրում են մասնակցել մայր տաճարում տեղի ունեցող բոլոր կրոնական արարողություններին։ Նրանք միաժամանակ բողոքում էին վանքում և ճեմարանում գոյություն ունեցող հոռի բարքերի դեմ։ Հաջորդ խռովությունն սկսվեց 1882 թ. դեկտեմբերին, Գևորգ հինգերորդ կաթողիկոսի մահից հետո (մահացավ դեկտեմբերի վեցին)։ Այս ելույթի կապակցությամբ ճեմարանի ղեկավարները որոշեցին 29 աշակերտներից 13-ին հեռացնել ճեմարանից։ 1883 թ. հունվարին սկսվեցին ճեմարանի աշակերտների ինքնակամ հեռացման խնդրագրերը։ Ճեմարանի

---

1 ՀՀԿՊԱ, ֆ. 312, ց. 1., դ. 122, թ. 78։

վարչությունն ստանում է 28 աշակերտների դիմումներն այն մասին, որ վեհաշնորհ Արշակ Նահապետյանը աշակերտների համար ստեղծել է ստրկական պայմաններ և պահանջում է աշակերտներից կուրորեն հնազանդվել իր կամքին, թույլ չի տալիս լրագիր կամ գրականություն կարդալ և «վարչությունը ջանացել է լրտեսներ ունենալ աշակերտների մեջ, միշտ այդպիսիներին որոնելով և խրախուսելով»[1]։

Արխիվում գտնվող Հովվյանի (որը այդ ժամանակ ճեմարանի ուսանող էր) հուշերից երևում է, որ Նահապետյանը դաժան մեթոդներ է կիրառել սովորողների նկատմամբ։ Երբ Թիֆլիսից ճեմարան եկածներն կրենց ընկերներին պատմում էին, թե հաճախում էին թատրոն և օպերա, թե տեսել են Ադամյանին և Սիրանուշին, «ճեմարանցիների բերանի ջուրը գնում էր...»[2]։

Սասպահ-Ջյուլյանի կարծիքով Փարամազը Գևորգյան ճեմարանը թողել է 4-րդ դասարանից (որը ճիշտ չէ) և «ընտանում է նոր դասընթացի մեջ»[3]։ Առանց որևէ հիմքի Արսեն Կիրոսը գրում է, որ Փարամազը որպես հնչակյան մկրտվել է Գևորգյան ճեմարանում և այնտեղից դուրս է եկել 4-րդ դասարանից[4]։

Փարամազի կինը՝ Հեղինեն, ունեցել է 3 երեխա, որոնցից երկուսը՝ աղջիկներ, Իսկուհի և Փառանձեմ անուններով։ «Վերջինս քսան տարեկան հասակում իրեն նետում է Կասպից ծովը՝ «անձնասպանություն գործելու համար, բայց հրաշքով ազատվեց խեղդվելուց»[5]։ Եղբայրներից Սաքգիս Սարգսյանը հնչակյան էր, ապա մտավ կոմունիստական կու-

---

1 ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1964, № 10, էջ 46 կամ Е. С. Сооян. Революционные движения молодежи в Армении в Закавказье в конце XIX-начале XX века, Е., 1987, стр. 89—91.

2 Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ՝ (այսուհետև ՀՀՀՊԿԳ արխիվ), ֆ. 4045, ց. 3, գ. 14—2, թ. 106։

3 Առանձնվ. աշխ., էջ 46։

4 Գաբրիելյան Ս. դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962, Ա հ., էջ 197։

5 «Հայրենիք» (Բոստոն), 1949, № 12(287), դեկտեմբեր։

Փարամազը իր կնոջ՝ Հեղինեի հետ

սակցության շարքերը, իսկ մյուսը՝ Տիգրան Սարգսյանը, կոմունիստական կուսակցության անդամ էր[1]։

Այսպիսով, 1884 թ. նոր տարին Փարամազը դիմավորում էր ճեմարանից հեռացված։ Նրան ուրիշ բան չէր մնում անել, եթե ոչ զբաղվել ուսուցչությամբ, կրթել ազգի զավակներին։ Նա ճեմարանում լավ կրթություն էր ստացել. տիրապետում էր հայոց լեզվին (նաև գրաբարին), հայոց պատմությանը և այլ առարկաների, ուսումնասիրել էր ռուսերենը և եվրոպական մի լեզու (հավանաբար գերմաներենը)։ 1884 թ. ուսուցիչ էր Հին Նախիջևանի հայկական դպրոցում։ Այստեղ նա ծանոթացավ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ ուսուցիչ Սապահ-Գյուլյանի հետ։ Փարամազի՝ Հին Նախիջևանում անցկացրած ժամանակաշրջանի մասին հետագայում Սապահ-Գյուլյանը գրում է. «Քաղաքի երիտասարդությունը՝ ծածուկ ժողովներ կազմելով, ագահությամբ լսում էր նրա դասախոսությունները։ Դասախոսը համակ բոց, կրակ էր, նա բոլորի սիրտը իր հետ ուներ»[2]։

Շատ չանցած Փարամազը Հին Նախիջևանից տեղափոխվեց Ջահուկ գյուղը, որտեղ էլ սկսեց զբաղվել ուսուցչությամբ։ Ջահուկ (Ջահրի) գյուղը գտնվում էր Նախիջևան գետի Ջահրի և Շահապոնք (Շահբուզ) գետակների մոտ։ Այս գյուղը հին հայկական բնակավայր էր, որը XVI—XVIII դարերում գտնվել է Նախիջևանի խանության կազմում, իսկ XIX դարի երկրորդ կեսից Երևանի նահանգի Նախիջևանի գավառի մեջ[3]։ Գյուղի մոտ կային հայկական խիտ բնակչությամբ մի շարք գյուղեր։

1887 թ. ժնևում հիմնադրվեց Հնչակյան կուսակցությունը, որը սկսեց հրատարակել «Հնչակ» թերթը։ Կարդալով այդ թերթը, Փարամազը որոշում է անցնել Արևմտյան Հայաստան և աշխատանք տանել թուրքական դաժան լծի տակ հեծող իր ազգակիցների՝ արևմտահայերի շրջանում։ Այս

---

1 «Հայրենիք» (Բոստոն), 1949, № 12 (287), դեկտեմբեր։

2 Փարամազ, Ջեոքերդ վեր կամ ճուղուպրիսաները, Տիբլիս, 1917, Սապահ-Գյուլյանի առաջաբանը, էջ 5-6։

3 Հայկական հանրագիտարան, հ. 7, էջ 60։

ցանկությունն իրագործելու նպատակով նա որոշեց սկզբից անցնել Պարսկաստան և ապա Վասպուրական։ 1895 թ. Փարամազը Արդաբիլ քաղաքում ուսուցիչ էր. սա նաև նշանակում է, որ նա ավելի քան տասը տարի ուսուցիչ է եղել Հին Նախիջևանում և ապա Ջահուկում։

Արդաբիլ-Արտավիլ-Էրտիպիլ քաղաքը Թավրիզից դեպի արևելք 5 օրվա ճանապարհ էր։ Քաղաքը գտնվում էր մի ընդարձակ դաշտահովտում, որին հյուսիսային կողմից իշխում էր Սալավա լեռը՝ ձյունե գագաթով և ստորոտին ունեցած հանքային ջրերով։ Քաղաքում XIX դարի վերջերին ապրում էր 220 հայ բնակիչ։ Պարսկական 12 հազար բնակիչների կողքին այդ սակավաթիվ հայերն ունեին մի եկեղեցի, մի ուսումնարան, թատերական մի փոքրիկ սրահ, գրադարան և ընթերցարան[1]։

Ուսումնասիրությունից երևում է, որ Փարամազը այդ քաղաքում մնացել է մի տարի, քանի որ 1896 թ. նա արդեն գտնվում էր Սալմաստում։ Սալմաստը (Սաղմաս) XIX դարի վերջերին ուներ բավական խիտ հայ բնակչություն։ Այնտեղ այդ ժամանակ կար 24 գյուղ՝ 1531 տնտեսությամբ և 9172 հայ բնակիչներով։ Գյուղերից ամենաշատ բնակչություն ունեին Հավթվանը՝ 325 տուն, 1829 շնչով, Փայաջուկը՝ 238 տուն, 1284 շնչով, Մահալամը՝ 180 տուն, 928 շնչով, Սավրան՝ 109 տուն, 620 շնչով, մնացած գյուղերի բնակիչների թիվը տատանվում էր 50-ից 100 տների սահմաններում[2]։ Ժողովրդի հիմնական զբաղմունքը այգեգործությունն ու զանազան արհեստներն էին։ Սալմաստը Իրանի համանուն գավառի (մահալ) կենտրոնն էր։ Սալմաստից ոչ շատ հեռու էին գտնվում հին հայկական քաղաքի՝ Զարեհավանի (Քյոհնաշահար) ավերակները։ Աշխատասեր և հյուրասեր սալմաստցիների շրջանում, մինչ Փարամազի այնտեղ ժամանելը, հայրենասիրություն և ազատասիրական գաղափարներ էին քարոզել Հ. Գոլոշյանը, Կ. Գուլակսզյանը, Մ. Այվազյանը՝ (Թերլեմեզյան) և ուրիշներ։

---

1 Էփրիկյան, «Բնաշխարհիկ բառգրան», Ա, էջ 324—325։

2 «Արարատ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1896, էջ 505։

1896 թ. Փարամազը Սալմաստում էր և նույն թվականի նոյեմբերի 18-ին աղջկան՝ Իսկուհուն, ուղարկելով էր նկարը, նրա վրա գրեց. «Աղջիկս, Իսկուհի ջան, առ այս պատկերը, հիշիր հորդ և գնա նրա ճանապարհով, որը թեև փշոտ, բայց դեպի երջանկության ասպարեզն է տանում»[1]։

Սամանուշ ակիցներից մեկը Փարամազի՝ Սալմաստի հայրենանոր մեջ տարած գործունեության մասին գրում է. «Առաջին անգամը, որ տեսնում էինք ընկեր Փարամազին, երիտասարդ, գեղեցիկ, դանդրահեր, ուներ երկար մազեր և սիրուն, փոքրիկ մորուք, վերին ատամների համակրելի դեմքով ու արտահայտությամբ։ Հենց առաջին օրից ընկերներս առանց բացառության սիրում ու հարգում էինք նրան, որը ժամերով նստում ու իր դերվիշի համբուր ու հեզահամբույր քնավորությամբ խոսում ու պատմում էր շատ ու շատ դեպքերի ու պատահարների մասին... ու հենց առաջին անգամ էր, որ որոշ հասկանալի բառերով լսում էինք Քարլ Մարքսի ու գիտական սոցիալիզմի մասին»[2]։ Այստեղ հարց է ծագում. որտեղի՞ց էր ծանոթ Փարամազը գիտական սոցիալիզմին և նրա հիմնադիր Կարլ Մարքսի աշխատություններին։ Մեր կարծիքով, «Գազափար»-ում 1894 թ. լույս տեսած Ա. Նազ արբեկի թարգմանած «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երկու գլուխներից բացի, հավանաբար նրա հոդվածն էին ընկել նաև Դ. Պլեխանովի ռուսերեն մի գրքի թարգմանությունները։ Գրող Ատրպետը իր հուշերում վկայում է, որ երբ 1894 թ. գտնվում էր Թավրիզում, այնտեղ ստանում էին «Հնչակ» թերթը և նրա հրատարակությունները, որոնց մի մասը ուղարկվում էր Վան, Բիթլիս, Խոյ, Սալմաստ, իսկ մյուս մասը քիշմիշի արկղերի մեջ դասավորելով ուղարկում էին Երևան, Թիֆլիս, Գանձակ, Նատրա, Բաղու, Աստրախան[3]։ Այնուհետև նշում է, որ Թավ-

---

1 Սիրվարդ, նշվ. աշխ., էջ Ա։

2 Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության բառասնամյակին, Փարիզ, 1930, էջ 101—102։

3 ՀՍՍՀ ԿԿԿ արխիվ, ֆ. 4045, ց. 3, գ. 3—2, թ. 22։

բիզում եղած ժամանակ մի նամակ է ստացել Գ. Պլեխանովից, որի հետ էին նաև նրա հրատարակությունները, որոնք «շամիշի արկղերով փոխադրվում էին Աստրախան, Նիժնի և Մոսկվա ու տարածվում մարքսիստների շրջանում»[1]։ Լարպնոը վկայում է նաև, որ այստեղ նա ծանոթացավ Գ. Դերցենի, Կ. Կաուցկու գործերին և վերջապես «կուլտակ ֆինս»։

Մի օր Սալմաստի երիտասարդները վիճաբանություն էին։ Ժամանակ սկսում են անհարգալ խոսքեր ասել և պակասեցնել այնպես էլ եկեղեցու մասին։ Փարամազը նրանց հանդիմանում է. «Բալաները (փոքրիկ), բնավ ու ոևէ պարագայի տակ չլինի, որ վիրավորեք ժողովրդի կրոնական զգացմունքները»[2]։

1896 թ. տեղի ունեցավ Հնչակյան կուսակցության համագումարը, որտեղ կուսակցությունը պառակտվեց երկու մասի, և վերակազմյալ «Կեդրոնական վարչության հրահանգով» Փարամազը պետք է գնար Սալմաստ, ապա Վան և փոխարիներ 1896 թ. Զուխում նահատակված Վանի հերոսական ինքնապաշտպանության ղեկավարներից մեկին՝ Հնչակյան Մարտիկ Սարուխանյանին։ Այդ օրերին Սալմաստի Հնչակյան կազմակերպությանը պատկանող մի քանի մարտիկներ խնդրամահ են անում թիֆլիսեց Ցոլակ անունով կավագին, որը կարողացել էր մարտիկների մեջ ներս թափանցել «երկաթյա կարգապահություն»։ Փարամազը այս դեպքի կապակցությամբ զինվորական դատ է նշանակերպում, և հանցավորները պատժվում են[3]։

1897 թ. վերջերին Փարամազը իր խմբով անցավ Վան։ Ուսումնասիրությունները պարզում են, որ նրա հանձնարարությունն էր այնտեղ ի մի հավաքել Մ. Սարուխանյանի խմբի մնացորդները և պայքարել թուրքական բռնակալության դեմ։ Այդ խմբի քանակի մասին կան տարբեր կարծիքներ։ Սապահ-Գյուլյանը գտնում է, որ նա Վան գնաց 40 հոգով[4]։

---

1 Նույն տեղում։

2 Հուշարձան..., էջ 101—102։

3 Պատմություն ս. դ. Հնչակյան կուսակցության, Ա. հ., էջ 212։

4 Փարամազ (1863—1915), Պեյրութ, 1968, էջ 1։

Ոմանք խմբի թիվը հասցնում են 60 հոգու[1]։ Նշենք, որ Փարամազը Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում գործել է ոստոսթոցի Համբարձում Գրիգորյան անուն-ազգանունով։

Սակայն Փարամազի Վանում գտնվելու ժամանակ քաղաքի և վիլայեթի բնակչությունը գտնվում էր ծանր վիճակում։ Սկսած 1895 թ. երկրորդ կեսից թուրքական և քրդական ուժերը սկսեցին Վասպուրականի հայ բնակչության կոտորածը, իսկ 1896 թ. հունիսին՝ վայրագ ջարդերը գավառներում և Վանում։ Վանի այն ժամանակվա երիտասարդները կազմակերպեցին իրենց քաղաքի հերոսական ինքնապաշտպանությունը։ Դրանից հետո Խանասորի դաշտում, ինչպես նաև Զուխում և Գարահիսարում դարանվեցին քաղաքից դեպի Պարսկաստան անցնող խմբերը. զոհվեցին հարյուրավոր երիտասարդներ՝ իրենց ղեկավարների հետ միասին։ Հաջորդեց Խանասորի հայտնի պատժիչ արշավանքը։ Սհա այս դեպքերից հետո էր, որ 34 տարեկան Փարամազը իր խմբով, մի քանի տեղ կռիվների մեջ մտնելով, հասավ Վան։ Թուրքական իշխանություններն իրենց լրտեսների միջոցով տեղեկացան նրա խմբի Վան ժամանելու մասին։ Սկսվեցին մասսայական խուզարկությունները։ Երկար փնտրելուց հետո ոստիկաններին հաջողվեց ձերբակալել Փարամազին, նրա հետ նաև Մելքոն Մանուկյանին, Վարդանին, Արշավիրին և ուրիշներին։ Բանտ նետվեցին Վանի մի քանի բնակիչներ ևս, ինչպես նաև Երամյան վարժարանի տնօրեն Արմենակ Միրզախանյանը, Փանոս Մարությանը և ուսուցիչ Մկրտիչ Տեր Բարսեղյանը։ Բանտ նետվածները մեղադրվում էին Թուրքիայի պատժական օրենսգրքի 45, 56, 58 և 62 հոդվածներով[2]։

Հ. Երամյանի վկայությամբ, ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաևսկին «չէր հոժարեր պաշտպանել» և «կդանդաղեր ազգու միջամտություն մը ընելու»[3] թուրքական իշխանու-

---

1 Աաո (Տիգրան Հ. Օտյան), Դատաստան, Պեյրութ, 1934, էջ 25։
2 Նույն տեղում։
3 Հ. Երամյան, Հուշարձան, հ. Բ, Ալեքսանդրիա, 1929, էջ 9։

թյունների առջև՝ բանտարկյալների կապակցությամբ։ Այդ օրերին պետք է Վան ժամաներ վիլայեթի նոր փաշա Թահիրը։ Հ. Ծրամյանը վկայում է, որ Կոստանդնուպոլսից նոր փաշային կարգադրել էին լուծել «Փարամազի և ընկերաց խնդիրը նպաստավոր եղանակով մը»[1]։ Ինչպես երևում է Հ. Ծրամյանի հուշերից, Վանի բնակիչների առաջավոր մասը, որոնց թվում նաև ինքը՝ հուշագրողը, աշխատել են ռուսական փոխհյուպատոսի վրա ներազդել նրա մոտ աշխատող Իվիա անունով մի ռուսի միջոցով, որի կինը հայ էր։ Նոր փաշայի ժամանելուց հետո մի քանի օր անց ազատ արձակվեցին Վանի այդ գործով բանտարկված բնակիչները։ Փաշան «Փարամազի խնդիրը դատարանին հանձնեց»[2]։ Փարամազին և նրա ընկերներին ամիսներ շարունակ թուրքական ոստիկանները խոշտանգումների ենթարկեցին։ 1898 թ. սկսվեց դատավարությունը։ Դատի մասնակիցների «հետաքրքիր նայվածքները կենտրոնացած էին երիտասարդի մը վրա, որ պլուխը վեր բռնած, եթկար գանգուր մազերը դրեթե մինչև ուսերուն հասած, կանգնած էր անխռով ու մերթ ընդ մերթ հայացքը կսևեռեր ներկաներու վրա՝ առանց աղգվելու և արհամարհելով բոլոր սվինավոր ոստիկանները, որոնք իր շորս կողմը կկենային կազմ ու պատրաստ»[3]։

Դատը սկսվելուց հետո Փարամազը համարձակ ասաց, որ դատարանին բացատրություն կտա միայն այն դեպքում, եթե ներկա գտնվեն եվրոպական պետությունների ներկայացուցիչները։ Նույնը կրկնեցին նաև մյուս մեղադրյալները։ Դրանից հետո դատը հետաձգվեց, և միայն ամիսներ անց այն վերսկսվեց եվրոպական պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ։

Փարամազը հպարտ և խրոխտ կեցվածքով դատարանում հայտարարեց, որ Օսմանյան Թուրքիայում արդարություն չկա, իսկ ինչ վերաբերում է սկսված դատավարությանը, ապա այն կրելու է ձևական բնույթ։ Փարամազը դատի ժամա-

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում։

3 Աստ. նշվ. աշխ., էջ 17։

նակ մերկայրեց թուրքական կառավարության՝ հպատակ ազգերի նկատմամբ վարած կեղծ ու դաժան քաղաքականությունը։ Ըստ նրա, բռնակալությունը ծնել է Հնչակյան կուսակցությունը, որը նպատակ ունի ազատագրել իր ժողովրդին թուրքական բռնակալությունից, քանի որ պետությունը պարբերաբար ջարդեր է կազմակերպում։ Նա ավելացրեց, որ «Թուրքիան, շնորհիվ մեծ մարդասպան սուլթան Համիդի, գողերու, ավազակներու և մարդասպաններու երկիր դարձած է»[1]։

Իր ճառի սկզբում Փարամազը, դիմելով դատարանի նախագահին, ասաց. դուք մեզ անվանում էք խռովարարներ, սրիկաներ, ավազակ-կողոպտիչներ, մարդիկ, որոնք վերդովում են ժողովրդի անդորրությունը, սակայն իրականում մենք այդպիսին չենք, քանի որ այդպիսին լինել «նշանակում է շահագործել ժողովուրդը»։ Այնուհետև նա հայտարարեց. մենք հեղափոխականներ ենք։ Օսմանյան կառավարությունը, նրա պաշտոնյաները երկու տասնյակ տարի առաջ բալկանյան ժողովուրդներին դրել էին ծանր վիճակի մեջ և այդ կառավարության ուժերի առաջացրած «խժդժությունները, վայրենի գործողությունները ինչ քստմնելի տպավորություն էին գործում քիչ ու շատ զգայուն սրտի վրա»[2]։

Այնուհետև Փարամազն անցնում է փաստերի թվարկմանը։ Չորս տարվա ընթացքում կոտորվել են 175000-ից ավելի հայեր, կողոպտվել է 80 հազարից ավելի ընտանիք, այրվել է 2500 գյուղ։ Միայն Վանի Ղալբը փաշան 200 անմեղ մարդ սպանեց։ Արճակում թուրքական զինվորները եկեղեցում 450 հոգու ոչխարների պես մորթեցին։ Այլջավազում մյուդիրը ցորենի հորի մեջ կենդանի թաղեց 40 հոգու՝ օրինակ վերցնելով Սասունի դահիճ Զեքի փաշայից, որը 600 հոգու կենդանի թաղել էր։ Ապականվել ու այրվել են հայ-

---

1 Միրվարդ, նշվ. աշխ., էջ 21։

2 Փարամազի ճառը, Իմ դատավարությունը Տաճկաստանում 1898 թ., Շիքագո, 1919, էջ 11։

գական 570 եկեղեցի, 80 վանք և մոտ 300 եկեղեցի վերածվել է մզկիթի[1]։

Անդրադառնալով գյուղացիներից և մնացած բնակչությունից հարկեր հավաքելու դաժան մեթոդին, Փարամազն ասաց. «Գյուղերի երեսը վաճառվում է հարուստ կապալառուներին, որով եթե գյուղը պիտի տա 100 ոսկի, կապալառուն ստանում է 200 և ավելի։ Զինվորական տուրքը, փոխանակ ստանալու 21 տարեկանից, ստացվում է ծծկերից, դեռ չծնվածից, նույնպես և մեռածներից»[2]։ Իր ճառում Փարամազը պաշտպանել է ոչ միայն ճնշված ու հարստահարված հայերին, այլև Թուրքիայում ապրող մնացած ազգերին. «Մեկ արտամետցի տատիկ ինձ պատմել է. «Մեր ծառի տունձը գնահատեցին 20 ղրշ., իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց գնել 10-ը ղուրուշով, որի փոխարեն լավ ծեծվելուց հետո՝ վճարեցի տուրքը»[3]։ Փարամազի ճառի մեջ հետաքրքրական տվյալներ կան Թուրքական տուրքերի մասին. «Հետաքրքիր է խաղողի տուրքը. մի պըտղից վեց տուրք։ Նախ հողի տուրք (ջրինն էլ ավելի), հետո խաղողի պտղի տուրք, մի տուրք ևս խաղողը շիրա շինելու համար, մի տուրք խաղողի չանչի համար, դարձյալ մի տուրք օղի քաշելու համար, մի տուրք ևս օղին ու գինին վաճառելու համար. դեռ չենք ասում մի տուրք ևս դրանով պարապողի աշխատանքի համար»[4]։

Ժողովրդի վիճակը շատ է վատանում նաև նրանով, որ տուրքը հավաքվում է ոստիկանների միջոցով։ Թուրքական պաշտոնական օրենքի համաձայն, հետևակ ոստիկանը ամսական պետք է ստանա մեկ ու կես, իսկ ձիավոր ոստիկանը՝ 3 ¼ ոսկի։ Սակայն նրանք արդեն 5 տարի է, որ չեն ստանում նախատեսված այդ գումարը[5]։ Այդ ռոճիկը Ալայի բեյի գրպանում է, և ոստիկանները ստիպված իրենց ըն-

---

1 Նույն տեղում, էջ 17, 18, 19։
2 Նույն տեղում, էջ 19։
3 Նույն տեղում, էջ 20։
4 Նույն տեղում, էջ 20։
5 Նույն տեղում, էջ 21։

տանիքը և իրենց պահելու համար գնում են կաշառակերություն։ «Ոստիկանին պետք է գալիս գնելու մեկ լիտր յուղ կամ մեկ երինջ զավուրմայի համար, նա ստիպված ամբողջ ստանալիք իր ռոճիկի ստացականը տալիս է ու ստանում մեկ լիտր յուղ կամ մի երինջ և կամ մի քանի չափ ցորեն։ Նշանակում է՝ ոստիկանը մեկ լիտր յուղ կամ մեկ երինջ առնում է 10, 20, 30, 40, 50 և ավելի ոսկիով։ Ձիավոր ոստիկանը պիտի գա պաշտոնի, ձի չունի, իսկ Ալային տալիս է նրան 1—2 ոսկիանոց մեկ ձի՝ փոխարենը ստանալով խեղճի տերության վրա մնացած հինգ տարվան ռոճիկի ստացականը։ Նշանակում է՝ խեղճ ձիավոր ոստիկանը մեկ ձին առնում է իր մեծից 20—60 և ավելի ոսկով։ Սրանք անհերքելի ճշմարտություններ են, որ կատարվում են Վանում»[1]։

Այսպիսով, ոստիկանը, որպեսզի ընտանիք պահի և ինքը ապրի, ստիպված պետք է կողոպտի գյուղացիներին և նրա համար, ինչ խոսք, միևնույնն է, թե կողոպտվողը լինելու է «հայ, թուրք, քուրդ, ասորի, չերքեզ և հույնիսկ մթրրը-գնչու...»[2]։

Այնուհետև նա իր ճառում անդրադառնում է Թուրքիայում բանտարկյալների շատ վատ վիճակին, որոնցից ծեծելու և խոշտանգումների դնով թուրքական ոստիկանները կորզում են իրենց ցանկալի ցուցմունքները։ Նա բերում է օրինակներ, թե ինչպես բանտ ընկած աղջիկներն ու տղաներն անդամ բռնաբարվում են և ապա նշում, որ Թուրքիայում «օրենքը պաշտոնյաների կամայականությունն է» և «Արդարությունը ձեր տաճկական բառարանում նշանակում է .կաշառք»[3]։

Անդրադառնալով սուլթանի կողմից կազմակերպված համիդիական գնդերին, Փարամազն ասում է. «Համիդյա։— Ենիչերիների հարազատ շարունակությունն է ժողովրդի համար պատրաստված այս խարազանը։ Ազգաբնակչության

1 Նույն տեղում։
2 Նույն տեղում, էջ 22։
3 Նույն տեղում, էջ 23 և 24։

արյունը, աշխատանքը ծծողն է այս Համիդյան. նրա պատվի բռնաբարողն է այս Համիդյան. նրա սրբությունը պղծողն է այս կազմակերպությունը։ Եվ այսպիսի մի կազմակերպություն կարող է հաստատվել միմիայն Տաճկաստանում, այն էլ միմիայն ամենամեծ ոճրագործը (նկատի ունի Աբդուլ Համիդին—Հ. Պ.) կարող է երևակայել այսպիսի մի կազմակերպություն»[1]։

Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ հայերիս թուրքական կառավարողների այն մեղադրանքին, որ մենք իբր ցանկանում ենք ստեղծել մեր թագավորությունը, ապա դա «Ճիշտ չէ։ Մեր ցանկությունն է, պարտքն է ստեղծել ինքնավար Հայաստան մը սոցիալիստական վարչակարգով, ուր բնակվողները, առանց ցեղի և դավանանքի խտրության, ապրին սիրով, եղբայրաբար, ազատ քաղաքական և տնտեսական ճնշումներից»[2]։

Ապա, դառնալով դատարանին, նա ասում է. «Դուք մեզ մեղադրում եք այն հարցում, որ մենք անաստվածներ ենք և ժխտում ենք կրոնը, սակայն մենք առաջարկում ենք «եկեղեցին բաժանել պետությունից, որպեսզի այս վերջինը չբռնանա մարդոց հավատալիքների վրա...»[3]։ Այնուհետև մեզ մեղադրում եք, որ մենք դեմ ենք սեփականությանը, սակայն չէ՞ որ այն առաջանում է աշխատավոր մարդու ձեռքով, որը հափշտակվում է։ Եվ, դիմելով դատախազին, շարունակում է. «Դուք, անաշխատ, ծույլորեն հորանջողներդ կհափշտակեք միլիոնավոր աշխատավորներու քրտնաթոր վաստակը և կհղփանաք պալատներու մեջ»[4]։ Այնուհետև դուք մեզ մեղադրում եք, որ մենք ցանկանում ենք քանդել ընտանիքը, սակայն ձեր բռնակալական երկրում այն արդեն գոյություն չունի, քանի որ «կինը հավիտենական աղբ մարդու սորուկը դարձնելու կաշխատիք»[5]։

1 Նույն տեղում, էջ 24—25։
2 Սիրվարդ, նշվ. աշխ., էջ 22։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում, էջ 23։
5 Նույն տեղում, էջ 24։

Ա 82697
ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ճառի վերջում նա հայտարարում է, որ մենք պահանջում ենք «խղճի ազատություն, մամուլի, ժողովների դումարման և խոսքի ազատություն, կյանքի, ինչքի ու պատվի ապահովություն» (ընդգծումը հեղինակինն է—Հ. Պ.)։ Այնուհետև նա շարունակում է. «Մեր պահանջներին վերջ չկա, քանի որ կյանքի պահանջներին ևս վերջ չկա, և որովհետև մեր պահանջները չեն կարող Օսմանյան պետության տակ ապահովվել, ուստի մենք՝ հեղափոխականներս, մարդկային ամենայն իրավունքով պահանջում ենք Հայաստանի ազգաբնակչության բաժանումը Օսմանյան պետությունից»[1]։

Եվ վերջապես, մենք չենք էլ ձգտում ունենալ հայկական բնկություն և թագավորություն, քանզի «մենք թրու ազգայնամոլներ չենք, մենք աննենդ ժողովրդասերներ ենք...» և մեր պահանջն է «...հայ, քուրդ, թուրք, արաբ, լազ, չերքեզ, ասորի, եզդի, մինչև անգամ մութրուբ-գնչուն իր քվեով ընտրի իր կառավարիչը ու կառավարվի իրենց կարգված մարդերով ու օրենքներով, որը բարօրության հասնելու կարճ ճանապարհն է։ Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ամբողջ ազգաբնակչության համար»[2]։

Այնուհետև նա անվախ հայտարարում է իրեն դատողներին. նայեցեք մեր մոտ գտնվող սրահի պատուհաններից և դուք կտեսնեք, որ Հայաստանի գեղերը դեռևս կարմրած են իր ժողովրդի արյունով։ Սակայն ո՞վ կազմակերպեց այդ անմեղ ժողովրդի հալածանքները և ջարդը, այդ դուք կազմակերպեցիք։ Ճառի վերջում նա բերում է պարսիկ բանաստեղծ Սաադիից երկու տող.

«Վախենում եմ չհասնիս Քեռն, ով արաբ,
Այս ճանապարհը, որ գնում ես, դեպի Թուրքստան է»[3]։

Փարամազի դատավարությունն սկսվել է 1897 թ. նոյեմբերի 18-ին, վերջացել 1898 թ. օգոստոսի 1-ին[4]։ Այդ կրա-

---

1 Փարամազի ճառը, էջ 29—30։
2 Նույն տեղում, էջ 30։
3 Նույն տեղում, էջ 31։
4 Պատմություն ա. գ. Հնչակյան կուսակցության, Ա. հ., էջ 199։

կոտ ճառը թուրքական դաժան իրականության դեմ ուղղված մի պամֆլետ է՝ գրված 1898 թ. հուլիսի 29-ին և արտասանվել է դատարանում (ոմանք ասում են՝ թուրքերեն) նույն թվականի օգոստոսի 1-ին։ Ժամանակակիցներից մեկը վկայում է, որ Փարամազը «որքան որ իր առանձնակի խոսակցության մեջ ընկերային ու զվարթախոս, նույնքան էլ կրակ ու բոց կդառնար, երբ հարցը գար ընկերային նյութերու, զարմանք պատճառելով այդ վտիտ մարմնեն արտաբերող այդ ջղուտ եռանդին վրա»[1]։ Նա միշտ էլ իր ընկերների հետ զրույցների ժամանակ, ժողովներում, ժողովրդի հետ հանդիպումներին այն միտքն է հայտնել, որ «բռնակալությունը ծնավ մեր կուսակցությունը և ոչ թե վերջինը— Հնչակյանությունը—ծնավ բռնակալությունը»[2]։

Դատարանի նիստերի ավարտից հետո 15-ական տարի ստացան Երևանցի Արշակը, պարսկաստանցի Վարդան Նապարբեկյանը, մշեցի Վարդանը, խլաթցի Ենգոն, կարճկանցի Դյուրջին, արճակցի Գևորգը։ Դատավճռի ընթերցումից հետո Փարամազը իր վերջին խոսքում ասաց. «Կախաղան և շղթա, մահ և տանջանք... արհամարհում ենք մեր բոլոր էությամբ, մեր կարողությամբ։ Ձեր կախաղանների սյուները ազատության աշտարակներ են, և նրանց չվաններից կախված ճոճուն մարմինները՝ հավիտենական նախատինք ներկա կարգերի և նրանց հեղինակների համար»[3]։

Սակայն Վանի դատարանի այդ վճիռը Փարամազի նկատմամբ չի կատարվում, և նա տեղափոխվում է Նովկաս։ Հ. Երամյանի վկայությամբ, վանեցիների կողմից միջնորդություն եղավ ֆրանսիական հյուպատոսարանի աշխատակից Բեռ դը Ֆրանսին, որ Վլ. Մաակու հետ օգնեց Փարամազին։ Դատից հետո Վանի ռուսական փոխհյուպատոս Վլ. Մաակուն հաջողվում է Փարամազին և նրա հետ գտնվող ռուսահպատակներին մի ամիս պահել հյուպատոսարանում,

---

1 «Երիտասարդ Հայաստան», 14 մարտի, 1961։
2 «Երիտասարդ Հայաստան», 16 հունիսի, 1964։
3 Աստ. նշվ. աշխ., էջ 43։

ապա ուղարկել Կովկաս։ Երամյան վարժարանի տնօրեն Հ. Երամյանը իր հուշերում նշում է. «Փարամազի հետ հալվիվ անգամ մը կրցած էի տեսնվել, այն ալ հյուպատոսարանին մեջ»[1]։

1902-03 թթ. Կովկասի փոխարքա Գոլիցինի զեկուցագրերի հիման վրա ցարը հրամայում է հայ եկեղեցական կալվածքները գրավել։ Փարամազը, զայրացած այս փաստից, իր համախոհներ Շանթի, Փայլակի (Մհեր Մանուկյան) և Կայծակի հետ միասին ահաբեկչություն են կազմակերպում Գոլիցինի դեմ։ Նրանց հաջողվում է դաշունահար անել նրան, սակայն ցարական սատրապը երջանիկ պատահականությամբ կենդանի է մնում։ Կողակներին հաջողվում է ապանել Շանթին և Կայծակին, իսկ Փայլակը կարողանում է ազատվել և անցնել Պարսկաստան։

Եկեղեցական կալվածքները գրավելու դեմ ժողովրդի պայքարի ղեկավարներից մեկն էր նաև Փարամազը։ Այդ ժամանակ, մինչ Թիֆլիս գալը և ահաբեկչության կազմակերպումը, նա գտնվում էր Բաքվում։ Մի պատգամավորության գլուխ անցած նա գալիս է Էջմիածին, հանդիպում Մ. Երամյանի հետ և նրան ներկայացնում այն պահանջագիրը, որը կազմել էր ընկերների հետ միասին[2]։ Ուսումնասիրությունից երևում է, որ Փարամազը մասնակցել է այն կոչի կազմելուն և հրատարակությանը, որը տարածվել է 1904 թ. հոկտեմբերին Գոլիցինի դեմ ահաբեկչության միամյակի առթիվ. «Դա իրավազուրկ դարձած մի ժողովրդի օրհասական բողոքն էր, որն այլ կերպ արտահայտվել չէր կարող, քան թթն նույն այդ ժողովրդի որդիների արյունով, որ ուժգնապես ցնցեց մեզ և ապարեզ հանեց մեր անձնուրաց երեք ընկերներին»[3]։

1905 թ. ռուսական կառավարության և Կովկաս անցած թուրք լրտեսների պրոպագանդայի միջոցով կազմակերպվե-

---

1 Հ. Երամյան. նշվ. աշխ., հ. Բ., էջ 10։
2 Քսան կսխաղանները (Փրովիտենս), 1916, էջ 13։
3 ՀՀՔԿՓԿՊ արխիվ, ֆ. 4045, ց. 1, գ. 60, թ. 1։

ցին հայ-թաթարական կոտորածներ։ Փարամազին խորթ էին ընդհանրապես հայ-թաթարական կռիվները։ Նա ամեն ինչ անում էր՝ կանխելու համար դալիք աղետները։ Ազգերի համերաշխության կողմնակից, նա անձամբ այցելում էր «ադրբեջանցի պեկերու և գործիչներու գտնված շրջանները և կհամոզե, որ վերջ դրվի եղբայրասպան կռիվներուն»[1]։ Այդ նույն գրքից, որից մենք քաղվածք բերեցինք, տեղեկանում ենք, որ այդ օրերին նա գտնվում էր Զանգեզուրում և «Զանգեզուրի շրջանի թաթար ժողովուրդը (1906) հազարավոր ստորագրություններով տասնյակ համախոսականներ, հարյուրավոր շնորհավորական նամակներ ունի թափած ս.գ. Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչություն՝ Փարամազի կատարած գործերի, առաքինությունների համար»[2]։

Հայ-թաթարական կռիվների օրերին Հնչակյան կուսակցությունը տպագրեց և տարածեց կոչ՝ ուղղված հայ և թուրք հասարակությանը, որի մեջ ասվում է, որ Բաքու քաղաքի աղջամուկչությունը ապրեց սոսկալի վիճակ և «հարյուրավոր ծեր ու մանուկ գնդակահար եղան և այրվեցին ու ածուխ դարձան, հարյուրավոր ընտանիքներ զրկվեցին իրենց աշխատավորներից, տուն չկա, ուր սուգ ու կոծ չլինի, ծերերն ու մանուկները՝ այլանդակված, անպաշտպան, լցնում էին փողոցները իրենց ողբ ու լացով»։ Այդ ամենի համար մեղադրվում էր կառավարությունը. «Սոսկալի է տեսնել, թե ինչպես երկու միատեսակ ճնշված դարավոր հարևան ժողովուրդներ այսօր գաղանացած միմյանց վրա են հարձակվում, կոտորում, թալանում ու այրում»[3]։

Բաքվում գործելու տարիներին Փարամազը իր եղբոր՝ Սարգիս Սարգիսյանի միջոցով սկսեց զեկավարել և ուղղություն տալ Միջին Ասիայում (Աղսաբաղում) 1904—1905 թթ. կազմակերպված հնչակյան մասնաճյուղին, որը և սկսեց

---

1 Փարամազ (1863—1915), 1968, էջ 1։

2 Նույն տեղում։

3 ՀՀԱԿՊԿ արխիվ, ֆ. 4045, ց. 1, գ. 67, թ. 1։

ակտիվ գործունեություն ծավալել հատկապես 1906 թվականին[1]։

1906 թ. Ստ. Շահումյանը «Նոր խոսքի» օգոստոսի 27-ի 5-րդ համարում հանդես եկավ «Ովքե՞ր են հնչակյանները» հոդվածով, որի մեջ նշեց, որ նրանք շարունակում են մնալ հասարակության համար «խորհրդավոր անծանոթներ»[2]։

Ստ. Շահումյանի այդ հոդվածի առիթով Փարամազը 1906 թ. «Աշխատանք» թերթի № 33-ում հանդես եկավ «Բաց նամակ «Նոր խոսքի» խմբագրությանը» հոդվածով, որի մեջ ծանրացավ Հնչակյան կուսակցության վրա։ Քանի որ «Նոր խոսքը» փակվել էր, Ստ. Շահումյանը հանդես եկավ «Մշակում» «Հնչակյանների առաջին դերյուտը» հոդվածով, ընդդեմ «Աշխատանք» թերթում տպագրված հոդվածի, շեշտելով, որ ինքը չի հայհոյել կամ զրպարտել հնչակյաններին, այլ նշել է, որ Ռուսաստանում բռնկված հեղափոխությունը հնարավորություն ստեղծեց բոլոր կուսակցությունների համար, որոնք դուրս եկան ընդհատակից և սկսեցին օգտվել լեգալ հնարավորություններից և «Հնչակյան կուսակցությունը միակն է, որ ոչ մի փորձ չարավ գոնե մի փոքր լեգալիզացիայի ենթարկելու իր գործունեությունը՝ օգտվելու համեմատական ազատությունից»։

1907 թ. ապրիլին Փարամազը մի շարք հայերի՝ Հովհաննես Համբարձումի Բալասանովի, Համբարձում Սահակի Բեժանյանի, Արմենակ Եփրեմով Տեր-Սիմոնյանցի (Տեր Գաբրիելով) հետ գտնվում էր Ելիզավետպոլի բանտում։ Ո՞րն էր նրանց հանցանքը։ 1906 թ. Շուշիի հյուրանոցներից մեկում վերոնշյալները հավաքվում են ժողովի։ Հունիսի 22-ին, իմանալով այս մասին, ոստիկանությունը խուզարկում է համարը և պարզում, որ նրանք հավաքվել էին՝ մտածելու այն միջոցների մասին, որպիսով զինեն «տեղական Հնչակ-

---

1 Վ. Գ. Պետրոսյան. Անդրկովկասի և Մերձավոր Ասիայի բոլշևիկյան կազմակերպությունների համատեղ պայքարի պատմությունից (1903—1917 թթ.), Ե., 1967, էջ 290։

2 Ստ. Շահումյան, երկ, հ. 1, Ե., 1975, էջ 326։

3 Նույն տեղում, էջ 357։

յան կուսակցության մարտիկներին»[1]։ Ոստիկանության ձեռքքն են անցնում զենքի գնման մասին փաստաթղթեր։ Քննության ընթացքում ինչպես Փարամազը, այնպես էլ իր ընկերները իրենց մեղավոր չեն ճանաչում, ասելով, որ այդ փաստաթղթերը գտել են փողոցում։

1907 թ. սեպտեմբերի 27-ին Թիֆլիսի դատական պալատը որոշեց նրանց բոլորին էլ դատապարտել մեկ տարի բանտարկության։ Կառավարական սենատը 1907 թ. որոշեց նոյեմբերի 26-ին նրանց մասին եղած որոշումը թողնել ուժի մեջ[2]։ Դրանից հետո ազատվելով բանտից՝ Փարամազը թողնում է Ռուսաստանի սահմանները և գնում Պարսկաստան։

1908 թ., երբ Թուրքիայում տեղի ունեցավ հեղաշրջում, Փարամազն անմիջապես մեկնեց Կոստանդնուպոլիս։ Դրանից առաջ, լսելով կնոջ մահը, նա գնում է հայրենի Մեղրի և տան մոտ հանդիպում է աղջկան՝ Իսկուհուն, որը նրան չի ճանաչում։ Վերջապես Իսկուհին իմանում է, որ այդ մորուքավոր անծանոթը իր հայրն է, ուրախությամբ տուն է հրավիրում։ Մի քանի ժամ տանը մնալուց հետո Փարամազը մեկընդմիշտ թողնում է հայրենի Մեղրին, իր հարազատ տունն ու տեղը, ընտանիքը և նորից մխրճվում պայքարի մեջ[3]։ 1909 թ. Փարամազը հասնում է Կոստանդնուպոլիս, ուր թուրքական լրտեսները նրան «գալու օրից սկսում են հետապնդել քայլ առ քայլ»[4]։ Այդ օրերին Կոստանդնուպոլսում գործընթացի մեջ էր Հնչակյան կուսակցության վեցերորդ համաժողովը, որին մասնակցում էր 75 հոգի, և որի գլխավոր խնդիրն էր կատարված հեղաշրջումից հետո «ճշտել Հնչակյան կուսակցության դիրքը հանդեպ Օսմանյան պետության»[5]։

---

1 ՀՀԿՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 2։

2 ՀՀԿՊԱ, 114, ց. 2, գ. 22, թ. 49 և 57։

3 «Արարատ» (Բեյրութ), 14 հունիսի 1959։

4 «Հալքենիք» (Բոստոն), № 12 (287), դեկտեմբեր, 1949։

5 Հ. Աբամյան, Պատմություն Հնչակյան կուսակցության, Կ. Պոլիս, 1918, էջ 40։

1909 թ. հուլիսին կայացած այդ համաժողովում մի շարք պատգամավորներ գտնում էին, որ հայ ժողովուրդը շատ ծառայից Օսմանյան Թուրքիային, սակայն դրա փոխարեն ոչ մի հատուցում չտուցավ։ Հայ ժողովրդի մոտ հեղաշրջման օրերին և նրանից շատ քիչ անց կար այն հավատը, որ կատեղծվեն քիչ թե շատ նորմալ պայմաններ հպատակ ազգերի, որոնց թվում նաև հայերի համար, սակայն այդ հաշիրականացում, քանի որ շատ չանցած երիտթուրքերի տիրապետության ժամանակ սկսվեց Ադանայի հայերի կոտորածը, որին զոհ գնացին մոտ 30 հազար անմեղ հայեր։ Ադանայի եղեռնից հետո Եգիպտոսում գտնվող իր ընկերներից մեկին՝ Ռ. Կարապետյանին, Փարամազը գրեց. «Ոչինչ փոխված է Թուրքիո իրականութենեն ներս. սուլթանիզմեն շատ ավելի վտանգավոր են երիտասարդ թուրքերը, որոնց ազգայնական շովինիզմը մեծ աղետի ձայներ կուտա...»[1]։

Ըստ Ս. Հովվյանի հուշերի, հնչակյանների 9-րդ համաժողովին մասնակցում էր նաև «հնչակյան հնագույն, բյուրեղային գործիչ Փարամազը...»[2]։ Այստեղ քննարկվեց նաև այն հարցը, թե ինչ վերաբերմունք պետք է ունենալ դեպի ՌՍԴԲԿ-ն։ Ընտրվեց հանձնաժողով (Սապահ-Գյուլյան, Ցաքո, Փարամազ, Հովվյան, Աշըգպաշյան), որի ծրագիրը լույս չտեսավ, սակայն նրա մեջ մի կետ կար, որտեղ ասված էր, որ պետք է հնչակյանները Ռուսաստանում «զեկավարվեն այն ընդհանուր սկզբունքներով, դաշտափարներով և գործելակերպով, որով զեկավարվում էր ՌՍԴԲԿ-ն»[3]։

Ելնելով Թուրքիայում ստեղծված վիճակից, հնչակյան մի խումբ (Փարամազ, Սապահ-Գյուլյան, Սյունիք, Ազատ Ոսանիկ և այլք) գտնում էր. «Թուրքիա արդիական պետություն մը պիտի չկրնա ըլլալ ու հետևաբար հայուն կմնա շարունակել հեղափոխական գործունեությունը մինչև վերջնական ազատություն»[4]։ Երկրորդ հոսանքը (Հմ. Արամյանց,

---

1 «Արաքատ» (Բեյրութ), 14 հունիսի, 1961։

2 ՀՀՔԿՓԿՊ արխիվ, ֆ. 4045, ց. 3, գ. 20—2, թ. 346։

3 Նույն տեղում, թ. 353։

4 Հ. Արամյան, նշվ. աշխ., էջ 40։

Աշչպպաշչյան, Ն. Զաքարյան և այլք) ու դրանց հետ ժողովի մեծամասնությունը գտնում էր, որ արևմտահայության ուժասպառ և քայքայված վիճակից եզնելով «բնավ թույլատրելի չէր գտներ հեղափոխական գործունեությունը»[1] և վերջապես որոշում ընդունվեց, որ Թուրքիայում կուսակցությունը պետք է գործի «օրինական (լեգալ) հողի վրա, ցորչափ արդի օրինական իրավունքները չեն խլվիլ աշխատավոր ժողովուրդին ձեռքեն»[2]։

Համաժողովում քննարկված օրակարգի այդ հարցի կապակցությամբ փոթորկալից ելույթներ եղան, և Փարամազը ստստանեց մի կրակոտ ճառ։ Նշենք, որ Փարամազի ընկերները և ժամանակակիցները վկայում են, որ նա հիանալի հռետոր էր և իր ելույթներով միշտ էլ հմայում էր ունկնդիրներին։ Այդ ելույթում Փարամազը պնդում էր, թե «պետք չէ խաբվիլ երիտթուրքերու այսօրվան մեղրածորան խոսքերեն, խոսքեր, որոնք կըլլան հայ հեղափոխական կուսակցությունները քնացնելու և անոնց ուժը սկարացնելու համար»[3]։

Համաժողովից որոշ ժամանակ անց Փարամազը մեկնեց Ատաբազար և ժողովրդի առջև ունեցած իր ելույթում կրկնեց նույն մտքերը, ինչ ասել էր համաժողովում. «Հեղափոխությունները ընկերային, քաղաքական և տնտեսական վերքերը դարմանող վիրաբուժական գործողություններ են. այն ժողովուրդները, որոնք հեղափոխել չեն գիտեր, առանք ուշ կամ կանուխ կդադրին ըլլալեն»[4]։ Ատաբազարում եղած ժամանակ նա բազմաթիվ հանդիպումներ է ունենում տեղի հայ հասվածի հետ և քարոզում է ուրիշ ժողովուրդների, հատկապես թուրքերի և քրդերի վրա նախահարձակ չլինել, այլ նախապատրաստվել՝ սպասվող օրհասի պահին ինքնապաշտպանության անցնելու։

---

1 Նույն տեղում, էջ 41։

2 Նույն տեղում, էջ 42։

3 Փարամազ (1863—1915), էջ 9։

4 Նույն տեղում։

1908 թ. օգոստոս ամսին Թիֆլիսում Հ. Առաքելյանի և այլոց նախաձեռնությամբ հրավիրվում է «Թուրքահայերի ժողով», որին մասնակցում էին 390 հոգի։ Նպատակը պարզ էր. Թուրքիայում տեղի էր ունեցել հեղաշրջում, որը սկզբնական շրջանում մեծ ոգևորություն էր առաջացրել ոչ միայն այնտեղ, այլև Ռուսաստանում, հատկապես այստեղ ապրող հայ պանդուխտների շրջանում։ Վերջիններս ցանկություն ունեին վերադառնալ իրենց հայրենիքը, սակայն նրանց մի մասը համապատասխան գումար չուներ։ Ժողովի կողմից հաստատված հանձնաժողովը պետք է դիմեր Կ. Պոլիս և «արտոնություններ խնդրե թուրքահայ վերադարձողների համար»[1]։ Նույն խնդրանքը պետք է ուղղվեր նաև Ռուսաստանի արտաքին գործոց նախարարությանը։ Ժողովում բյուրոյի և նրա նախագահի ընտրության ժամանակ աղմուկ է բարձրանում, և նրա մասնակիցներից ոմանք իրար վիրավորանքներ են հասցնում։ Այս կապակցությամբ «Մշակի» 1908 թ. օգոստոսի երկու համարներում շարունակաբար լույս տեսած «Թուրքահայերի ժողով» («Ս» ստորագրությամբ) հոդվածում նշվում է, որ «Կուսակցական գծուծ շահախնդրության մի երևույթի էլ ականատես եղանք»[2]։

Կարդալով այս երկու համարներում տպված հաղորդումները, Փարամազը Բաքվից օգոստոսի 7-ին նամակ է գրում «Մշակի» խմբագրությանը Փ. Արամազ ստորագրությամբ և ժողովում իրենց անվայել պահողներին անվանում է թայֆայականներ. «Երբ ամեն կողմից տաճկահայերը,—գրում է նա,—սրտատրոփ սպասում են Թիֆլիսում կայանալիք «Թուրքահայերի ժողովին» տեսնելու ինչ ճար պիտի արվի իրանց դրության մասին, ահա այսօր կարդում ենք «Մշակի» № 169-ում, թե թայֆայականներն իրենց մարդկանց անուններն են հրում հրապարակ, թե մի քանի անպատկառներ ումն Պարունակյանի դրդմամբ փողոցային խոսքեր են ուղ-

---

1 «Մշակ», № 168, 3 օգոստոսի, 1908։

2 Նույն տեղում, № 169, 4 օգոստոսի, 1908։

զում ժողովականներին, որից ավելի լուրջ մարդիկ զզված հեռանում են բյուրոյի անդամությունից և այլն, և այլն»[1]։ Այնուհետև նա նշում է, որ առանձին դեպքերում ասպարեզն ընկած է անպատկառ մարդկանց ձեռքը, և ավելացնում, որ եթե Խիֆլիսում, ուր կուտակված է հայ մտավորականության մեծամասնությունը, այդպիսի դեպքեր են տեղի ունենում, ապա ի՞նչ անեն խեղճ գավառացիները։ Վերջապես նա սրտի ցավով գրում է. «Սպանում են խոսքի մարտիկներին, առևանգում, բանարարում են բողոքողների հարազատներին, ուսումնարանը շինում են իրենց նման «անպատկառ» հոգաբարձուների և «ծծկեր» վարժապետների կապալավայր, ապականում են իրականությունը, վիժեցնում են կուլտուրական ձեռնարկությունները՝ տեղը դնելով իրանց մութ գործերի մութ ու խունացած աստառը։

Արդյոք ո՞վ պիտի մաքրե այդ ավգյան գոմը»[2]։

Արխիվում պահպանվող հնչակյան նյութերից երևում է, որ Փարամազը Բաքվում եղած ժամանակ Հնչակյան կուսակցության լիազոր-ներկայացուցիչն էր, իսկ 1908 թ. դեկտեմբերի 15-ին ընտրվում է այդ կուսակցության վարչության նախագահ[3]։

1910 թ. Փարամազը Ատաբազարից անցավ Տիգրանակերտ, որը վիլայեթի կենտրոնն էր և որտեղ XX դարի սկզբին հայերը պատկառելի թիվ էին կազմում։ Չնայած 1890-ական թվականներին Տիգրանակերտի հայերը շատ կորուստներ ունեցան, սակայն երբ Փարամազն այնտեղ էր, Տիգրանակերտի վիլայեթում կար 105 հազար հայ բնակիչ։ Տեղի հայերի կողմից Փարամազը շատ ջերմ ընդունելություն է գտնում։ Իր ելույթներից մեկում նա այն միտքն է հայտնում, որ Թուրքիայում ապրող «ժողովուրդների միջև բարեկամության խորացումը» հանդիսանում է «որպես աղբյուր բոլորի երջանկության, երկրի մեծության»[4]։

---

1 ՀՀՀԱԿ ֆոնդ, ֆ. 4045, ց. 1, գ. 1, թ. 82։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, ց. 1, գ. 132, թ. 16։

4 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 59։

Ա. Տապաղյանը վկայում է, որ Փարամազը Տիգրանակերտում գտնված օրերին երիտթուրքերին համարեց «հայոց դահիճը», գտնելով, որ նրանք իրենց ընդունած սահմանադրությունից հետո էլ աշխատում են ծրագրեր մշակել՝ Արևմտյան Հայաստանում հայերին ջարդելու համար։ Այսքանից հետո նա խորհուրդ էր տալիս հայերին. «Արդ, զինվեցեք և արթուն կացեք»[1]։ Փարամազին նրա ժամանակակիցները համարում էին «սոցիալիզմի բանիբուն առաքյալ»։ Նա այդ գրերին «կազմակերպչական և գաղափարական հոյակապ աշխատանք տարած է Տիգրանակերտ քաղաքի և շրջակա հայ կյանքի մեջ»[2]։

Սեդրակ Շահենը գրում է, որ երբ Փարամազը գտնվում էր Տիգրանակերտում, սաստիկ ցուրտ էր, և քաղաքի ընակիչներն ստիպված քանդում էին իրենց տների կիսշինությունները և գերանները վառելով տաքացնում իրենց ասրիճատեղերը։ Փարամազը աղքատ ընտանիքներին օգնելու գործը իր վրա է վերցնում։ Այդ կապակցությամբ մի նամակում ասված է. «Փարամազ հոս էր։ Աստված իր ողորմության դուռը բացավ խեղճերուն համար։ Աննման Փարամազի կարգադրությամբ Հնչակյան մասնաճյուղի վարչությունը զորակոչի ենթարկեց ընկերներն ու ընկերուհիներն։ Քիչ շատ ունևորներ իրենց ունեցածեն ավելին տվին։ Կտրիճ ընկերուհիները մեյ մեկ ջուվալ կոնատակներուն դրած՝ տունեն տուն ինկան և հավաքեցին ալյուր, բրինձ, բլղուր, յուղ, ածուխ ու վառելափայտ և անխտիր բաժանեցին անոթությունեն տառապող խեղճերուն, նույնիսկ թուրք խեղճերուն»[3]։

Նույն Սեդրակ Շահենը վկայում է Փարամազի այդ օրերի տրամաբանը. «Հայ հեղափոխությունը ուղղված չէ թուրք աշխատավորության դեմ, այլ՝ թուրքիո բռնակալ, հետադիմական կառավարության և անոր հովանավորած փաշա,

---

1 Քառասնամյակ «Երիտասարդ Հայաստանի» (1903—1943), Նյու Յորք, 1944, էջ 279—280։

2 Սեդրակ Շահեն, Հուշեր և փուշեր կյանքի ճանապարհին, Ա. հրատ., Լոս Անճելես, 1975, էջ 61։

3 Քառասնամյակ «Երիտասարդ Հայաստանի», էջ 92։

պեյ, աղա բռնատեր Թալանչիներուն դեմ»։ «Մենք դեմ չենք սահմանադրության։ Թուրքիո տիրակալ իշխանապետները, հանձին իթթիհադականներու, սահմանադրության ծածկույթի ներքև թաքնված, կորոճան Թուրքիո բաղկացուցիչ տարրերը բնաջնջել։ Ասոր փաստված ապացույցն է Սելանիկի իթթիհադականների համագումարին ներքին ոճրածին որոշումը՝ հայերը բնաջնջելու նպատակով»։

«Դիտակ այսպիսի դժնդակ կացության, հայերու գոյատևությունը կարելի է միայն ինքնապաշտպանությամբ»։

«Պետք է պրպտել և գտնել ազատամիտ Թուրքեր, միասնաբար հակազդելու ոճրածին Իթթիհադին»[1]։

Տիգրանակերտից և Խարբերդից գրած իր նամակների մեջ Փարամազը Թուրքական սահմանադրության մասին գրում էր. «Եղածը (Միդհատյան սահմանադրությունը) խաղաղություն չէ, այլ զինադադար»։ Այնուհետև, հայ ժողովրդին կոտորելու երիտթուրքերի անմարդկային պլաններին անդրադառնալով, նա գրում է. «Իթթիհադը որոշել է, որպես երկրի դրության տերը, թե՛ իր ժողովրդի և թե՛ եվրոպական պետությունների առաջ իր վարկը բարձրացնելու և գիրք տերը մնալու համար, բաղկացուցիչ ազգություններից որևէ մեկից «արյան տուրք» պահանջել, կոտորել։ Վայրը այս անգամ էլ պիտի լինի Հայաստան, ենթական՝ հայը»[2]։

1909 թ. Տիգրանակերտում կազմակերպվեց Փարամազի թատերախումբը, որը նույն թվականի փետրվարին անգլիական հյուպատոսարանի բակում բեմադրեց «Սանդուխտ կույս», ապա «Անմահ Ժիրայր» դրամաները։ Այդ ժամանակ քաղաքում շաբաթը երկու անգամ ներկայացումներ էին տրվում. «իրիկունը այրերուն, իսկ ցորեկը կիներուն»[3]։ Բեմադրվեց նաև Փարամազի «Քամուն բերածը քամին կտանե» պիեսը։ Տիգրանակերտում նա հանգիստ չի ունեցել։

---

1 Սեդրակ Նանեն, նշվ. աշխ., էջ 56—57։

2 Քսան կախաղանները, կազմեց Երվանդ Ջորուրյան, Կ. Պոլիս, 1921, էջ 42—43։

3 Թառասնամյակ «Երիտասարդ Հայաստանի», էջ 278—279։

Նրա այդ օրերի մասին ժամանակակիցը գրել է. «Հեղափոխությունն՝ ինքն էր, Փարամազը, մարմնացած վրեժխնդրությունը և անձնուրաց տիպար ընկերականն ու ընկերավարականը, որ իր հետ տարավ հայ ազատագրական և ընկերվարական շարժումին կարևոր մաս մը»։ Նրա այդ ժամանակաշրջանի կյանքի մասին նույն ժամանակակիցը գրում է. «Ցարքաշ և աննյութական, կես կուշտ, կես անոթի հաճախ՝ Փարամազ՝ Տիգրանակերտ այցելությամբ, օրհնություն մը եղավ հայուն, թե թուրքին ու քուրտին»[1]։

Ժողովրդի հետ իր հանդիպումների ժամանակ նրա առաջին պահանջն էր լինել միաձույլ և ապա կարևորում էր «ինքնապաշտպանության անհետաձգելի պահանջը»։ Եվ քանի որ այդ օրերին իթթիհադականները նպատակադրվել էին Տիգրանակերտում ջարդ կազմակերպել, Փարամազը իր համերաշխության մասին ելույթներով «քաղաքի ինքնապաշտպանությունը կազմակերպեց»[2]։ Եվ թուրք-իտալական պատերազմի օրերին դարձավ բոլորի սիրելին և «Տիգրանակերտի հայոց վզին երկարած իթթիհադական ոուլը չեզոքացուց։ Թշնամին նշմարած ըլլալով հայոց կանխապատրաստությունը, բացարձակապես վախցավ նախահարձակ ըլլալ և ետ կեցավ դազանային մտադրությունեն»[3]։ Փարամազի և իր ընկերների կատարած աշխատանքը նկատի ունենալով, Տիգրանակերտի վալին ստիպված ասաց. «Կիմանամ, որ հընչակյանները երեք ամիսներե ի վեր դիրքեր կպահեն, որպես թե թուրքերը հայերը պիտի ջարդեն, կերդնում տիճիս, իմաճիս և մեռելիս վրա, որ ասանկ բան չկա»[4]։

Հայերի նախապատրաստական աշխատանքները հասցրին նրան, որ հայկական թաղերի վրա այդ ժամանակ հարձակում չեղավ։

---

1 Ամիրայի արձագանքներու վերջաբանը, Բ հ., Տիգրան Մկունդ Նյու Յորք, 1953, էջ 382։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 285։

4 Նույն տեղում, էջ 285։

Փարամազը հորդորում է ժողովուրդներին մոռանալ «քանն ու ոխը ու հարազատ եղբայրներու նման իրարու զորավիգ կըլլաք ձեռք բերելու համար ազատություն, իսկ երբ առաջվա նման ատելություն կսնուցանեք միմյանց հանդեպ, կործանման կառաջնորդեք թե՛ դուք ձեզ և թե՛ երկիրը»[1]։

Տիգրանակերտից նա անցնում է Սլիվան, ծանոթանում այնտեղ գտնվող 30 հազար քրդախոս հայերի գյուղերի մի մասին և սկսում է նրանց մոտ աշխատանք տանել։ Նշենք, որ իմպերիալիստական պատերազմի ժամանակ այս քրդախոս հայերը դիմադրեցին իրենց վրա հարձակվող թուրքական ուժերին, և նրանց մի մասը կռվելով անցավ Պարսկաստան։ Սրանց մի մասը անցավ Մոսուլ, որոնցից 2000 հոգի մեկնեցավ Հայաստան ներգաղթող կարավանին և բնակվեց Հայաստանում։

Փարամազը Սլիվանից անցնում է Խարբերդ, ապա Արղանամադեն։ Արղանամադեն սանջակը (գավառ) ընկած էր Դիարբեքիրի նահանգում, Տիգրիսի ակունքների շրջանում, նրա Արղանա և այլ վտակների ավազանում։ Գավառի վարչական կենտրոնը Արղանամադեն քաղաքն էր։ Եղեռնի նախաօրյակին գավառի 35000 բնակիչներից 20 000-ը հայեր էին, որոնք զբաղվում էին հիմնականում հացահատիկների, բամբակի, խաղողի մշակությամբ և արհեստներով։ Այդ քաղաքի մոտ էր գտնվում հայտնի Արղանամ պղնձի հանքավայրը, որտեղ կային նաև ոսկու և արծաթի երակներ։ Հայերը այս քաղաքում կազմում էին բնակչության կեսը։ Բացի հայերից, այստեղ ապրում էին նաև թուրք, հրեա, հույն, քուրդ։ Այստեղ նա մի հրապարակային ժողով կազմակերպեց, որի ժամանակ ընդգծեց երիտթուրքերի՝ ազգերին իրար դեմ հանելու քաղաքականությունը, ասելով. «Հայ, թուրք, քուրդ և այլ աշխատավորները իրենց շահերուն և ընդհանուրի շա-

---

1 Սիրվարդ. էջ 60։

2 Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Թախշյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 458—459։

հերուն համար պետք է համերաշխ ապրին իրարու հետ, որովհետև բոլորիդ ալ շահերը նույնն են, միմյանց շղթայված։ Մեկիդ վնասը մյուսին վնասն է, իսկ շահը՝ մյուսին շահը։ Թուրք մի տաք, որ ձեր միջև ատելություն սերմանեն ուրիշներ, բաժնեն ձեզ իրարմե՝ իրենց տիրապետությունը հավերժացնելու համար»[1]։

Փարամազը այցելից նաև Մալաթիա, ապա խարբերդ։ Մալաթիան (Մելիտենե), Փոքր Հայքի այս քաղաքը, 1915 թ. ուներ 40 000 բնակիչ, որի կեսը հայեր էին։ Մալաթիայում կարդալով իր դասախոսության մեջ նա նորից ընդգծում է Թուրքիայում ապրող ժողովուրդների բարեկամությունը, առանց որի «հնարավոր չէ ժողովուրդների խաղաղությունը, հանգիստ կյանքը ապահովել»[2]։ Նա դասախոսությունը վերջացնում է՝ արտահայտելով այն միտքը, որ «բոլորդ ալ, առանց ազգի ու կրոնի խտրության, այս երկրի զավակներն էք և հետևաբար եղբայրական զգացումներ պիտի տանեք միմյանց հանդիպ և ոչ թե ատելություն»[3]։

Մի ամիս Մալաթիայում մնալուց հետո Փարամազը գնաց Խարբերդ քաղաք, որի 20 հազար բնակիչներից կեսը հայեր էին։ Խարբերդում էր գտնվում հայտնի քոլեջը։ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Խարբերդի վիլայեթում հայերը կազմում էին 50, քրդերը 27, թուրքերը 22, իսկ ասորիները 1 տոկոս[4]։ Խարբերդում Փարամազը կարդում է մի շարք դասախոսություններ, որոնց մեջ նա նորից և նորից առաջ է քաշում բոլոր մարդկանց իրավահավասարության հարցը։ «Մարդիկ, առանց գույնի,—ասել է նա,—դավանանքի և ազգային խտրականության, եղբայրներ են, դիքար շահագործելու իրավունք չունին, մեկ խոսք՝ մեկը ամենքի, ամենքը մեկի համար սկզբունքն է շիտակը, արդարը և աստվածայինը»[5]։

---

1 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 67։

2 Նույն տեղում, էջ 71։

3 Նույն տեղում։

4 Հայկական հանրագիտարան, հ. 5, էջ 40։

5 Սիրվարդ. նշվ. աշխ., էջ 74։

Աբդուլ Համիդի տիրապետության տարիներին, 1904 թ. նոյեմբերի 2-ին, Մալաթիայում գլխատվել էին երկու հայ՝ Հակոբը և Հաբեթը, որոնց դերեզմանի մոտ հավաքված բազմության առաջ ունեցած իր ելույթում Փարամազը ասում է.

«Հոն, ուր կախաղաններն են ճոճվում,
Ազատությունն է ման գալիս,
Հոն, ուր մեռելներն են ննջում՝
Հարությունն է մոտալուտ»[1]:

Շապինգարահիսարցի այդ երկու անմեղները անգթաբար գլխատվել էին՝ մահից առաջ ասելով. «Անմեղներ ենք: Զոհվինք մեր ազգի սիրույն և տառապող մարդկության ազատագրության համար: Մեր վրեժը ազատասերները թող առնեն»[2]:

Մալաթիայից գրած իր նամակներից մեկում Փարամազը նշել է. «Պարսիկ թաթար խուժանը իր ձեռքերը բույսի ներկով է ներկել, ֆինայել.—բուրֆի ձեռքը հայի արյան ներկով է, ներկված.—սրա լուս վկան է հայ լեռը, հայ ջուրը, հայ հարսը, հայ երիտասարդը, ամբողջ Հայաստանը»: Նա ապա կանխագուշակել է հայ ժողովրդի ապագա ապանդը. «Տիրող ազգի հանգման երկյուղը մոայլ ամպի նման լողում է այս երկրի վրա: Իրթիհադը այս զգում է»[3]:

1912 թ. աշնանը, տասնհինգ տարի անց, Փարամազը երկրորդ անգամ գտնվում էր Վանում: Այդ մի ժամանակ էր, որ Թուրքիայում իշխում էին իթիլաֆականները: Այստեղ նա ժողովրդի համար կարդաց մի քանի դասախոսություն: Ներկա գտնվող խոսրով Թութունջյանը նրա ելույթներից հիշում է հետևյալ խորիմաստ միտքը. «Չեզոք մարդիկ անպիտար մարդիկ են»: Հուշերի հեղինակը Փարամազի մասին գրում է. «Նիհար կազմով, արևե՞ն, թե տառապանքեն պրոն-

1 Նույն տեղում, էջ 76:
2 Նույն տեղում, էջ 77:
3 Քսան կախաղանները, էջ 43:

զի գույն ստացած երկար դեմքով, առյուծի բաշերը գլխին, խոր կապույտ աչքերով, արտաքնահարդար ձևերուն խարթ, ան կնմաններ անապատի դերվիշին»[1]։

Փարամազի Վան ժամանելու կապակցությամբ Հ. Երամյանը նշում է, որ նա նպատակադրվել էր ամեն ջանք գործ դնել «Հնչակյան կուսակցությանը զորացնելու համար»[2]։ Քաղաքում եղած երեք կուսակցություններն անընդհատ կռիվների մեջ էին և առանձին դեպքերում ատրճանակներով էին լուծում իրենց հարցերը։ Եվ քանի որ Փարամազը «հանրային շահը ամեն կուսակցական նկրտումներն վեր կդասեր», նրա ջանքերով երեք կուսակցությունների ղեկավարները 13 ապրիլից նիստերից հետո ստորագրեցին մի համաձայնագիր, որի մեջ որոշվեց յուրաքանչյուր կուսակցության պրոպագանդիստական աշխատանքի շրջանակը։ Որոշվեց բնարական խնդիրներ քննարկելու ժամանակ նախապատվությունը տալ խաղաղ պայքարին, իսկ գինված գործողությունները սկսել միայն ինքնապաշտպանական նպատակներով։ Միաժամանակ որոշվեց շուտափույթ քայլեր անել՝ ինքնապաշտպանական նպատակների համար զենք ձեռք բերելու համար[3]։ Չնայած այս բոլորին, կուսակցությունների միջև եղած վեճերը Վանում շարունակվեցին։

Երբ Փարամազը այցելեց Վան, արդեն հրապարակի վրա էր հայկական բարենորոգումների հարցը։ Այդ օրերի նրա գործունեության մասին ժամանակակիցներից մեկը գրում է. «Ավելի քան հոսեռես էր Փարամազը հայ բարենորոգումների խնդրին վերաբերված վախճանի մասին։ Գառան հոտը գայլին վստահել, կնշանակե որևէ բարիք ակնկալել ցարական դիվանագիտությունեն՝ հայոց համար»[4]։ Իր ելույթներում Փարամազը այն համոզումն է հայտնում, որ հարկավոր է հայկական բոլոր կուսակցությունների համախմբում

---

1 «Վարազ» (Բեյրութ), 1968, № 62, հուլիս։

2 Հ. Երամյան, Հուշարձան, հ. Բ, էջ 165։

3 Նույն տեղում։

4 «Վարազ» (Բեյրութ), 1968, № 62, հուլիս։

ձև նրանց առաջնահերթ խնդիրը «հայկական գավառներու ժողովրդի պաշտպանության կազմակերպումն է»[1]։

1913 թ. սեպտեմբերին Կոստանցա քաղաքում բացվեց Հնչակյանների 7-րդ համաժողովը։ Փարամազը գտնվում էր Վանում և չէր մասնակցում այդ համաժողովին, սակայն իր ուղարկած գեկուցագրում ժողովրդի ծանր վիճակի մասին գրում էր. «...Իմ այցելած գավառներուն մեջ Իթթիհադի զուլումը չափ ու սահման չունի» և երիտթուրքերը «Հայաստանը հայ արյունով ողողելու են»[2]։ Այս համաժողովը որոշեց «պաշտպանել Հայաստանի քաղաքական ինքնավարությունը՝ անջատ Թուրքիայից»[3]։ Այս ժողովում Փարամազը ընտրվեց Կենտրոնական վարչության անդամ։

Արխիվում պահպանվել են Փարամազի մի քանի նամակները։ Նրանցից մեկը գրված է Վանից, 1913 թ. մայիսի 13-ին և ուղղված է Հնչակյան կուսակցության ուսանողական միությանը։ Գրում է, որ ստացել է «Կայծ» թերթի 10—11 համարը, որը նվիրված է «Կարլ Մարքսի հիշատակին», գովում է նրանց նախաձեռնությունը և ապա ավելացնում, որ այդ համարը «համազոր է տալու Ձեր կարողության դրական վկայագիրը»։ Եվ շարունակում. «Արդյոք ի՞նչը պիտի լինի ջինջ հայացքներով առլեցուն ուսանողության—մտքի և զգացողության մարմնացնողի—մղիչ կետը՝ սևեռյալ գաղափարը։

— Իրականության շշմեցուցիչ ժխորը, կյանքի գունատ, արյունոտ վայնասունը խլացնողի դիտումով, բարձրակոչ բառաչով իր հավարն է անում՝ ոչնչացրեմ Ցարը» (ընդգծումը Փարամազինն է—Հ. Պ.)։ Այնուհետև գրում է, որ մեզ խանդավառում են «Մարքս ու Էնգելս, Լասալ ու Լաֆարգ, Գեթ ու Լիբկնեխտ, Բեբել ու Կաուցկի, Կլարա և մի կարավան ոգիներ»[4]։

---

1 Նույն տեղում։

2 Հ. Նուսյան, նշվ. աշխ., էջ 166։

3 Քսան կախաղանները, էջ 15։

4 ՀՀԿՊԱ, ֆ. 402, ց. 1, գ. 16, թ. 1։

Նա նաև ուսանողական միությանը գրում է. «Ձեզ, որ Ձեր առօրյա պարտականությամբ աննկուն ասպետը լինելով՝ ուսանելով ուռուցանում եք և մեզ մեր կորուսյալ իրավունքը։

Ձեզ, որ պատկանում էք ծով ալիքի միջից «Կայծի» հրաշեկ փողփողոցով մեր զավակներդ ռահվիրան էք հանդիսանում մեզ՝ մեր իրավունքի անշեղ ուղիին, և մենք պարծենում ենք։

Ս.դ. Հնչակյան հին սերնդի կողմից ողջունում եմ նոր սերնդիդ՝ կոչելով. մեր պակասը դուք լրացրեք, կեցցեք դուք և ձեր գործը—«Կայծը»։

Ընկերական սիրալիր բարևներով, Ձեր գործունեությունով տարված, ձեզանով շնչող Փարամազ»[1]։ Ինչպիսի՜ լավատեսություն նոր սերնդի նկատմամբ։

1913 թ. հուլիսին «Վան Տոսպը» նշում է, որ Փարամազը Գավաշի բնակիչների համար դասախոսություններ կարդալու նպատակով հուլիսի 3-ին գտնվում էր Ռատանում և կայմակամի հետ տեսնվելուց հետո անցել է Գավաշ։ Նույն 1913 թ. հուլիսին Փարամազը մի քանի դասախոսություն է կարդում Այլուր գյուղի բնակիչների համար[2]։ 1913 թ. օգոստոսին նա Գավաշում էր։ Այդ մասին «Վան Տոսպը» գրում է «Հնչակյան Փարամազի կողմեն ընդհանուր գյուղացիներին տրվելիք դասախոսությունները խափանելու համար, կարգ մը գյուղերի մեջ դաշնակցականների կողմեն շատ անախորժ բաներ պատահեցան։ Փայխներ գյուղի մեջ, գյուղացիները ստիպման տակ չհամաձայնեցան ներկա ըլլալ դասախոսության, հակառակ սկզբեն իրենց հայտնած փափագին»[3]։

Այս անգամ Փարամազը Վան էր եկել Ասո-ի հետ, «Վանի մեջ ալ քիչ շատ անգամներով մասնաճյուղ մը ունենալու նպատակով»[4]։ Սեպտեմբերի 23-ին կենտրոնական սրահում

---

1 ՀՀԿՊԱ, ֆ. 402, ց. 1, գ. 16, թ. 1։

2 «Վան Տոսպ», թիվ 25, 13 հուլիսի, 1913։

3 Նույն տեղում, թիվ 29, 10 օգոստոսի, 1913։

4 «Հորիզոն», № 250, 11 նոյեմբերի, 1912։

նա հանդես եկավ «Տաճկաստանի քաղաքական կյանքի շուրջը» թեմայով։ Այդ դասախոսության մեջ, ինչպես երևում է «Հորիզոնի» 1912 թ. նոյեմբերին տպագրված մի հոդվածից, Փարամազը «հարձակեցավ կառավարության վրա, ծանրացավ իթթիհադականներու կենտրոնացման և տարամերժ քաղաքականության վրա, չմոռանալով նմանապես քանի մը սլաքներ ալ ուղղելու անոր հայ «դաշնակից» Դաշնակցության վրա...»[1]։

Սեպտեմբերի 30-ին դասախոսում է Ասոն՝ կրկնելով նույն մտքերը, չմոռանալով շեշտել հնչակյանների հաստաձայնությունը թուրքական «Հուրիեթ վե իթիլաֆ» կուսակցության հետ, ցույց տալով, որ վերջիններուս ծրագիրը շատ ավելի նպաստավոր է փոքր ազգություններու համար[2]։ Այնուհետև Ասոն քննադատում է Ա. Վռամյանին այն բանի համար, որ նրա կուսակցությունը դաշնակցել է իթթիհադականների հետ։

Կ. Սիտալը գրում է, որ Վանում հանդիպել է Փարամազի հետ «Թուրքիայի ամենակոպիտ քաղաքական խաղն ու խեղկատակությունը հանդիսացող «Հուրիեթի» խաբուսիկ օրերին», երբ նա ունեցավ մի քանի հրապարակային ելույթներ։ Ըստ Կ. Սիտալի, Փարամազը հիանալի տիրապետում էր հայ գրականությանը, որի կապակցությամբ գրում է. «Առանձին հաճույքով եմ հիշում մասնավորապես գրականության հարցերի մասին նրա հետ ունեցած այնքան հետաքրքիր զրույցները»[3]։

Վանում եղած ժամանակ բանակցում է ռուս հյուպատոսի հետ՝ մի հայ-քրդական միություն ստեղծելու կապակցությամբ։ Այնուհետև նա պետք է Վանից Փարիզ մեկներ։ Թուրքական իշխանությունները իրենց մարդկանց միջոցով տեղյակ էին Փարամազի այդ և այլ մտադրություններին։ Նրանք հրահանգեցին սպանել թե՛ Փարամազին և թե՛

---

1 Նույն տեղում։

2 Նույն տեղում։

3 «Ararat» (Բեյրութ), 4 մայիսի, 1955։

Իշխանին (դաշնակցական), սակայն նրանք սպանեցին Մելքոնին (Աղատ Ոստանիկ)[1]։

Ա. Եկարյանը Փարամազի մասին իր հուշերում գրում է, որ նա «լավ ու փորձված զեկավար» էր ու շեշտում էր. «Մի՞թե ինձ համար տարբերություն ունի, թե սուլթանական գահուն վրա նստողը Համիդ կկոչվի, թե Կարապետ»[2]։ Այնուհետև Ա. Եկարյանը նրա հետ բազմաթիվ հանդիպումների հիմամբ գալիս է այն եզրակացության, որ նա 1890-ական թվականների Փարամազը չէր, ավելի էր լրջացել. «Մենք անցյալին մեջ,—կրսեր տխրությամբ,—կնմանվինք այն հրեին ձիերուն, որ իրենց հախուռն ընթացքի մեջ ոտնակոխ կրնեն իրենց գոյությունը պահպանելու սահմանված գարիի արտերը»[3]։

Փարամազը 1914 թ. «Երիտասարդ Հայաստանում» գրեց իր «Ո՞վ է մեղավորը» հոդվածը՝ անվանելով այն «դիտումնավոր գրվածք»։ Հոդվածն ունի հետևյալ բնարանը.

Կործանեցեք, փշրեցեք կուռքերը։ Նրանց պատվանդանը կամ խավարի մեջ է, կամ կեղծիքի վրա։

Հայր-սիվա»[4]։

Հոդվածը ստորագրված է՝ «Նիրվան»։ Սակայն հենց բնարանից և բովանդակությունից հեշտ է կռահել, որ այն պատկանում է Փարամազի գրչին։ Հոդվածը Մշո դաշտի նկարագիրն է, հայի թախծով լի կյանքը. «Օ, որքան տիրաններ էին անցել ոհմակ-ոհմակ այս եղեմ դաշտի վրայով։ Որքան օջախներ մարվել, տներ կործանվել, դավեր անցել այս նահատակ ժողովրդի գլխով։ Յուրաքանչյուր նոր օր իր հետ բերել է նոր-նոր տանջանքներ, նոր ավեր։

---

1 «Ազդակ», թիվ 48, 29 հոկտեմբերի, 1972։

2 Հուշեր Արմենակ Եկարյանի, խմբագրեց Լ. Ջահուկյան, Գահիրե, 1947, էջ 160։

3 Նույն տեղում։

4 «Երիտասարդ Հայաստան» (Փրովիտենս), թիվ 43, 28 հունիսի, 1914։

Վիշապ ժողովրդի գաղափարը դարձավ, ինքն էլ՝ նրա դուսաանը։ Հատորներ հյուսեց իր գաղափարին՝ փնջի՜կ-փընջի՜կ, ականց շարեր կերտեց իր տանջանքին՝ աղա՜ւ մնջիկ։ Անէացավ վշտի տանջանքի մեջ, աստվածացրեց նրան, ինքը դարձավ նրա քուրմը և երգեց նրա օրհներգությունը»[1]։

Մի բանաստեղծություն, որի հեղինակը մինչև օրս էլ պարզված չէ, մեջբերված է Փարամազի կողմից։ Ահա դրանից մի հատված.

Երգիր սոխակ,
Քո երգի մեջ դայլայլուն
Վիշան է ժայթքում
Հանգույն սրտիս խորքերից։

Մեր աշխարհից շարան-շարան
Անցան, գնացին բռնավորք.
Մեր օջախում խունկի փոխան
Ճենճերացան մեր դավկունք։

Բուի ձայնը
Մեր ականջը խլացրեց—
Մահն է գուժում՝
Մահը յարիս, մալ, մյուլքիս։

Երգիր, սոխակ
Վիշար երգիր, դայլայլուն.
Նա է գալիս
Մեռած երկրիս հարությանը»[2]։

Ապա հեղինակը գրում է, որ այդ աշխարհը կարգի կգա մի օր և պետք է հավատալ դրան.

«Կարած Հովսեփը Քանան կգա մեկ օր,
Մի տխրիլ, Հակոբ,
Սուգի խրճիթը ծաղկաց կլինի մեկ օր,
Մի տխրիլ, Հակոբ»[3]։

---

1 Նույն տեղում։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։

1914 թ. մայիսի մեկին «Հնչակում» լույս տեսավ Փարամազի վերջին հոդվածներից մեկը՝ «Հայի պահանջը» վերնագրով։ 1908 թ. հեղաշրջումից հետո հայերը սխալմամբ կարծեցին, թե իրենց կյանքի համար կստեղծվեն շատ թե քիչ տանելի պայմաններ, սակայն շուտով հիասթափվեցին։ Հայ հայդուկը, լսելով հեղաշրջման և ընդունված «սահմանադրության մասին, իջավ լեռներից, զենքը դեն նետեց և «մշակույթի գործիքներն առավ, իր քանդված տունը, իր անթեղված օջախը վերաշինելու, կյանքի հրճվանքը ճաշակելու»[1]։ Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայից անջատվեցին Եպիրոսը, Մակեդոնիան և Ալբանիան, սակայն հայկական հարցը Թուրքիայում մնաց չլուծված։ Հայը շատ շուտով համոզվեց, որ Թուրքիայում աբդուլհամիդյան ժամանակաշրջանի հետ համեմատած շատ բան չի փոխվել և երիտթուրքերի տիրապետությունը «շարունակությունն է, ճիշտ հարևնմանը նախկինի, իր դարավոր վշտերի, իր հոգու փլուզումների, իր ավեր ու կոտորածի»[2]։ Հոդվածագիրը գտնում է, որ հայը սխալվեց և այն էլ «պատմական անոթակելի սխալով սխալվեց սխալվեց հայ ֆիտային, երբ ոգևորության ազդեցության տակ կարողացավ ինքն իրեն համոզացնել, թե «Օսմանյան տիրապետության տակ, տիրապետությո՞ւն՝ տարված նեղ, ցած ու գծուծ շովինիզմով և իսլամական անհամբերատար աշխարհահայացքով, կարող է պաշտպանվել բազկացուցիչ ազգերի շահը՝ անտեսական, հոգևոր, մտավոր»[3]։

Անցած 6 տարիները ցույց տվին, որ երիտասարդ թուրքերը «պետությունը կազմող տարրերի մեջ իրար հոշոտելու, իրար ծվեն-ծվեն անելու սերմերը ցանեցին, նրանց կենսագրկելու ճիգ ու գործունեություն ունեցան։ Ատանան, Հավրանը, Սանասան՝ մեր առջևն են, «սահմանադրության» այդ ոդջակեղները»[4]։

---

1 «Հնչակ», № 1, մայիս, 1914, էջ 8—10։

2 Նույն տեղում.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

Հոդվածի հեղինակը գտնում է, որ այդ կոտորածները երիտթուրքերի ղեկավարների՝ Էնվերի, Թալեաթի և այլոց գործերն են, քանի որ սահմանադրական Ալի Քեմալը ասում է. «Իսլամ Թուրքը դաղափարական միացումի գործիքն է, նա կտրորե կամքերը, վերջ կդնե ազդություններին, նրանց կշաղախե և կդնե հավասարության մակարդակի վրա»[1]։

Հանդես գալով ընդունված սահմանադրության դեմ՝ Փարամաղը գտնում է, որ այն Թուրքիայում պայմաններ չբստեղծեց, որպեսզի այնտեղ ապրող ազգաբնակչությունը հնարավորություն ունենա «իր պատվի, իր մալ ու մյուլքի տերը դառնալու, իր հանդի մեջ ու ծածկի տակ ապահովություն տեսնելու, իր հոգեկան վայելքները ճաշակելու»[2]։ Նա համոզված է, որ Հայաստանում կատարվելիք բարենորոգումների մասին ասվածը դավեշտ է, քանի որ «օրենքը խլում է հայի հողը, հայի աղջիկը, հայ ազգության ստորոգելիները՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, այն էլ այսօր, այո՛, հենց այսօր, երբ արտաքին ճնշումների տակ ստիպված ստորագրում է հայի բարենորոգումները»։ Հայը Օսմանյան հեղափոխությունից ոչինչ չստացավ և «Հայկական հարցը մնում է հարց, քանի որ նա՝ հայը, դուրս չեկավ «ռայայի» ամոթապարտ կացությունից»[3]։

Հոդվածի երկրորդ մասը կոչվում է «Հայը մեռնում է կաթիլ-կաթիլ», սակայն ի՞նչ անել, որ նա չմեռնի։ Եվ Փարամաղը առաջարկում է. «Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու և անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայը ապրի», և եթե նրա վրա հարձակվեն սպանելու համար, ապա նա պետք է անցնի ինքնապաշտպանության, քանի որ «ինքնապաշտպանության խնդիր կա դրված մեր առջև՝ մեր լինել-չլինելու խնդիրը»[4]։

---

1 Նույն տեղում։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։

Վանից Փարամազը մեկնեց Կոստանդին, ապա Կոստանդնուպոլիս, որտեղ Երանուհի Դանիելյանի հետ միասին սկսեցին նախապատրաստել երիտթուրքերից ոմանց ահաբեկումը, սակայն մատնվեցին և 1914 թ. հունիսի 16-ին Փարամազին և նրա հետ շատ հնչակյանների բանտ տարան։

Կոստանդնուպոլսում Փարամազի անցկացրած կյանքի մասին ժամանակակիցներից մեկը՝ Այծեմիկը, գրում է. «Փարամազ... կսիրեր ան ժամերով նստիլ ուսանողներուն մեջ, զանոնք զբաղեցնել իր սրամիտ հարցումներով, իր խոսակցություններով, որոնց ամեն մեկը մեյմեկ դասախոսություն էին մեր մատաղ և սորվելու ծարավի հոգիներուն համար, մանիկ կընեինք ժամերով և չէինք հոգնար»[1]։

Սկսած 1910 թվականից Փարամազը «Արևելք» լրագրի մեջ «Հայր Սիվա» կնքանունով մի շարք հոդվածներ տպեց։ Հոդվածներ էր տպագրում նաև Փ. Ա. Զ. ստորագրությամբ։ Զ. Նեմցին՝ Փարամազի այդ թվականին անցկացրած կյանքի ականատեսը, այդ մասին գրում է. «Փարամազ նյութական շատ նեղ դրության մեջ կգտնվեր։ Իր թշվառ կյանքը բացատրելու համար կկարդայիր հոդված գիմադծերուն վրա, ուր իրենց անջինջ դրոշմը դրած էին հեղափոխության փոթորկալից կյանքի իրադարձությունները»[2]։ Եվ ապա շարունակում է. «Իր բնակած խցիկը, մութ և խոնավ ճեմիշի մը քով կգտնվեր։ Զուրկ օդե և լույսե, բավարար սնունդ ալ չէր ստանար։ Հաճախ տաք կերակուր մը ուտելու և նույնիսկ քաղցը թեթևորելու բախտավորություն չէր ունենար։ Օր մը բարեկամներին մեկը ճաշի էր հրավիրած Փարամազը։ Արիաբար մերժեց այդ հրավերը, սա գերազանց պատճառով, որ չէր ուզեր իր ստամաքը վարժեցնել այդպիսի կերուխումներու, որոնցմե զրկված էր ամեն օր»[3]։

---

1 Քսան կախաղաններ, էջ 9։
2 Նույն տեղում, էջ 42։
3 Նույն տեղում, էջ 94—95։

1913 թ. Փարամազը Եգիպտոսում էր Սապահ-Գյուլյանի հետ։ Նրանց ջանքերով աշխուժացավ քաղաքական կյանքը «ժողովրդական լայն խավերուն և մանավանդ աշխատավոր ու երիտասարդական շրջանակներուն մեջ»[1]։

1914 թ. հուլիսի 16-ին Կոստանդնուպոլսում սկսվեցին Հնչակյանների բանտարկությունները։ Ձերբակալվածների թիվը հասնում էր 120 հոգու։ Նրանց մեջ էին Փարամազը, Մուրատը, Լազոն, Արծրունին, Ճահանկյուլյանը, Վահան Չեյթունցյանը, դոկտ. Պեննեն, Ռ. Կարապետյանը և շատ ուրիշներ։ Խուզարկությունների ժամանակ Փարամազի և Ռ. Կարապետյանի մոտ գտնվեցին «Գրպանի հուշատետրերը, որոնց մեջ՝ Պոլիս և գավառները բնակվող բազմաթիվ անձանց ու հասցեները...»[2]։ Գտնվեցին նաև մեծ քանակությամբ շրջաբերականներ, նամակներ, Կոստանցայի ժողովի որոշումները, հին ծրագրեր, որոշումներ։ Հնչակյանների ձերբակալելու հետ միասին փակվեց նրանց «Կայծ» թերթը։ Ժամանակակիցներից Մ. Պաղտասարյանը այդ օրերի մասին հետագայում գրում է. «Փարամազ ձերբակալվեր է տունեն դուրս ելած ատեն, Սաքոն՝ ճաշարանին դռան առջև։ Տոքթոր Պեննեին տունը խուզարկեր և կարգ մը թուղթեր գտեր ու տարեր են»[3]։

Ձերբակալվածները մեղադրվում էին, որ կապված են Փարիզում գտնվող Շերիֆ փաշայի հետ, որը թողել էր Թուրքիան և դեմ էր երիտթուրքերի վարած քաղաքականությանը, որ նպատակ ունեին տապալելու թուրքական կառավարությունը և ստեղծելու ազատ, անկախ Հայաստան։ Շատ չանցած բանտարկվածներից ոմանք ազատվեցին «ազդեցիկ միջնորդությանց, կաշառքի շնորհիվ»[4], մնացածները կանգնեցին թուրքական դատարանի առջև։

---

1 «Արարատ» (Բեյրութ), 28 հուլիս, 1960։

2 Հ. Ադամյան, նշվ. գիրքը, մասն առաջին, էջ 61։

3 «Երիտասարդ Հայաստան», 12 օգոստոսի, 1960։

4 Հ. Ադամյան, էջ 61։

«Մշակում» 1914 թ. օգոստոսին տպագրված մի հաղորդման համաձայն, քննությունները անձամբ վարում էին Թուրքիայի ներքին գործոց նախարար Թալեաթ փաշան և Կոստանդնուպոլսի ոստիկանության պետ Բեդրի բեյը[1]: Պատերազմական ատյանին էր հրավիրված նաև Նուբար փաշան, որը չներկայացավ, սակայն դատարանի դատավճռով հեռակա կարգով դատապարտվեց մահապատժի: Մահվան դատապարտվեց նաև Հրանտ Աղաճանյանը, որը նույնպես ներկա չէր դատին: Այդ կարգով պատժից ազատ մնացին նաև Վարազդատն ու Սապահ-Գյուլյանը: Դատապարտվածների նամակներն ու նրանցից բռնագրավված թղթերի թարգմանն էր մատնիչ Արթուր Նազարյանը, որը թարգմանությունները կատարելիս խեղաթյուրումներ էր կատարում թ վնաս բանտարկվածների: Երբ սկսվեց դատը, դատարանի ոչն կանոնադրների բողոքների համաձայն ատյանը ստիպված եղավ այդ թղթերի թարգմանությունը հանձնարարել մի ուրիշի:

Փարամազը և իր ընկերները մեղադրվում էին նաև այն բանում, որ նրանք ցանկացել են տեռորի միջոցով վերացնել երիտթուրքերի ղեկավարներից ոմանց: Այդ նպատակով տեռորիստներ էին ժամանել Կոստանդնուպոլիս «Եգիպտոսից և Կովկասից, իսկ Փարամազն էլ եկած է եղել գործը ղեկավարելու»[2]:

Պատերազմական ատյանի վճռի մեջ նշվում էր նաև, որ դատապարտվածների այդ խումբը պայքարել է «անկախ և ինքնուրույն Հայաստան մը կազմելու համար, ոճրագործներ սարքած են և օտարները կայսերական կառավարության դեմ գրգռելու նպատակով ձեռնարկած են կայսերական երկրներուն մեկ մասը Օսմանյան պետությունեն ազատելու և այս նպատակով օտար երկրներու զանազան տեղեր դաղտնի և հայտնի համաժողովներ դումարած և հրատարակու-

---

1 «Մշակ», 1 օգոստոսի, 1914։

2 «Հայրենիք» (Բոստոն), № 12 (287), դեկտեմբեր, 1949։

թյուններ, դրագրություններ ու թղթակցություններ ըրած են»[1]։

Ռուսաստանի դեմ պատերազմական գործողություններ սկսելուց հետո երիտթուրքերի ձեռքերը ազատ արձակվեցին, և նրանք դատավարությունը տարան այնպես, ինչպես ցանկանում էին։ Երկրում սկսվեց հակառուսական և հակահայկական պրոպագանդան։ Կոստանդնուպոլսի թուրքական թատրոնի բեմի վրա երևացին բանաստեղծ, դրամատուրգ Ակա Գոյունդուզայի մի քանի պիեսները. «Ճանապարհը դեպի Կովկաս» («Կոկազիա յոլ»), «Արժանահարգ մարդասպանը» («Մուխտարեմ կատիլ»), «Կիսաթուրք» («Յարըմ թուրք»)։ Այս և բազմաթիվ այլ միջոցառումներ նպատակ ունեին դրդռելու «ամբոխի ատելությունը դեպի Ռուսաստանը»[2]։

Բանտում եղած ժամանակ ընկերներից մեկը Փարամազին հարցնում է, թե ո՞ւմ են ուղղված երիտթուրքերի հայածանքները՝ միայն հնչակյանների՞, թե՝ ամբողջ հայ ժողովրդի։ Նա պատասխանում է. «Իթթիհադի ոխերիմ քաղաքականությունը նախ մեզմով պիտի սկսի, քանզի անոնց գործակիցները բնաջնջելով բողոքեցինք և չդաշնակցեցանք։ Բանտերը, աքսորները, կախաղանները ասկե վերջ պիտի հրճվին...

— Հայը իր գողգոթան պիտի բարձրանա, արյան ու սուրի շարաղուշակ հոտեր կուգան...»[3]։

Բանտում գտնվող բանտարկյալների կեղտոտ շորերը լվանում էին երկու հայ քույրեր։ Հարմար առիթից օգտվելով, ընկերներից անջատ գտնվող Փարամազը նրանցից մեկին դիմեց. «Երանուհի՛, աղջի՛կս,— կըսե Փարամազը,— իմ այս թաշկինակս առանց լվանալու տար և հանձնե Հայոց Պատրիարքին»։ Անվախ ու կրակոտ հայրենասերը գիտեր, որ շուտով զրկվելու է կյանքից, սակայն պատրիարքին իր թաշ-

---

1 Նույն տեղում։

2 «Մշակ», 19 հոկտեմբերի, 1914։

3 «Արձագանք Փարիզի», թիվ 21, 10 փետրվար, 1917։

գինակի վրա գրել էր. «Սթափեցեք։ Դիմեցեք ինքնապաշտպանության։ Ջարդը ման է դալիս հայերի գլխին...»[1]։

Թուրքական դատարանի առջև կանգնած Փարամազը, որը դատվում էր որպես Ռուսաստանի հպատակ կովկասցի Սարգսյան Մատթեոս կամ ոոդոսթոցի Համբարձում Գրիգորյան, առանց վախի հայտարարեց. «Թալեաթն է, որ գուրսեն կղեկավարե այս ատյանը»[2]։ Ամիսներ տևող դատական պրոցեսից հետո Պոլսո պատերազմական ատյանը 20 հոգու մահվան դատապարտեց օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն։ Շատ չանցած սուլթանը վավերացրեց վճիռը, որից հետո թուրքական կառավարությունը 1915 թ. հունիսի 2-ին, երբ ամբողջ երկրով մեկ արդեն սկսվել էր հայ ժողովրդի չարդը, նրանց կախաղան բարձրացրեց։ Կառավարությունը նրանց կախաղանի սյուները պատրաստել էր տվել հայերի, որոնք չգիտեին իսկ, թե ո՞ւմ համար են պատրաստում այն։ Քսան նահատակների գործի քննության ժամանակ թարգմանիչներ էին կեսարացի Հովհաննես Եղիազարյանը և Հրանտ Եկավյանը, որոնք լիուլի տիրապետում էին հայերենին և թուրքերենին։

Դատավարության ժամանակ Գառնիկ Պոյաճյանն իրեն պահել է հեղափոխականին ոչ վայել։ Փարամազը նրան անվանում է մի մարդ, որը «տղու մը պես կուլա», ապա ասում է. «Ա՞յս ալ հեղափոխական է, ա՞յս ալ դավադիր ձեռնարկներու մեջ պիտի կասկածվի։ Իրավունք ունի խնդրելու, որ ազատ արձակեք զինքը, երթա իր գուրու զահվեճիությունն ընե։ Անոր պատիժը բարդեցեք ինձ տրվելիք պատժին վրա։ Եթե ես պիտի կախվիմ, կախեցեք երկու անգամ, բայց այս լալկան մարդուն ահագին հասակը թող մեղկորեն չտապլտկի տակավին կառափնային բարձրությունը չչափած... Չեմ կարծեր, թե այս բարձրագույն ատյանը իրեն պատիվ տեսի Փարամազներու, Պեննեներու, Ռուբեններու քով թմամել այս փալասը»[3]։

---

1 «Երիտասարդ Հայաստան», 16 հունիսի, թիվ 14, 1959։

2 Սիրվարդ, նշվ. աշխ., էջ 99։

3 Հ. Արամյան, նշվ. աշխ., 3-րդ մաս, 1936։

Դատավարության վերջին նիստին Փարամազը նախագահողին հպարտ ասաց. «Դուք քաջալերեցիք ոճիրն ու հալածատարությունը և լռեցնել ջանացիք բազմի մեջ մի արատահայտություն։ Դուք մեր կենսական հյութով ապրեցաք դարեր շարունակ և երբեք չուզեցիք, որ այդ հյութի աղբյուրը իրավունք ունենա կանգուն մնալու և արտադրելու։ Դուք ճնշեցիք մեզ. կամազուրկ ռայեա էինք ու ողբալի համբերատարությամբ կհանդուրժեինք ամեն ատրացում։ Դուք տարեկեցիք մեզ, երբ օր մը ուզեցինք թեթևամաշ գոյության մը տարրերը խնդրել մեր իշխանավորներեն... Դուք մեզ չարդել սկսաք, երբ օրին մեկը վճռեցինք մեր արժանապատվության համապատասխան դիրքի վրա բարձրանալ։ Դուք մեզ օրենքի պաշտպանութենեն դուրս ձգեցիք, երբ միթհատյան պոչատ սահմանադրության իրավունքներեն օգտվիլ ուզեցինք»[1]։

Թուրքական դատարանի վճռից հետո Փարամազը հայտարարում է, որ ինքը և իր ընկերները «կձգտեին բարձրացնել և՛ Թուրք գյուղացիությանը, և՛ Թուրք աշխատավորությանը, որոնց կյանքին բոլոր օրերը կանցնին բանտային տանջալից վիճակով»։ Ապա շարունակում է. «Վճռապես կմխիթարեմ, թե մենք անիշխանականներ ենք, թե մենք սոցիալիստներ չենք։ Կմխիթարեմ, թե Հնչակյան կուսակցությունը ռճրագործների կուսակցություն է։ Կմխիթարեմ այն խոսքը, թե Փարամազ ավազակապետ է և մարդասպան»։ Եվ քանի որ Թալեաթը գտնում է, որ Փարամազը նպատակադրվել էր սպանել իրեն, խնդրում է ազատել մնացածներին, «որոնք ամիսներով կշարչարվին բանտի մութ ու խոնավ նկուղներուն մեջ Փարամազի պատճառով։ Ես պատրաստ եմ կախվիլ բան անգամ»[2]։

Քան նահատակ հերոսների մարմիններեն ամփոփվեցին Շիշլիի գերեզմանոցում, եղբայրական գերեզմանում, և վրան մի քար դրվեց։

---

1 Հ. Ասատյան, նշվ. աշխ., 3-րդ մաս, էջ 40։

2 «Արարատ» (Բեյրութ), 22 հունիս, 1955։

Դատավճիռը ի կատար է ածվել 1915 թ. հունիսի 2(15)-ին, առավոտյան, արևածագից առաջ, Կոստանդնուպոլսի սուլթան Բայազիտի հրապարակում: Կախվելուց առաջ Փարամազը առանց վախենալու հայտարարել է. «Դուք մեր մարմինը միայն կրնաք սպանել, բայց մեր գաղափարը՝ սոցիալիզմը՝ ոչ: Վաղը ան պիտի երևի Արևելքի հորիզոնի վրա: Հայությունը պիտի ողջունե իմաստավոր սոցիալիստական Հայաստանը»[1]:

Քանանեանի դատավճիռն ի կատար ածելու պահին միակ վկան քահանա Գալուստ Պողոսյանն էր: Քահանան վկայել է, որ նրանց մեծ մասը «անվեհեր կերպով կդիմագրավեին մահվան և կարհամարհեին զայն»[2]: Այնուհետև, ըստ նրա վկայության, կախվելուց առաջ բոլորը միաբերան գոռացին. «Կեցցե Հայաստան, կեցցե Հայաստան»[3]: Մահվան դատավճիռը կարդալուց հետո Փարամազը «դարձավ իր ընկերներուն և քաջալերական խոսքեր ըսավ անոնց, հակառակ անոր, որ արգելք ըլլալ կուզեին, իսկ տոքթ. Պեննն (Պետրոս Թորոսյան—Հ. Պ.) կպոռար. «Մեզ, քանա կկախեք, բայց քան հաղարներ պիտի հետևին մեզի»[4]:

Այնուհետև քահանան պատմում է. «Երբ ոստիկանատնեն դուրս ելա, խելակորույս էի: Տեսածներս, քնատ վիճակս այն տեսակ վերի-վայր ըրած էին հոգիս, որ մարդկութենե դուրս բան մը եղած էի: Քայլերս անգիտակցաբար ուղղեցի գեպի տուն:

Տան հասնելուն կիսամեռ ինկա և, առանց կարենալ պատասխանելու ինձի եղած հարցումներուն, սկսա ջղային լացով մը հեկեկալ: Քիչ մը հանդարտելե հետո պատմեցի եղելությունը և գնացի մայր եկեղեցի, ուր թաղական խորհրդի մեկ քանի անդամները և քահանա եղբայրներս ինձի

---

1 Փարամազ (1863—1915), Պեյրութ, 1968, էջ 4:

2 «Հայրդանը սոցիալ-դեմոկրատ հնչակյան քան անմահներուն», Պեյրութ, 1957, էջ 22:

3 Նույն տեղում, էջ 23:

4 Նույն տեղում:

կոպտաբին։ Սարսափելի կրկնել պատմությունս, զոր հուզումով լսեցին։

Զարմեն պատրիարքը, լսած բլլալով ինծի պատահածը, լուր ղրկած էր։ Գացի և դեպքը պատմեցի իր բոլոր մանրամասնություններով, մինչ սրբազանը արտասվելով մտիկ կրներ ասածներուս և սիրտը կարյուններ»[1]։

1961 թ., երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գտնվում էր Ամերիկայում, մի առիթով հայտնեց, որ Կոստանդնուպոլսից ստացած մի արխիվի մեջ կար մի խաչ և մի գրություն. «Այս խաչը, հայ քահանա մը ջուրին մեջ թաթխելով, ջուրի կաթիլներով կհաղորդե Ս. Դ. Հնչակյան 20 հերոսները, որոնք 1915-ին կախաղան բարձրացան Կ. Պոլսո Սուլթան-Պայազիտի հրապարակին վրա»[2]։ Խաչը պատկանում էր Գարեգին Պոլոսյանին և այժմ գտնվում է Էջմիածնի թանգարանում։

Փարամազի և նրա 20 ընկերների մասին գրվեցին շատ բանաստեղծություններ, սակայն նրանցից ամենայավերից մեկը պատկանում է Վահան Թեքեյանի գրչին.

«...Բայց և ինչպես, ամենքդ ալ վերջին պահուն
ձեր դիմաց
Երազային, շատ պայծառ, ուրիշ արև մը տեսաք.
Ու ճոճեցաք օդին մեջ՝ զայն խմելն վերջ ցհագ...»[3]։

Չնայած Փարամազը ժամանակ քիչ է ունեցել, սակայն զբաղվել է նաև գրական աշխատանքով։ Նրա գրչի տակից դուրս են եկել բազմաթիվ հոդվածներ և մեկ հատած երեք պիեսներ։ 1913 թ. «Վան Տոսպի» երկու համարներում տպագրվեց Փարամազի «Տառերի գյուտի աղդակները (համառոտ տեսակ)» հոդվածը՝ նվիրված հայ գրերի գյուտի 1500-ամյակին։ Սկզբնամասում նա հայերի անմիաբանության պատճառը համարում է Հայաստանի աշխարհագրա-

---

1 Նույն տեղում, էջ 24։
2 «Արարատ», 17 հունիսի, 1962։
3 «Երիտասարդ Հայաստան», 14 հունիսի, 1963։

կան միջավայրը և գտնում է, որ լեռներն ու կիրճերը իրարից բաժանել էին ազգը դեռևս շատ հին ժամանակներից։ Ըստ Փարամազի, քրիստոնեության մուտքից հետո, քանի որ տեղում քիչ էին քրիստոնեական ուսմունքի քարոզիչները, Գ. Լուսավորիչը ստիպված մեծ թվով ասորի հոգևորականներ հրավիրեց Հայաստան։ Նրանք սկզբում շատ ազդեցիկ էին և նույնիսկ մի քանի կաթողիկոսներ տվեցին, սակայն հայերը ստեղծեցին անկախ եկեղեցի և չնայած դրան «եկեղեցու ազգայնացումը շեր կատարված, որովհետև մայրենի լեզուն հիմք շեր դարձել մյուս բոլոր ուսմունքների համար։ Իսկ մայրենի լեզվի արտահայտիչ ասորերը չկային, եթե կային էլ, նրանք նշանագրեր էին, անընդունակ լրիվ արտահայտելու նոր կյանքի նոր պայմանները»[1]։

Ապա Փարամազը ավելացնում է, որ «ասորի հոգևորականները հայերից շատ բան խլեցին, սակայն և շատ բան տվեցին», այն է՝ «Վռամշապուհին և Մեսրոպին հասկացրին, թե ձեր փրկությունը պետության և կրոնի ֆունկցիաները, պարտականները ազգայնացնելու մեջ է միայն»[2] և դրանից հետո հայերն ունեցան իրենց գիրը։ Ինչ խոսք, այս երկու քաղվածքների մեջ կան հարցեր, որոնց հետ լրիվ չի կարելի համաձայնվել, սակայն հենց այն հանգամանքը, որ Փարամազը զբաղվում էր նաև այսպիսի հարցերով, ավելի է բարձրացնում նրան հետագա սերունդների աչքում։ Այս հոդվածի կապակցությամբ Փարամազը «Վան Տոսպի» խմբագրությանն ուղղված իր նամակում գրել է. «Ես՝ որպես սոցիալ-դեմոկրատ, ուրախանում եմ, երբ ազգս, որպես մի մարմին, տոնում է իր տոներից մեծ տոնը, հայ տառերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյա հոբելյանը, հայ կյանքի պտնծալի էջը։ Կենսունակ ազգը միայն կարող է ունենալ Մեծ տոն»[3]։

---

1 «Վան Տոսպ», թիվ 38, 12 հոկտեմբերի, 1913։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։

Փարամազի պիեսներից երեքը տպագրվել են նրա մահապատժից մի քանի տարի անց, Ամերիկայում։ Պիեսներից մեկն է «Պաքոն», որի մեջ նկարագրում է արևելյան բռնակալ Սելիմի կյանքը, որը իրեն էր ենթարկել ամբողջ երկիրը և այն համարում էր իր սեփականությունը՝ տրված աստծո կողմից։ Պիեսի հերոսներից մեկը Պաքոն է, որի բոլոր զգացումները այդ բռնակալական երկրում վիրավորել են, սակայն նա համակերպվում է ստեղծված վիճակի հետ, դերադասում է ենթարկվել բռնակալին, ապրել ստրկության մեջ և ոչ մի փորձ չի անում տիրող լուծը թոթափելու համար։ Սելիմը նստած է շքեղ արքայական պալատում, թանկագին գահի վրա։ Աստծո ողորմությամբ նրան տրված են ծովեր և ցամաքներ։ Բռնակալը պահանջում է անմիջապես «բոլոր հարկերը ղրկեն, և ո՛չ մեկ հետնյալ տուրք թողուն, ամենը գանձեն։ Քանի մը միլիոն ոսկու կարիք ունիմ,—ասում է նա,—պալատներս վերաշինեմ պիտի, կանանոցս պիտի զարդարեմ»[1]։ Սակայն երբ անգութ գահակալին եպարքոս Մուրատը երկչոտությամբ ասում է, որ հարկերը դժվար է հավաքել, քանի որ գավառներում սով կա, Սելիմը լսել չի ցանկանում. «Դժոխքեն ալ ըլլա՝ ինձ քանի մը միլիոն ոսկի պիտի հասցնես»[2]։ Դրանից հետո իրար հետևից ահեղ բռնակալի մոտ են մտնում մի քանի վալիներ, նրան հանձնում ոսկուվ լի քսակներն ու թանկարժեք նվերները և զեկուցում, որ նրան ենթակա ժողովուրդը «գոհ, երջանիկ և ուրախ է»։ Ստանալով նվերներն ու ոսկին՝ հղփացած ու շփացած գահակալը ցինիկաբար հայտարարում է. «Խաղաղությունը ժողովուրդներու մահն է, լացն է անոր կենսունակությունը։ Թող լա որքան կամենա»։ Ժողովուրդը, ըստ նրա, նմանվում է աքացի տվող ձիուն, որին «որքան պարարտացնես, ընդհակառակը, աքացելը կսաստկացնե. սանձն ու մտրակը միայն կրնան անոր հոռի բնավորությունը մեղմել»[3]։

---

1 «Պաքոն», Շիքակո, 1919, էջ 12։
2 Նույն տեղում, էջ 13։
3 Նույն տեղում, էջ 15—16։

ՊԱՓՕ

ԳՐԵՑ

ՓԱՐԱՄԱԶ

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի
1919

Պաքոն աղքատ է, նրա տգեղատիպ խրճիթի մի խարիսի վրա պառկած են մերկ ու բորիկ երեխաները: Պաքոն և նրա կինը կարկատած ու հնացած հագուստներով են: Նրա կինը՝ Լուսան, ճախարակ մանելով երգում է Ղ. Աղայանի «Մանիր, մանիր իմ ճախարակ» երգը: Երեխաները սոված են, հայց են ուզում, օրորոցի մանուկը կաթ է ուզում, և քանի որ մայրը սոված է, կաթ չկա: Քրդական գինված ուժերը տարել են Պաքոյի անասունները. «Վաշխառուն կալիս հողն էլ ավելց: Մուլթեզիմը դատարկ տունս էլ սան ըրավ»[1]: Պաքոյի երեխաները սովածությունից հայցի փոխարեն կաշի են ծամում: Այդ պահին հայտնվում է մի ոգի և, հանդիմանելով Պաքոյին ու նրա ընտանիքի անդամներին, ասում է. «Կրեցեք վիշտը, ըմպեցեք դառնության բաժակը: Այդ է թույլերի բաժինը»[2]: Պաքոն ստիպված շուկա է տանում վաճառելու տան վերջին աքլորը՝ ինքն իրեն խոսելով. «Գիշեր-ցերեկ շան պես չարչարվեմ, այս է քո հալը: Թո՛ւ քո նամուսին»[3]: Հենց այդ պահին նրան է մոտենում ոգին և ասում. «Խմիր դառնության բաժակը: Դուն պիտի մեռնիս, որ դուն ապրիս, այս է բնության անշեջ օրենքը»[4]: Այսպիսով, Փարամազը այդ պիեսում ոգու բերանով կոչ է անում ելնել բռնության դեմ, և եթե հարկն է՝ մեռնել այդ կռվում, որպեսզի մյուսները ապրեն: Բայց նրա, համբերելով, Սելիմից ժողովուրդը ոչ մի բան չի ստանա:

Երրորդ տեսարանում նկարագրված է շուկան, որտեղ դանակոտ ապրանքներ են վաճառվում: Պաքոն աքլորը վաճառում է երկու ղուրուշով: Վաճառքից անմիջապես հետո նրան է մոտենում թուրքական աստիճանավոր Հաֆեզը և վաճառած աքլորի համար 20 փարա պահանջում՝ ասելով, որ այդ հարկը սահմանված է թագավորի կողմից: Դրանից հետո արդեն երրորդ անգամ հայտնված ոգին Պաքոյին և

---

1 Նույն տեղում, էջ 15—16:
2 Նույն տեղում, էջ 24:
3 Նույն տեղում, էջ 25:
4 Նույն տեղում:

նրա նմաններին ասում է. «Եվ զուլումը պալատներու մեջ և դահի բարձունքին կկղած՝ կցնկնե շիվանն ու վիշտը։

Եվ վշտի կաղ կարավանը, մահվան թույնը բեռնավորված՝ կրաղխե խրճիթներու դռները և իր օթևանը հոն կընե։

Եվ մահվան թույնը կլափե խրճիթը։ Եվ այդ մահվան մեջ է միայն երկիրը անդորր։

Անդորրությունը կատարյալ է։

Այնտեղ է բոլոր նյութական ու կենսական բովանդակությունը։ Զուլո՞ւմ, վի՞շտ, մահ...

Խմե դառնության մրուրը, նիրհած, մրափա՛ծ ժողովուրդ, խմե։ Դուն պիտի մեռնիս, որ դուն ապրիս»[1]։ Ամփոփելով ասենք, որ կրակոտ Փարամազը շատ լավ էր ուսումնասիրել թուրքական բռնակալական սիստեմը, հատկապես երիտթուրքերին և իր ժողովրդին պայքարի էր կոչում բռնակալության դեմ և զոհեր տալու միջոցով էր գտնում իր ժողովրդի հարատևելու և ապրելու ուղին։

Մյուս թատերգությունը կոչվում է «Քամու բերածը քամին կտանե»։ Այս պիեսը նա հավանաբար գրել է Տիգրանակերտում «Արեգյան վարժարանի» տնօրեն տիկին Արեգի սաների դպրոցական հանդեսի համար, և առաջին անգամ բեմադրվել է այնտեղ։ Պիեսում հանդես են գալիս ուսումնասերը, տգետը և վաշխառուն։ Վերջինիս կերպարի միջոցով հեղինակը բացահայտել է հարուստներից մեկի փչացած հոգեբանությունը և ժողովուրդի ունեցվածքը քամելու, նրա հաշվին ուռճանալու ձգտումները։ Պիեսը պահվել է Հ. Տապաղյանի մոտ և հետագայում հրատարակվել։

Թատերգության մեջ հարուստ Մարտիկ աղան ունի մի աղջիկ և մի տղա, որոնք երկուսն էլ լուսավորյալ գաղափարներ ունեն և զբաղված են ազգի երեխաներին կրթելու գործով։ Մարտիկ աղան, ընդհակառակը, ծաղրում է ժողովրդին լուսավորողներին և չի հավատում, որ կաթելի է ժողովրդին կրթել. «Ճահճին մեջ ո՞վ կրնա ձուկ որսալ։ Դեռ

---

1 «Գաթա», էջ 31։

ԹԻՎ 21 - Ի Դ ՀՆԳ ԿՈՒՍ ԱՄԵՐ ՇԲՋ ԿԵՐԻ Վ. - ԱԱՐՄԻՆ

ՔԱՄՈՒ ԲԵՐԱԾԸ

ՔԱՄԻՆ ԿԸ ՏԱՆԷ

ԵՐԳԱԽԱՌՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

Գրեց՝ ՓԱՐԱՄԱԶ

Նրեգի «ԱՐԵՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ» դպրոցական
հանդէսին համար
1912 թ Ապրիլ. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ

ՏՊԱՐԱՆ
«ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի
1919

այս ժողովուրդը գոլեհ-մոլեհ չի կրնար հասկնալ»[1]։ Իր ազգի՝ Տիգրանի և աղջկա՝ Արուսյակի ջանքերը նա արհամարհում է, սակայն նրանք ամեն գնով ցանկանում են իրենց բաղաքում գոլեհ բացել։ Տիգրանի բերանով պիեսի հեղինակը ասում է. «Մտավոր ուժը, կրթությունը լոկ զենք է կյանքը տնտեսելու, իր կյանքի բաժինը շահեկան դարձնելու։ Վայ այն ծնողքներուն, որոնք այդ զենքը չեն տար իրենց զավակներուն, որով կդարձնեն զանոնք կյանքի թշվառ և ժլբախտ բեռնակիրները»[2]։

Ըստ Տիգրանի, կյանքի վատ պայմանները հնարավոր է լավացնել միայն ժողովրդին կրթելու միջոցով և պետք է լավ դպրոցներ ունենալ։ Նույն առաջավոր հայացքներն ուներ նաև Թումանյան ազգի կինը. «Մեր ժողովուրդը, մեր ազգը, եթե կուզե ապրիլ, հրճվիլ՝ ոչ թե լալկան կնոջ նման լալ, պետք ունի լավ, նորատիպ և կյանքի գոյության համար կռվի զենքերու. իսկ այդ դարբնոցը, ուր այդ զենքերը պիտի կռվին, կոփվին, միայն ու միայն լավ, կանոնավոր, օրինակելի դպրոցն է։ Երկրի վրա եղած դարմանը երկնքի մեջ փնտրելը փիլիսոփայական չէ և ոչ էլ օրինաղանցական»[3]։

Պահպանողական հայացքներ ունեցող Մարտիկ ազան սակայն գտնում էր, որ եղած դպրոցներն էլ բավական են «մեզ նման մեկ անտեր ազգի» համար, որոնց նպատակը պետք է լինի ազգի համար տիրացուներ պատրաստելը։ Նրա դուստր Արուսյակը հակառակ հորը գտնում է, որ հայրը սխալ է և «գիտությունը ազգի պահպան զենքն է»[4]։ Այնուհետև գտնում է, որ «որպեսզի մարդկության, ընտանիք կամ նրա անդամները, այն է՝ ազգերը ապրին, պետք է ունենան այն ամեն զենքերը, որ կը կոչվին վարք ու բարք, ինքնատիպություն, նկարագիր, բարեխառնություն, այսինքն՝ մեծ կամքը պահպանելու իր ինքնուրույնությունը, իր ազգությու-

---

1 Քամու բերածը քամին կտանի, երգախառն թատերագրություն երեք արարվածով, գրեց Փարամազ

2 Նույն տեղում, էջ 14։

3 Նույն տեղում, էջ 14—15։

4 Նույն տեղում, էջ 15։

նը, իր ազգի պատմաանհատական գոյությունը։ Այս զենքերը չունեցող ազգերը մեռան, որովհետև նրանք կմտածեին տիրացուի նման»[1]։ Ապա շարունակում է. «Հայ ազգը չմեռնելու համար՝ կարիք ունի մեծ կամքի, իսկ այդ կարող է տալ անոր միայն ու միայն օրինավոր դպրոցը, որը մեզ կպակսի։ Ամեն ազգի պարտականությունն է ապրիլ. ուրեմն բարձրացուցեք դպրոցը, որ մենք կարողանանք ապրիլ»[2]։

Պիկսում շատ հետաքրքրական է վաշխառու Կարապետ աղայի և նրանից տոկոսով փող խնդրող երեք գյուղացիների խոսակցությունը։ Կարապետ աղան նրանց հանդիմանում է, թե իրեն գյուղացիները հիշում են միայն պարտք վերցնելու ժամանակ և երբ որ նրանք մի քիչ տնտեսապես լավ են դրում իրենց, «այլևս աղա-մաղա չեն ճանչնար»[3]։ Խեղճ գյուղացիները ստիպված սկսում են թվարկել, թե ինչքան գյուղատնտեսական և անասնապահական մթերքներ են բերել աղային։ Վերջապես աղան համաձայնվում է մի քանի ամսով հսկայական տոկոսներով փող տալ գյուղացիներին։ Կարապետ աղայից ետ չի մնում նրա կինը՝ Պայծառը, որը կանանցից շատերի զարդերը գրավ վերցնելով՝ նրանց տոկոսով դրամ է տալիս։ Պիեսի մեջ հնչում են Ավ. Իսահակյանի «Ախ մեր սիրտը լիքը դարդ ցավ», «Ալ այլուղս» ժողովրդական երգը և այլ երգեր։

Վերջին արարվածում աղբյուրի մոտ ջրի սպասող կանայք Տիգրանակերտի բարբառով պատմում են, թե ինչ ծանր վիճակի մեջ է ժողովուրդը։ Նրանցից մեկը ասում է. «Ի՞նչ ընենք քուրիկ. հալպաթ մեր ճակտին ալ այս է գրված, որ մենք դատենք՝ ուրիշը վայելե»[4]։ Նրանք բողոքում են, որ Կարապետ աղայի կինը՝ Պայծառը, նրանցից գումարներ է կորզել։ Շուտով աղբյուրի մոտ են գալիս աղայի մոտ եկած գյուղացիները և բողոքում են աղայից։ Սակայն աղայի և նրա կնոջ կուտակած փողերը նրա որդի Վարդանը

---

1 Նույն տեղում, էջ 16։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, էջ 20։

4 Նույն տեղում, էջ 38։

Հրտ. Ս. Դ. Հնչ. Ամբ. Շրջ. Գրծ. Յանձն. Թիւ 17

ՓԱՐԱՄԱԶ

ՉԵՌՔԵՐԸ ՎԵՐ

ԿԱՄ

ՃՈՒԼՈՒՊՐԻՍՏԵՐԸ

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ

ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԻՐԱՎԱՆ ՊԵԱՆԴԻՑ

ԴԷՊՔԸ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆԱԻՄ 1907 Թ. ԲԱԳԻՈՒՄ

ՀԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

1917

ՇԻՔԱԿՕ

և աղջիկը՝ Իսկուհին, ինչպես ցանկանում են, այնպես էլ մտքում են։ Վարդանի նպատակը հայրենիքը թողնել և Ամերիկա գնալն է։ Իմանալով այս մասին, թուրքական ոստիկանները կնքում են աղայի տունը, քանի որ նա հսկայական պարտքեր ունի։ Պիեսը վերջանում է հայկական ժողովրդական առածով. «Քամու բերածը քամին կտանե»։

Մյուս պիեսը կոչվում է «Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները»։ Երեք գործողությամբ այս թատերգության թեման վերաբերվում է Բաքվում 1904—1907 թվականներին տեղի ունեցած իրադարձություններին։ Այդ գործում կողք կողքի կանգնած են անիշխանականը, սոցիալ-դեմոկրատը և սոցիալ-հեղափոխականը։ Պիեսը առաջին անգամ բեմ է բարձրացել Տիգրանակերտում, ապա՝ Վանում, 1913 թ., երկու անգամ. մեկը հունվարի 9-ին, մյուսը՝ 12-ին[1]։ Պիեսում նկարագրված է հայկական մի հարուստ ընտանիք։ Դեռևս այն ժամանակ, երբ նոր լույս տեսավ այդ գործը, Ա. Վաղարշակը նրա մասին «Երիտասարդ Հայաստանում» գրեց մի գրախոսական՝ գնահատելով պիեսը և նշելով, որ հեղինակը բարձրացրել է «փիլիսոփայական խոր վերլուծումով՝ ընկերական աշխատավորական բարդ հարցը» և նրա մեջ ցրի երես է հանված «կապիտալի ու անգործի միջև մղված պայքարի ոգին»[2]։

Պիեսում վեր է հանվում մարդկանց գործակցության խնդիրը, հարուստների կուտակած մեծ միջոցների հարցը, նրանց ընտանիքների վարած դեմ կյանքը, հարստության հետ կյանք առած անբարոյականությունը։ Պիեսի գլխավոր հերոսը՝ Ավետիք Օսիպովը, կարևորում է միայն անձնականը, իսկ հասարակականը, ազգայինը նրա համար փուչ բաներ են. «Պահ, պահ, գահլա տարան էլի։ Եղբայր, իմ ինչի՞ս է պետք ճեմարանը։ Իմ ճեմարանը, այ, ռուսաց գիմնազիոնն է, ուր որդիս սովորում է. իմ ո՞վս է սովորելու ճե-

---

1 Փարամազ, Ձեռքերը վեր կամ ճուղուպրիստները, թատերգություն, երեք գործողությամբ, իրական կյանքից (դեպքը տեղի է ունենում 1907 թ. Բաքվում), 1917, էջ ԺԱ։

2 «Երիտասարդ Հայաստան», թիվ 45, 31 հոկտեմբերի, 1917։

մարանում։ Ես փող աշխատեմ խալխի լակոտների՞ համար։ Չի կարելի. կոպեկ չեմ տալ, որ աչքերը կոխեն։ Ջուր եք հանում էջմիածնա կալվածների համար, չհանդամը թե հանում էք. ես էլ նավթ եմ հանում իմ հորերից. տեսնեմ մեկը մի կոպեկ կտա՞ հորերս փորելու համար։ Ես այդպիսի բաներ չեմ հասկանում. ինձ էջմիածին պետք չէ...»[1]։

Ամփոփենք. սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցության անդամ Փարամազը նրա կարկառուն ներկայացուցիչներից է, որը իր ամբողջ կյանքը նվիրաբերեց ժողովրդի ազատագրության գործին, ապրեց շատ համեստ ու շարքաշ կյանքով և հպարտ գնաց դեպի կախաղան՝ միշտ կենդանի մնալով իր ազգի սրտում։

Ընթերցողին ներկայացվող այս փոքրիկ գիրքը բաղկացած է Փարամազի կյանքի և գործունեության մասին համառոտ շարադրված աշխատությունից, որի վերջում տեղադրված են Փարամազի ճառը 1898 թ. Վանի թուրքական դատարանում և «Հնչակ» թերթում 1914 թ. լույս տեսած նրա երկու հոդվածների տեքստերը։ Ինչպես ճառը, այնպես էլ պիեսները բոլորն էլ նրա մահից հետո 1917—1919 թթ. հրատարակվել են Ամերիկայում։

---

1 Նույն տեղում.

ՓԱՐԱՄԱՁ

ԻՄ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ 1898 ԹՎԻՆ

(Պաշտպանողական ճառ՝ ասված 1 օգոստոս, Վան քաղաքի քրեական դատարանում):

Պարոն նախագա՛հ: Մեր դատավարության ամբողջ ընթացքում դուք, կանխակալ կարծիքների վրա հիմնված, անվանեցիք ինձ և իմ ընկերներին «խռովարարներ», «սրիկաներ», «ավազակ-կողոպտիչներ», «ժողովրդի անպտղությունը վրդովողներ», ևն, ևն: Սրանով դուք եք ապացուցանելու ձեր կարծիքների անհիմն լինելը, որով և արձակվելիք վճիռների՝ թե՛ իրավաբանականի և թե՛ խղճի կողմից զուրկ լինելը: Միակողմանի չլինելու համար դուք, պարոն նախագահ, որպես արդարության պաշտպան պիտի լսեք ամենայն անդրդվությամբ և մեր պաշտպանողականը, որը մեր իրավունքն է արտահայտել, իսկ ձերը՝ լսել:—Մենք խռովարարներ, սրիկաներ չենք: Սրիկա լինել, խռովարար լինել ևն, ևն, նշանակում է շահագործել ժողովուրդը, խախտել այդ ժողովրդի մեջ գոյություն ունեցող Սահմանադրության էությունը, որ բոլոր օրենքների մայրն է, ազգաբնակության առաջադիմության շարժառիթը:

Լինել այդպես ու այդ տեսակ վարվել՝ բոլորովին հեռու է մեր խղճից, զգացմունքից ու պաշտոնից. այլ վարվեցողության այդ եղանակը սեփական է մի դասակարգի, որը իր գոյությունը պահպանելու համար ամեն տեսակ արգելքներ է դնում առաջադիմող ազգաբնակության ուրքերի առջև, որով և ծնեցնում այդ ազգաբնակության մեջ մեղ նման ժա-

մանակի ու պահանջների հարազատ զավակներ, նրա բողոքների անվեհեր արտահայտիչ-պաշտպաններ՝ Հեղափոխականներ։ Այո, մենք Հեղափոխականներ ենք, Հեղափոխականներ՝ ճանչցված քաղաքական աշխարհից, օրինական Հեղափոխականներ, որ և ունինք մեր ծագման մանրամասն պատմությունը՝ հաստատված նույն իսկ Օսմանյան կառավարությունից։ Ահավասիկ և փաստը.—Մինչև սրանից քսան տարի առաջ Օսմանյան կառավարությունը, լինելով կատարյալ տեր իր հպատակ ազգաբնակության, կատարում էր, հենց կատարում էլ է, այդ ազգաբնակության մեջ Սիվա աստծու դերը։ Բալկանյան ազգերի պատմությունը մեր աչքի առջևն է։ Այնտեղ, գուցե դուք ևս գիտեք, պարոն նախագահ, թե Օսմանյան կառավարության պաշտոնյաների խժդժությունները, վայրենի գործողությունները ի՞նչ քստմնելի տպավորություն էին գործում քիչ ու շատ ղգայուն սրտի վրա։

Այնտեղ՝ այդ խաղաղ ազգաբնակության մեջ, Օսմանյան կառավարությունը միայն մի սկզբունք ուներ.—որքան կարելի է ոչնչացնել մի ժողովուրդ, որ ղգում է, ապրում է առաջադիմող սկզբունքներով, որ ունի հուսալից ապագա, որ շատ ուշ իր բախտը բաժանելու է Օսմանյան հետադիմող, քաղաքակրթության անընդունակ բախտից։ Եվ սուրն ու հրացանը՝ կոպիտ ուժը, իր բացարձակ ասպարիզում նախճիրներ էր գործում. կոտորում էր մարդ արարածը, իսկ Օսմանյան կառավարությունը, սարսափը տիրապետելու միջոց համարելով, այդ կոտորված մարդ-արարածների գլուխներից բուրգեր, մինարեներ էր կառուցանում, իր քաջագործություններին արձան էր կերտում (բողոք դատախազի կողմից։ Հոսում էր արյունը ջրի փոխարեն և օրը կեսօրին վայրագ դիվորները կնոջ արգանդը պատռելով՝ հանում էին չկազմակերպված երեխան ու սվիններով վրա խաղացնում, հրճվում (բողոք դատախազից. դադրեցում։ Կոնսուլների սաֆիյամամբ շարունակում)։

Վերջապես Բալկանյանների լացն ու կոծի հառաչանքը, արյան գոլորշիներից կազմված ամպերի միջից անցնելով, ընդհարվեց Նախախնամության դահին, որտեղից անգրա-

դառնալով թափանցեց Ռուսաց Ազատարար Կայսրի՝ Աբեքսանդր Բ-ի սրտի մեջ։ Բալկանյան ազգերի ազատության գործը իր վրա առնելով, Ալեքսանդրը պատերազմ հրատարակեց սուլթանական կառավարության դեմ։ Խրոխտաց ինքնակալը, և Օսման ու Մուխթար փաշաներին զորքի գլուխ հրավիրելով, հրամայեց ինքնակալության դրոշը՝ սրբազան Թուղրան, հյուսիսային բեռեռի վրա տնկեն։

Սկսվեց ահեղ պատերազմը. արյուն՝ արյան փոխարեն։ Եվ 19-րդ դարը, Արդարության նժարը ձեռին, Իրավունքի պաակը գլխին, հասավ օգնության Ազատարարին, կնքելով իր վերջնական որոշումը՝ Մանե, Թեկել, Փարես—Չաբենցի, Կշռեցի, Բաժանեցի։ Ռուսաց հաղթական զորքը, իր ետևում թողնելով Բաթում, Արտահան, Ղարս, Մեծ փորը և Պոլսի խարխուլ պատերի տակ իր նախաճաշիկը վայելեց։

Բայց Եվրոպական պետությունների վաճառականական շահերը հետ կանգնեցին Ազատարարի հաղթական բռնակը մինչև Սան-Ստեֆանո, ուր և կայացավ Օսմանյան հպատակ ազգերի Ազատության գործը։ Այդ Դաշնագրության 16-րդ հոդվածը վերաբերում է Հայերիս, որ և հաստատել է ներկա Սուլթանը՝ կամա թե ակամա։

Տեսնում էր, պարոն նախագահ, ինչպես Հայկական Հարցը քաղաքական աշխարհի մեջ մտավ՝ ունենալով իր իրավաբանական հիմքը, որ է տաճիկ կառավարության ինքնավայել բռնությունը։ Շարունակենք. սակայն Եվրոպական պետությունների ամբիցիան ու ներքին շահերը այդ Դաշնագրությունը փոխեցին Բեռլին, ուր Հայկական Հարցը անցավ 61-րդ հոդվածի մեջ։ Այդ հոդվածի տրամադրությունն է— Սուլթանը երաշխավորում է Հայկական բռնությունների համար Եվրոպական Ավագ պետությունների առջև և պարտավորվում է այդ բռնությունների համար հաշիվ տալ նույն պետություններին ևն, ևն։ Բայց, պարոն նախագահ, տաճիկ կառավարությունը կատարե՞ց ազնիվ երաշխավորության դերը։ Պատմությունը մեր ամենաարդար փաստն է։ Երաշխավորելուց հետո, փոխանակ ժողովրդի շահերը պաշտպանելու, ազգաբնակության մեջ թշնամություն սերմանեց տաճիկ կառա-

վարությունը, սուտ լուրեր տարածելով՝ իբր թե Հայերը Բեկությունն, Բաղավորությունն են ցանկանում, այնինչ, նույն այդ ձեր կառավարության, պարոն նախագահ, հայտնի է Հայերի պահանջը Բաբ—Ալիի Ցույցով, 1895 թ. Դեպքով, Գաղատիայի փառավոր Դատավարությամբ են, են, որոնցով ցույց ավեց Հայաստանի ազգաբնակության պահանջը թե՛ Օսմանյան կառավարության և թե Եվրոպական Պետություններին «Հնչակյան» Կուսակցությունը, որի Դրոշակի և Սուրբ Սկզբունքների ջերմ երկրպագուներից մեկն էլ պատիվ ունիմ ես լինելու: Տերության սերմանած թշնամությունները ազգաբնակության մեծ ազեռների ենթարկեց: Հիշենք այսպես տաճիկ կառավարության միմիայն 4-րդ զորաբանակի հրամանատար Մամեա-Զաքի փաշայի սխրագործությունները, որ գլխին հավաքելով կոպիտ զորքն ու վայրենի խուժանը, բնաջինջ արեց Սասունի մի ամբ խաղաղ Հայ ժողովուրդը ու արժանացավ... բարձրագույն շնորհի:

Գրգռվեց եվրոպական ժողովուրդը, և Զաքիի կուրծքն ու հակատը, որ արժանացել էին պետության ամենաբարձր շքանշանների, արժանացան եվրոպական ժողովրդի կոպիշ թուք ու մուրի, իսկ այդ զզվելի գործի հեղինակը, պարոն նախագահ, Անգլիայի մեծ Ներուսեսը՝ Գլադստոնից կնքվեց Մեծ-Մարդասպան, Մեծ-Ոճրագործ անունով:

Վայ՛ թանուն (Բողոք, իրաբանցում: «Չի՛ կարելի, էֆենդիմ»,—ասում է դատախազը:—«Կարելի է, աղա Մուդդայի Ռամզ մի-դատախազ»,—պատասխանում է Ռուսաց Կոնսուլ պարոն Հիպպիուս: Պաշտոնական մարմինը վեր է կենում ցրվելու, իսկ Կոնսուլները ստիպում են՝ ճանուն միջազգային օրենքի: Վերջապես կարգը պահպանվում է):

Եվրոպայի զրգռման ներքև, Տաճիկ կառավարությունը, այլևս չկարողանալով ծածկել իր ոճիրները, ստիպվեց ստորագրել Հայաստանի վեց նահանգների բարենորոգության ծրագիրը: Այսպիսի մի ծրագիր ևս ստորագրվեց Զեյթունի փառավոր պատերազմից հետո: Իսկ թե կատարե՞ց Սուլթան Աբդ Ուլ-Համիտ էֆենդին իր խոստումը՝ այդ նույնիսկ դուք ևս կարող էք ձեր աչքով տեսնել, պարոն նախագահ, եթե

ննդություն քաշեք Վանի փողոցները պտտել, ուր այրված տների սև-սև պատերն ու փլատակները խոստացված ու սուլթանական ձեռքով ստորագրված բարենորոգության ամենափառավոր իրագործումն է... Համառոտենք, պարոն նախագահ.—Սան-Ստեֆանոյի և Բեռլինի Դաշնագրություններով Հայկական Հարցը քաղաքականության իրավունքի տակ մտավ, Սասունի և Զեյթունի Ծրագրերի ստորագրումով Վանի, Տիգրանակերտի, Էրզրումի, Երզնկայի, Բաղեշի և Զեյթունի աղգարնակությունը եղավ լիակատար տեր իր երկրի։ Եվ որովհետև Սուլթանական այդ խոստումը փոխանակ իրագործվելու, ավելի ու ավելի կոտորածներ, ավերումներ առաջ բերեց, բնականաբար մենք, ձեր առաջ ամբաստանված «Հնչակյաններս», մեր իրավունքի օրինական պահանջողներն ենք, ուրիշ խոսքով՝ պատվավոր Հեղափոխականներ ենք և ո՞չ թե «սրիկաներ», «խռովարարներ», «ժողովրդի հանդստությունը խանգարողներ» են, են, ինչպես մի ուժեղ ձեռքից ճնշված, դուք ևս այդպես էք անվանում մեզ, պարոն նախագահ։ Այո՛, մենք Հեղափոխականներ ենք, «Հնչակյան» անվեհեր Հեղափոխականներ։

— Ի՞նչը ստիպեց մեզ Հեղափոխական լինելու, կուզեք իմանալ, պարոն Նախագահ, չէ՞։ Այո, ձեր պաշտոնը ստիպում է ձեզ այդ ևս լսել, միայն եթե այդ պաշտոնին աննենդ ասպետն էք։ Տաճիկ կառավարության անպատմելի բռնությունը ստիպեց մեզ Հեղափոխական լինելու։ Ավանդությունը, դարերով կազմված ավանդությունը ժողովրդի սրբազործած ճշմարտությունն է, նրա կյանքի, կացության ճշգրիտ պատկերը, հայելին է։

Այսպիսի մի ավանդություն պտտվում է տաճիկ կառավարության հպատակների մեջ, իբր թե սուլթաններից մեկը, կարծեմ Օրխանը, մի թուղթ կնքելու համար կոշկի պայտը թանաքոտում է ու սեղմում թղթին։ Ջևակերպված նախշը դուրն է գալիս և ի՞նչ... Նրանից առնում է արդարության նշանի տիպը՝ Սրբազան Թուղրան։ Այս ավանդությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կառավարության արդարությունը

ոչ-ոչ էլ։ Իրական կյանքը արտահայտում է այս ավանդությունը։

Հոմառատակի թվենք մի քանի այնպիսի սրացիներ, որ հասարակության մեջքին ու ճակատին են կպչում։

1.—Տերության հրամանով կոտորած ու կողոպուտ.— Չորս տարվա ընթացքում կոտորել են 175000-ից ավելի Հայեր, 80 հազարից ավելի ընտանիք կողոպտվել են, 2500 գյուղ կրակի է տրվել։ Սրանք կատարվել են Տերության հրամանով. Սաադ-էդդին, Զեքի, Բահրի և ուրիշ փաշաներ դրա հերոսներն են։ Վանի մեջ մեկ բարձրաստիճան պաշտոնյա՝ Ղալբը փաշա, հարուստ հայերին իր տունը հրավիրեց պաշտպանելու նպատակով, բայց կողոպտելուց հետո իր ձեռքով ամենքին էլ՝ մոտ 200 հոգի, անասելի չարչարանքով սպանեց։ Արճակում 450 հոգու եկեղեցու մեջ զինվորները ոչխարի պես մորթեցին։ Ալշավազում տեղական մուդիրը 40 հոգու ցորնահարի մեջ կենդանի թաղեց՝ օրինակ վերցնելով Զեքի փաշայից, որ 600 հոգի կենդանի թաղել էր հորի մեջ։ Մոքսի կառավարիչը տեղական Հայերին խոստովանեց. «Չեմ կարող,—ասում է,—ձեզ պաշտպանել, քանի որ Տերության հրամանն է»։ Շարաֆ բեյ, ավազակ Շաքիր, Զաֆար բեյ, և այլն, Տերության շնորհիվ շքանշանների արժանացան, որովհետև շատ կոտորեցին ու կողոպտեցին։

Մենք կոտորածների ու կողոպուտների մանրամասնության մեջ չենք մտնում, այդ ամենքին հայտնի է. նույնպես մանրամասն օրինակներ չենք ներկայացնում ապացուցանելու կառավարության ձեռքով լինելը, միայն այսքանս ասենք, պարոն նախագահ, «Հնչակյան» Կուսակցությունը Բաբ-Ալիից ուղարկված՝ Հայերին կոտորելու մի հրաման է ձերբակալել ու ներկայացրել, ուր հարկն է։

2.—Սրբապղծություն։ Խիշճը՝ ուրեմն և մարդուս հոգեկանը անձեռնմխելի է նույնիսկ վայրենիների մեջ, իսկ Տաճիկ կառավարությունը դրա հետ խաղում է այնպես, ինչպես կատուն մկան հետ։ Հայոց եկեղեցիները (570), վանքերը (80) այրվել ու ապականվել են։ Մի մեծ գյուղում, որտեղից բռնի կրոնափոխ եղած քահանան ինձնից օգնություն էր պահան-

ջում, տեղական գայմազամը ստիպում է քահանային շան լակոտը քրիստոնեական ծեսով մկրտի ու հաղորդի, որ և կատարվում է, որից հետո մեռոնը հացի վրա լցնելով շներին է գցում: Մի ուրիշ պաշտոնյա շունը, կատուն, էշը սեղան հանելով՝ հաղորդել է տալիս ու քրիստոնեական ոչնչությունը բարբաջում: Դեռ չենք ասում դրանց միջոցով խուժանի գործած սրբապղծությունը: Մոտ 300 եկեղեցի փոխել են մեջիդի, 100 գյուղ բռնի կրոնափոխ են արել: Մեծ թվով հայ կանայք ու աղջիկներ հարեմ տարվել, անթիվ պատանիներ ու կիներ, աղջիկներ բռնաբարվել և այլն, և այլն:

3.—Հարկը և հավաքելու եղանակը. Գյուղերի երեսը վաճառվում է հարուստ կապալառուներին, որով եթե գյուղը պիտի տա 100 ոսկի, կապալառուն ստանում է 200 և ավելի: Զինվորական տուրքը՝ փոխանակ ստանալու 21 տարեկանից, ստացվում է ծծկերից, դեռ չծնվածից, նույնպես և մեռածներից: Զորքոտանիների տուրքը ստացվում է այն չքավորներից, որոնք կենդանի անգամ չունին, կամ ունեին՝ կողոպտվել, թալանվել է: Նույնիսկ տուրքի ժամանակ շատ ազաներ իրենց կենդանիները վերագրել են տալիս թույլերին, որով և նրանց հարկ վճարել տալիս: Գլխահարկը ստացվում է արդանդի երեխայից անգամ, նույնիսկ վաղուց մեռածներից: Մեկ արտամետցի տաճիկ ինձ պատմել է. «Մեր ծառի տանձը գնահատեցին 20 ղուրուշ. իսկ ես ծառը իր վրայի տանձով առաջարկեցի նրանց գնել 10 ղուրուշով, որի փոխարեն լավ ծեծվելուց հետո՝ վճարեցի տուրքը»: Բայց գիտեք, պարոն նախագահ, որքա՞ն այսպիսի տանձի և ուրիշ ծառեր կան: Հետաքրքիր է խաղողի տուրքը. մի պտղից վե՞ց տուրք: Նախ՝ հողի տուրք (ջրինն էլ ավելի), հետո խաղող պտղի տուրք, մի տուրք ևս խաղողը շիրա շինելու համար, մի տուրք խաղողի չանչի համար, դարձյալ մի տուրք օղի քաշելու համար, մի տուրք ևս օղին ու գինին վաճառելու համար, դեռ չենք ասում մի տուրք ևս դրանով պարապողի աշխատանքի համար: Տեսնո՞ւմ էք, պարոն նախագահ, մի պտղի համար անվերջ տուրք:

Մանրամասնության մեջ չենք մտնում:

Իսկ ո՞վ է հավաքում տուրքը։ Իհարկե ոստիկանը։ Պաշտոնական որոշմամբ հետևակ ոստիկանը պիտի ստանա մեկ ու կես ոսկի ամսական, իսկ ձիավորը՝ $3^1/_4$ ոսկի։ Իսկ հինգ տարուց ի վեր նա այդ ռոճիկը չի ստանում, շնայելով իր մեծը՝ Ալայի բեյը այդ ռոճիկը իր դրպանն է դնում հետևյալ կերպով։ Ոստիկանին պետք է դալիս՝ գնելու մեկ լիտր յուղ, կամ մեկ երինջ զավուրմայի համար. նա ստիպված ամբողջ ստանալիք իր ռոճկի ստացականը տալիս է ու ստանում մեկ լիտր յուղ, կամ մի երինջ և կամ մի քանի չափ ցորեն։ Նշանակում է՝ ոստիկանը մեկ լիտր յուղ կամ մեկ երինջ առնում է 10, 20, 30, 40, 50 և ավելի ոսկիով։ Ձիավոր ոստիկանը պիտի դա պաշտոնի, ձի չունի, իսկ Ալային տալիս է նրան 1—2 ոսկինոց մեկ ձի՝ փոխարենն ստանալով խեղճի Տերության վրա մնացած հինգ տարվան ռոճկի ստացականը։ Նշանակում է՝ խեղճ ձիավոր ոստիկանը մեկ ձին առնում է իր մեծից 20—60 և ավելի ոսկիով։ Սրանք անհերքելի ճշմարտություններ են, որ կատարվում են և՛ Վանում։ Այսուամենայնիվ, այս ոստիկանը ապրում է, տուն, ընտանիք է պահում, մինչև անգամ հարստություն էլ է դիզում։ Ո՞րտեղից.— իհարկե գյուղացիներին կողոպտելով, որը սովորել է իր մեծից, ինքը ևս նրանից կողոպտվելով. այո՛, գյուղացուն կողոպտելով, լինի այդ գյուղացին Հայ, Թուրք, Քուրտ, Ասորի, Չերքեզ, նույնիսկ Մթրբբ-Գնչու, այդ ոստիկանի համար միևնույն է՝ նրան ապրիլ պետք է, մանավանդ գիտե երկրի կարգ ու կանոնը։ Թե ոստիկանը գյուղում, նույնիսկ քաղաքներում ինչ պահանջ է անում, այդ մասին լռում եմ։

Սարուկ ժողովուրդ՝ քաղցած ոստիկան, եղբայրացությունը դուք արեք։

4.—Բանտ և Արդարադատություն.—Խոնավ, մութ, բորբոսած սենյակ՝ մարդուս արժանապատվությունը շղթայել բռնություններով,—ահա տաճկական բանտը։ Համառոտ ասենք. ծեծելով, տանջելով ասել են տալիս չեղած իրողություններ։ «Հասիր-Հավասիի» տակ՝ վերագրել տալիս տանջվողին իրեն չպատկանած գործեր ու անտես-անճանաչ մարդիկ։ Կատրում են մարդու ոտները, որ այդ դժոխքից չփախչի։

Սուված, ծարավ, շղթան վզին, մեքենան ոտներին մաշում ու անդամալում են առանձնարանում։ Յողդատում՝ բանտի մեջ յոթ պաշտոնյաներ բռնաբարեցին մեկ հայտնի օրիորդի։ Անդորիայում, նույնպես, չորս երիտասարդներ բռնաբարվեցին պաշտոնյաներից. Էրզրումում նույնպես։ Նույնիսկ Վանի մեջ ներկա պաշտոնյաներից մեկը՝ մուդիր Իսմայիլ էֆենդին, բռնաբարել է Ավետիս անունով մեկ երիտասարդի։ Իսկ դուք հիշում էք, որ նույն բռնաբարության ենթարկվեց և օրիորդ Զարուհին՝ Շամսի փաշա վալիի բանտում, նախքան աքսորվիլը։ Արվամոլության ախտով տոչորված ձեր փոլիսները, պարոն նախագահ, միշտ սիրուն երիտասարդներին զանազան պատրվակներով դեպի Կապալթի են քշում։ Վերջապես տաճկական բանտ ասված հիմնարկության համար համեստությունը ստիպում է մեզ լռել, միայն այսքան ասենք, որ շատերը բանտ բերվելու փոխարեն, ինչ-ինչ դիտումներով սպանվում են, օրինակ, Տերոյան Տիգրան, իմ ընկեր Ստեփան են, ան։ Արդարադատությունը կախում ունի բանտի հետ, իսկ այս երկրի արդարադատության փոխարեն՝ բնազդներն են առաջին տեղ բռնում։ Այստեղ օրենքը պաշտոնյաների կամայականությունն է։ Օրինակ ձեզ, պարոն նախագահ. այստեղ մեղադրված ու 10 ամիս բանտի մեջ տանջվող Ավետիսի հանցանքը այն է, որ ունի սիրուն կին, որին Հյուսնի և ընկերության փոլիսների լիրբ ոհմակը արդարության՝ այն էլ Տաճկական արդարության հիման վրա սեռհականացրել է, մարդուն ձերբակալելով, իսկ դուք այդ լավ գիտեք, ու ի՞նչ արիք։ Նույնպես փոլիսների ինչ-ինչ լիրբ բնազդով շատերն ձերբակալվիլը գիտեք. իսկ այդ լրբերին քշեցի՞ք դուք այդ պատասխանատու պաշտոնից։ Արդարությունն ձեր Տաճկական բառարանում նշանակում է կաշառք. օրինակներ շատ ունինք։ Եվ բանտից, պարոն նախագահ, քանի՞-քանի՞ աճեզների հառաչանքներն են բարձրանում դեպի երկինք ձեր վերջավորության համար բողոքելու...

5.—Հանդիպա՛։—Ենիչարիների հարազատ շարունակությունն է ժողովրդի համար պատրաստված այս խարազանը։ Ազգաբնակության արյունը, աշխատանքը ծծողն է այս Հա-

միդիան։ Նրա պատվի բռնաբարողն է այս Համիդիան։ Նրա արբությունը պղծողն է այս կազմակերպությունը։ Եվ այսպիսի մի կազմակերպություն կարող է հաստատվել միմիայն Տաճկաստանում, այն էլ միմիայն Ամենամեծ-Ոճրագործը կարող է երևակայել այսպիսի մի կազմակերպություն։

Համիդիան Տաճկական կառավարության վերջավորության սկիզբ դնողն է։

6.—Ծխախոտի Բեժի, նրա պաշտոնյաներ.—Սա ևս Համիդիայի նման մի կազմակերպություն է, ավազակների մի խումբ է, որ առանց միջոցների խորության ամեն տեսակ գողություն, լրբություն կատարում է՝ ազգաբնակության վրա մեծ բեռ տալով։ Սրա լրբությունից զերծ չի մնում և իգական սեռի պատիվը. սա է, որ օրը կես օրին, հրապարակի վրա, ամոթխած կնոջ, սիրուն աղջկա ներքնաշորերն է խուզարկում և ծխախոտ գտնելու պատրվակով՝ իր լիրբ, գազանական կրքերին հագուրդ տալիս։ Գոլջի և Համիդիա՛,—Տաճկական պետության 19-րդ դարու ամենատգեղեցիկ գյուտն է։

Բայց որանով մենք չենք ասում, թե Տաճիկ պետությունը իր ժողովրդին, մասնավորապես Հայերին, չի սիրում։ Նա կսիրեր... և իր հայացքը արտահայտել է Բահրի փաշայի բերանով։ Ամենքին հայտնի է վանեցի խենթ Կյորոն (Գևորգ), որին Բահրին միշտ դրամներ էր տալիս, փաղաքշում, սիրում՝ ասելով. «Եթե Հայերին կսիրեի, եթե ամենքը այսպես լիներին», այսինքն, եթե բոլոր Հայերը խենթ լիներին, չէ՞։ Սա ցույց է տալիս, որ Տաճիկ կառավարությունը՝ քաղաքակրթության, հառաջադիմության հակառակ լինելով, սիրում է միմիայն բնության վիժածներին, հրեշներին...։

Ահավասիկ, պարոն նախագահ, այն աքացիները, բռնությունները, որ արդարացնելով ժողովրդի մեջ պտտվող բաղնիքի ավանդությունը (ահա ավանդությունը.—ներկա Սուլթանի հայրը բաղնիքում եղած ժամանակ, Սուլթան Համիտի ծնվելու լուրն են բերում։ Տխրում է Սուլթանը ու ասում. «Դա ոչ թե աշքալուսանք է, այլ բութ, որովհետև ես մերկ, նորածինս մերկ, բնականաբար, երկիրս պիտի լինի մերկ»), ստիպում են Հեղափոխականներ ծնելու, որոնք զգալով ներկա

օրենքի, վարչության՝ ժողովրդի կյանքին անհամապատասխան լինելը, բռնի միջոցներով կամենում են այդ կործանող կարգերը քանդել ու նրանց տեղ դնել այնպիսի օրենքներ ու վարչություն, որ ժողովրդին տանի դեպի բարօրություն, դեպի երջանկություն։

Ազգաբնակության բարօրությունը,—ահա Հայ Հեղափոխականներիս մտածմունքն ու ճիգը։

Ժողովրդի կյանքը բարվոքելու համար Հեղափոխականներս պահանջում ենք.

Ա. Խղճի Ազատություն.—*Խիղճը մարդուս հոգեկանն է, աստվածայինն է, և որքան լայն ու ընդարձակ է աստվածայինը, որքան անճնշելի է նա, այնքան էլ մարդուս խիղճը պիտի լինի լայն, ընդարձակ, ազատ ամեն բռնություններից ու ճնշումներից։*

Ճնշել խիղճը՝ նույնն է, թե մեռցնել մարդուս մեջ աղնիվը, վեհը, բարին։ Մենք պահանջում ենք հոգեկանի կատարյալ ազատություն, ուրեմն մենք Հեղափոխական ենք և ոչ «սրիկա»։

Բ. Մամուլի Ազատություն.—*Ազատ մամուլը մարդուս մտքի մեջ լույս թափանցելով՝ ընդարձակում է նրա հասկացողության հորիզոնը, սրում է նրա ուղեղը՝ տալով ավելի նոր, ավելի բարձր գաղափարներ, ընդունակություններ՝ դիտելու, հասկանալու ու իրեն ծառայեցնելու բնության հրաշալիքները, որով և իբրև մարդ՝ մարդկային արժանավորությամբ ապրելու։ Մենք պահանջում ենք մարդավայել կյանք, ուրեմն մենք Հեղափոխական ենք և ոչ «խռովարարներ»։*

Գ. Գումարման և խոսքի Ազատություն.—*Գաղափարների շփումով նորանոր հասկացողություններ են առաջ գալիս՝ հասարակական կյանքը ավելի թարմ ու ժամանակի հարմար ուղիի վրա դնելու համար։ Ազատ գումարմամբ ու ազատ խոսքով է, որ մարդս կրում է իր վրա «Բնության Թագ և Պսակ» անունը։ Եվ որովհետև խոսքը ինքը անհատն է, մենք պահանջում ենք անհատի մտքի ու գաղափարի, հետևաբար և իր բացարձակ ազատությունը, ուրեմն մենք Հեղափոխական ենք և ոչ «ժողովրդի անդորրությունը վրդովողներ»։*

Դ. Կյանքի, Ինչի ու Պատվի Ապահովություն.—*Կյանքը բնության պարգևն է և նա կարող է միայն այդ պարգևը ոչնչանալ, իսկ։ Ստացվածքը՝ դառն քրտինքով ձեռք բերված, կյանքի շարունակության միջոցն է, ուրեմն և անբաժան կյանքից։ Իսկ պատիվը, լինելով հոգվո անդորրության պատճառ, ուրեմն և կյանքի զարգացման ու բարգավաճման՝ զբաղեցնող գործոն, առնչական է կյանքին ու նրա միջոցներին, հետևաբար պետք է լինին անձեռնմխելի։ Բայց որովհետև, պարոն նախագահ, այստեղ փոխանակ իրավունքի ուժի, տիրում է ուժի իրավունքը, ուրեմն պետք է մարդուն ինքնապաշտպանության միջոց տալ՝ պաշտպանելու իր անձը, ստացվածքն ու պատիվը։*

Ոչիտի ազգաբնակության մի մասը զրկել զենքից, իսկ մյուս մասը զինել ու նրա ջանին դցել։ Սրանով մենք պահանջում ենք անհատի, ուրեմն և հասարակության թե՛ կենսականության և թե՛ արժանապատվության ապահովությունը, հետևաբար մենք Հեղափոխական ենք, ազգաբնակության սիրելիներն ենք և ոչ թե «ավազակ—կողոպտիչներ»։

Ե. Անուղղակի Տուրքերի Ոչնչացում.—*Որովհետև անուղղակի տուրքերը ժողովրդի բարօրության համար չեն գործածվում, այլ գործ են ածվում մի բուռն դատարկապորտների գոյությունը պահպանելու համար, ուստի մենք պահանջում ենք, որ Ազգաբնակությունը աղատվի այդ տգրուկների գոյությունը պահպանելուց, հետևաբար մենք Հեղափոխական ենք, ազգաբնակության շահերի պաշտպաններ ենք և ոչ «ազգաբնակության թշնամի»։*

Զ.—*Մեր պահանջներին վերջ չկա, քանի որ կյանքի պահանջներին ևս վերջ չկա։ Եվ որովհետև մեր պահանջները չեն կարող Օսմանյան պետության տակ ապահովվիլ, ուստի մենք Հեղափոխականներս մարդկային ամենայն իրավունքով պահանջում ենք՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ* («Դուք շատ բան էք պահանջում,—ասում է մախագահը, բայց չեն տալ»։ Ընդհանուր ծիծաղ)։ *Սրանով մենք չենք ուզում ստանալ Հայկական Բեգություն կամ Թագավորություն, ինչպես այդ քարոզում*

ու տարածում են սապատավոր ուղեղները, իրենց գոյության ոչնչանալու վրա դողացողները։ Երբեք մենք չենք առաջնորդվում ազգայնական դեյրաթով։ Մենք թթու ազգայնամոլներ չենք, մենք աննենգ ժողովրդասերներ ենք ու շատ լավ գիտենք, որ ազգայնական Թագավորը, Բեգը նույն բռնություններն են գործելու, ինչ գործում է օտարը։ Մեր պահանջն է՝ Հայաստանի ազգաբնակությունը, այսինքն Հայ, Քուրդ, Թուրք, Արաբ, Լազ, Չերքեզ, Ասորի, Եզիդի, մինչև անգամ Մութրուբ-Գինչուն իր քվեով ընտրի իր կառավարիչը ու կառավարվի իրենց կարգված մարդկերով ու օրենքներով, որը բարօրության հասնելու կարճ ճանապարհն է։ Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ամբողջ ազգաբնակության համար։

Ես վերջացրի, պարոն նախագահ, և Հեղափոխականի Սուրբ հավատով հավատում եմ, որ պիտի հասնիմ նպատակիս։ Ես հավատում եմ, որ ազգաբնակության արդար ձայնը չպիտի խեղդվի։ Ես հավատում եմ ու առաջ եմ բերում այստեղ Պարսից մեծ բանաստեղծ Սաադիի երկտողը, որ ասում է.

«Վախենում եմ շնասնիս Քեբե, ով արաբ,
Այս նանապարհը, որ գնում ես, դեպի Թուրքստան է»։

Եվ իրոք, պարոն նախագահ, Օսմանյան Պետության այս ընթացքը նրան ոչ թե դեպի Քեբե սրբավայրն է տանում, այլ՝ ուղղակի դեպի Թուրքստան, որտեղից 500 տարի սրանից առաջ դուրս եկավ այս երկրի համար Աստվածային խաղաղան լինելու։

Ես վերջացրի, պարոն նախագահ, և Հեղափոխականի վսեմ արհամարհանքով լսում եմ ընդհանուր դատախազի անատամ ամբաստանությունները ու ձեր վճիռները։ Ես հավատացած եմ, որ այդ ամբաստանություններն ու վճիռները անթառամ պսակներն են, որ անգիտակցաբար դնում էք Հեղափոխականներիս գլխին, և այն՝ որ դուք իբրև թուրքմուր էք մեր ճակատին դնում, ապագա սերնդի պաշտման առարկաներն են լինելու։ Վճռեցե՛ք, որքան կարողանաք,—

արհամարհում ենք։ Վճռեցե՛ք, բայց վախեցե՛ք ապագայից, որ սև՝—սև՝ գույներով է մրոտելու ձեզ. ձեզ, ազգաբնակությյան երդվյա՛լ թշնամիներ։ Վճռեցեք։

Կեցցե՛ Հեղափոխություն։

Կեցցե՛ Հնչակյան Կուսակցություն։

(Կարդացած Վանի Վճռատու Ատյանի առաջ 1898 թ. օգոստոս 1-ին. որից հետո ստացա ԿԱԽԱՂԱՆԻ ՎՃԻՌ)։

29 Հուլիսի, 1898 թ. Վան,

(Ռուսաց Կոնսուլի բանտում)

ՀԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

Նորից հիասթափվեց հայը։

Նորից հուսախաբություններ նրա դարավոր վշտերի պատմության մի օղակը դարձավ։

Բալկանյան պատերազմը իր հետևից բերավ Ռումելիի ազատումը Ստամբուլի դարավոր լծից։ Անջատվեց Մակեդոնիան, Եպիրոսը և լեռնական Ալբանիան ստացավ ինքնուրույն դահը՝ եվրոպացի թագավորով։ Կատարվեց այն, ինչ որ պատմական բնաանհրաժեշտությամբ պիտի դար բախտը որոշելու այն կառավարության, որի միակ ձգտումն է եղել և է իր հպատակներից ճորտեր ստեղծել, յաթաղանի տակ «ռայա»-ների պարտակատար, հլու հոտեր պատրաստել, և միջոցը այդ ձգտման՝ ավեր, կոտորած, զուլում։

Ազատվեց Ռումելիի ազգաբնակչությունը, իսկ «Ատանանե՞ը»՝ հայի մարտիրոսության ապոթեո՞զը, դարձյալ մնաց կայուն, անշարժ վիճակի մեջ։

Եվ նորից նույն վի՞շտը, նույն գալարումները ...

Դեռ երեկ էր, հայ ֆիտային հրաժեշտ տալով Մարտիկի, Զաքարյանի... ըմբոստ ոգիներին, զենքը ձգեց, «սահմանադրության» հյուրիեթ, ատալեթ, մուսավաթ, ուխուվվեթ ստվերանկարի տակ դաշտը իջավ, մշակույթի գործիքները առավ՝ իր քանդած տունը, իր անթեղված օջախը վերաշինելու, կյանքի հրճվանքը ճաշակելու։

Դեռ երեկ էր, հայը՝ տանջված համիդյան ռեժիմից, փարեց «Սահմանադրության» և մոռացության տալով հրեշային խժդժությունները, նվիրվեց երկրի վերաշինության, վերածնության շինարար գործին։

Սխալվե՞ց հայը, սխալվե՞ց արդյոք հանդուգն ֆիտային, երբ «Սահմանադրություն»-ից հետո զենքը վայր դրեց՝ քայքայված երկիրը վերամշակելու մտքով։

Մեր առջևն է պատմությունը՝ ժահրո՞տ, մա՞յլ, դժոխայի՞ն, Հայի Այսօրվան պատմությունը-շարունակությունը, ճիշտ հար և նմանը նախկինի, իր դարևոր վշտերի, իր հոգու փլուզումների, իր ավեր ու կոտորածի։

Այո՛, սխալվեց հայը պատմական անորակելի սխալով, սխալվեց հայ ֆիտային, երբ ոգևորության ազդեցության տակ կարողացավ ինքնիրեն հավատացնել, թե Օսմանյան տիրապետության տակ, տիրապետությո՞ւն՝ տարված նեղ, ցած ու գծուծ շովինիզմով և իսլամական անհամբերատար աշխարհահայացքով, կարող է պաշտպանել բաղկացուցիչ աղգերի շահը՝ տնտեսական, հոգեկան, մտավոր։

Սխալվեց հայը, երբ «Միդհատյան Սահմանադրության» մեջ տեսավ իր վշտի, իր նեղության ու ուժասպառման վերջակետը, այն «Սահմանադրության», որը իր էությամբ մի զրդռիչ աղդակ է տիրող պետության աստվածապետական՝ Զիլլը-Ուլահայության ձգտումներին, և հպատակ ժողովուրդների ստորադասման՝ Էմանեթ-Ուլլահի վիճակի փոխհարաբերության մեջ բռնորեն պահելու համար։

Վեց տարվան իր գոյության ընթացքում նա՝ «Սահմանադրություն»-ը, իր ներքին տրամաբանության պատճառով, ոչ մի ընդունակություն, ոչ մի տրամադրություն ցույց չտվեց մասնակցելու ժողովուրդների ձգման համապատասխան դեկավար ուժեր, վարչական մեքենան առաջ տանելու համապատասխան կառավարիչներ։ Ընդհակառակը, կանգնած շովին ու մոլեռանդ հասկացողության վրա, նրա վարչական առաջնորդները՝ սկսած փտածության օջախ Բ. Դրան նպարքոսից մինչև վերջին դյուղի վերջին մյուտիրը, պետությունը կազմող տարրերի մեջ իրար հոշոտելու, իրար ծվեն-ծվեն անելու սերմերը ցանեցին, նրանց կենսաղրկելու ճիգ ու գործունեություն ունեցան։ Ատանան, Հավրանը, Սասնան մեր առջևն են՝ «Սահմանադրության» այդ ողջակեզները։

Քավությա՞ն նոխազներ թուրք ազգայնամոլության։ Զո՞հը Էնվերի, զո՞հը Թալեաթի, զո՞հը Հագդը և այլ եպարքոս, նախարար փաշաների, պեյերի։ Եվ ի զուր չասաց սահմանադրական Ալի Քեմալ՝ թրքության գաղափարաբանը, իդեոլոգը. «Իսլամ թուրքը դաղափարական միացումը գործիքըն է, նա կտրորե կամքերը, վերջ կդնե ազգություններին, նրանց կշաղախե և կդնե հավասարության մակարդակի վրա»։

Այլևս ի՞նչ բաղադրություն։ Պապիկյանի արյունով դրրված տեղեկագիրը սրանց Post Scriptum-ն է։

Տարված սոյն երևակայական հղացումներով, ազգայնամոլական հակապատմական տենչերով, այս վեց տարվան ընթացքում նա՝ «շերիաթական Սահմանադրություն»-ը, անատակ եղավ գծելու և գործադրելու մի օրենք, որ նպաստավոր պայմաններ տար ազգաբնակչության իր պատվի, իր մալ ու մյուլքի տերը դառնալու, իր հանդի մեջ ու ծածկի տակ ապահովություն տեսնելու, իր հոգեկան վայելքները ճաշակելու։ Ընդհակառակը, տարված Միլլեթը-Հաքիմեի ցավագար երազանքով, Հեքմեթի-Հյուքումեթի մտայնության որոճումներով, համիդական ևս առավե՛լ անբարո, նախատալից ռեժիմով, մանավանդ հայության համար, շերիաթական տրամադրություններ ստեղծագործեց ու գործադրեց ազգերի կենսունակությունը քամելու, քաղաքակրթության, հառաջադիմության, բարելավության ազդակները տրորելու, «հավասարության մակարդակի վրա դնելու»։ Օրենքը «Օսմանլիության Սահմանադրության» ձեռքին մի գործիք դարձավ սահմանադրական ազգերը ջնջելու։ «Հայերին միայն մնում է պահանջել ու դանդատիլ, իսկ մեր գործն է ու պիտի լինի նրա խնդիրները մերժել ու իրեն էլ հարվածել»։ Այսպես է ասում Բիթլիզի դատարանապետը իրեն դիմող բողոքարկու հային։ Այսպես է խոսում օրենքի հրսկողը, օրենք բացատրողը, օրենքի հայրը։

Պետք է իրեն էլ հարվածեն ...

Եվ օրենքը խլում է հայի հողը, հայի աղջիկը, հայի ազգության ստորոգելիները՝ դպրոց, եկեղեցի, մամուլ, այն էլ

այսօր, այո՛, հե՞նց այսօր, երբ արտաքին ճնշումների տակ ստիպված ստորագրում է Հայաստանի բարենորոգումները։

«Հայաստանի բարենորոգումնե՞ր»... զավեշտն է դա այն շարան-շարան կատարածի, թալանի, հրկեզումի, առևանգման, հոգազրկության, որը հայ իրականության պատմության մեջ իր բոսոր արյունով արձանագրված է՝ ՀԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ վերտառությամբ և որի դերակատարն է թուրք բռնապետությունը եվրոպական շահամոլ կառավարությունների անժիտորության տակ։

«Հայկական բարենորոգո՞ւմ»... դա վավերագրությունն է տիրապետող տարրի անսանձ գործողության իրավասության, իր նախճիրների մեջ անպատասխանատու մնալու։ Դա Օսմանյան կառավարության իրերի դրությունից մի կերպ ձերբազատվելն է։ Դա բաժան-բաժանումն է Հայի Հայրենիքի՝ Հայաստանի, հոշոտումն Հայկական Հարցի։

Սակայն Հայկական Հարցը մնում է հարց, քանի նա հային չի տվել իր բաղձանքները, իր պահանջի գեթ նվազագույն չափը, որ կարողանար երաշխավորել նրա կյանքի, գույքի, անձի անձեռնմխելիությունը, նրա աշխատանքի ապահովությունը։ Հայկական Հարցը մնում է հարց, քանի որ նա՝ հայը դուրս չեկավ «ռայա»-յի ամոթապարտ կացությունից տեղական ինքնավարություն, գեթ եվրոպական կոնտրոլ ստանալով։ Եվ այնքան ժամանակ նա հարց կմնա,— որպես և դրացի ու շահագրգռող պետությունների համար,—երբ թեկուզ մի հայ էլ մնա Հայաստանի մեջ իր ներկա վիճակով, իսկ այս վիճակից ազատվելը, Հայկական Հարցի վճիռը միայն և միայն կվճռվի հայի հավաքական և դրական ուժով՝ Հեղափոխությամբ։

«Ապագան պատկանում է այն դասակարգին, որը ինքն է ստեղծում իր հաստատությունները»,— այսպես ասաց Վանսերվիլը, և մենք ավելացնում ենք՝ և այն ազգերին, որոնք կենսունակություն ունին ստեղծելու իրենց հաստատությունները։

Անառարկելի է, որ Հայը իր հաստատությունները ստեղծելու կենսունակություն ունի։ Նրա լեզուն, դրականությու-

նը, սերը դեպի շինարար ձգտումը, Հայրենիքի տենչը, ազգության զգացումը, դասակարգային գիտակցությունը, ընդօրինակման ճկունությունը, նորատեսության ժխտումը,— արանք այն գործոններն են, որոնք, տանջանքով կռված, արյունով զոդված, կազմել են Հայի Մեծ Կամքը՝ նրա հաստատությունների ամբողջությունը: Հայը գիտե իր վիշտը արտահայտել փիլիսոփայորեն, իր ուրախությունը՝ բանաստեղծորեն: Նա շինել է Մհերի դյուցազներգությունը, հյուսել է Արտավազդի շղթաները կռող դարբինների բարոյավեպը. ծառայել է երեսուն տարի Համիդի և նրա ռեժիմի դեմ—հատկություններ, որոնք նույնիսկ a priori ասել են տալիս մեզ, թե նա՝ հայը, պատրաստ է ու կարող է մեռնել իր հաստատությունները պահել-պաշտպանելու և զարգացնելու համար:

Եվ նա շատ է մեռել:

Իրթիհատա-գերմանական «բարենորոգումները», հայությունը բնաջնջելու նորագույն այդ որոգայթները, նրա բնական ձգտման առարկան չեն: Նա իր ստեղծած հաստատությունները սրբագրել գիտե իր արյունով: Նա հեղափոխականացած հեղափոխական է:

...Բայց այս կենսունակությունները խեղդում են, նրա ստեղծագործած հաստատությունները հիմնահատակ են անում: Ավերածության Կաղ-Դեր՝ զինված պանիսլամիզմի և «Տիրոջ-Ազգի» ամեն ինչ սառցակույտ դարձնող սեռեալ դաղափարով, ծվիկ-ծվիկ է անում այն տուրքը, որի վրա ձևված, հենված է հայի ստեղծած հաստատությունները— Հայությունը:

Քաղաքական նրբությունները, զուգորդված իսլամական կոշտությունների հետ և համհարզ ընդունած եվրոպական շահադիտական ներհակությունները, ծուծն են քամում այն մարտիրոսության խաչը շալակած ու Գողգոթայի բարձունքին կառչած հայության:

ՀԱՅԸ ՄԵՌՆՈՒՄ Է ԿԱԹԻԼ ԿԱԹԻԼ:

Բռնակալությունը, դոյության իրավունքը, հրճվանքի և վայելքի ձայնը կոչ են անում ժողովրդի երաշխավորներին

ու իրենց հրամայական պահանջը շեշտում. «Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու և անէանալու, հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ հայը ապրի»:

Ահա հայության պահանջը՝ բխած իրականության հրամայականից: Այս պահանջի դրական դիրքի պատվիրաններից է, որ մեզ պիտի դան այն դեմոկրատիկ կերպերն ու դրությունները, որոնք միայն ընդունակ են երաշխավորելու մեր կյանքի, կայքի, դույքի և ազգովին ապրելու պայմանները: Եվ հայը իր միջոցները պիտի չխնայի մինչև չատանա իր բաղձանքների իրական արժեքը՝ Հայաստանի տեղական ինքնավարություն՝ լայն ռամկավար կարգերով:

Կրավորական տենչերով չէ, որ հայը պիտի հասնի իր մարդավայել ապրելակերպին: Իթթիհադը՝ երկիրը ծախելուն շնորհիվ, միշտ էլ շահագիտական Եվրոպայի մեջ իր թարեկամները կունենա, որոնք ընդունակ կլինեն տալու միմիայն Իթթիհադա-գերմանական բարենորոգումներ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ հայության դարևոր կաղնին ճղնաթափ անելու, օսմանցիացնելու դավադիր նկրտումներ: Հանդուգն պահանջ և ոչ կրավորական աղերս—ահա մեր դիրքը

Ինքնապաշտպանության խնդիր կա դրված մեր առջև, մեր լինել-չլինելու խնդիրը՝ ազգովին ապրելու խնդիրը: Քան երբևիցե այժմ է, որ մենք պետք է ստեղծենք մեր ազգային առնական քաղաքականությունը, հիմնված՝ դոյության կռվի երկաթե օրենքների վրա, որի արամադրությունն է հավաքական ինքնապաշտպանությունը իր իրավունքներով և միջոցներով: «Հարձակման դեմ դիմադրությունը ոչ միայն արդարանալի, այլև հարկադրական է: Անդիմադրությունը մեղանչում է թե՛ հոսարության և թե՛ այլասիրության դեմ միանգամայն»: Այսպես է ձևակերպում Հերպերդ Սպենսերը տիեզերական բարոյագիտության այս հրամայականը, որին ի պաշտպանություն ոչինչ ունենք ասելու, եթե ոչ միայն այն ավանդը, որը Իլմիրլյանը տվեց իր հոտին Երուսաղեմ տքսոր ճանապարհելու միջոցին.

«Հոն, ուր արդարություն չկա, ամեն հավատարմություն կեղծ է»:

Ազգային առնական քաղաքականություն՝ ահա՛ մեր պահանջը։

Հանդուգն պահանջ՝ ահա՛ մեր դիրքը։

Փոխանակ կաթիլ-կաթիլ մեռնելու ու անէանալու, Հայը մի անգամ էլ պիտի մեռնի, որ Հայը ապրի։

ՓԱՐԱՄԱԶ

(«Հնչակ», № 1 մայիս, 1914)

«ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչքա՜ն քաղցր է հնչում այս բառը տանջանքների տակ ալրկված հայության համար։

Բարենորոգումնե՞ր ...

Առանձն ավերող արդի մարդիկն էին տարբեր ֆեսի տակ, որ առաջ բերեցին 96-ի ահեղ կոտորածը, և Գլադստոնն էր, որ մեծ փորձառուի շեշտով խորհուրդ ավեց. «Նախ՝ մի՛ վստահեցեք Թուրք կառավարության խոստումներին, եթե այդ խոստումները հիմնված չեն Թուրքիայի խոստումներից անկախ իշխանության վրա։ Երկրորդ՝ մի՛ վախեցեք ստիպողական միջոցների դիմելու»։

«Մի՛ վստահացեք Թուրք կառավարության խոստումների՞ն...» Եւ իրոք, ո՞րքան են կոտորել և ո՞րքան խոստացել, բայց և այնպես Հայոց ձորերը արյունով են ներկված, Հայոց շենները քարուքանդ դարձած ....

Դեռ 1846 թվին էր, երբ Ռաշիդ փաշան Եվրոպայի դիվանագիտության առջև վիզը ծռած, շողոքորթորեն ասում էր.

«Ընդունում եմ, որ լավ չենք կառավարում, բայց կարդիլեմ ավելի վատ կառավարելուց։ Խնդրում եմ Եվրոպան հավատա ինձ և խոստումներիս»։

Եվրոպան հավատաց և չանցած երկու-երեք տարի՝ ընդհանրական կոտորածն ու թալանը սկսվեց։

Դարձյալ խոստացավ։ Հաթթը Շերիֆը, Հաթթը Հյումայունը,—Խըրխաի Շերիֆի կողքին թանգարանը դրված այդ սուլթանական խոստումները—, որոնք տալիս էին «խղճի ազատություն, կրոնների հավասարություն, անձի, բնակարանի անձեռնմխելիություն, քաղաքացիական հավասարություն», հրապարակ նետվեցան, բայց դեռ չանցած երկու

տարի, մեկ տարի, Բաղեշի մեջ՝ Տիգրանակերտի և Սղերդի պեյերը միանալով Շեյխ Սաղաթուլլայի հետ, կոտորում են հազարավոր հայեր, 3600 տուն հայ երկրից դուրս են վտարում, նրանց եկեղեցիները, վանքերը, տները, արտ ու այգիները սեփականացնում:

Դարձյալ խոսում և չի անցնում պարբերական երկու տարին, տեսեք՝ ինչ է գրում Տեղեկագիրը «Հարստահարություն» խորագրի տակ.

«Զանազան հարստահարությանց ենթակա են գլխավորապես Զարսանճաղ, Քղի, Բաղեշ, Տիգրանակերտ, Մուշ, Վան, Մարաշ, Խարբերդ, Հաճին... Զեր տերեսկիններու գործած անիրավությանց և արբունի տրոց անիրավ բաշխման վրա: ...Բաղեշ ստեպ քրդական արշավախումբին ենթակա ըլլալով, ժողովուրդը միշտ ահուդողի մեջ և անձնական ապահովութենե զուրկ է ... Տիգրանակերտ կատղնապի ենթարկ բռնավորին ձեռքին: Վանա ժողովուրդը Թեմուրյան պեկերեն... Վրացվոց գաղթականության պատճառով այլևայլ հայաբնակ քաղաքներն անիրավությանց տեսարան եղած են, Երզնկան, Բենկյանը, Զմառան, Եվդոկիան, Բալուն են, են»:

Ահա՛ Օսմանյան խոսում ...

Դեռ իթթիհադյան խոսումի՝ Օսմանյան Ազգային Սահմանադրության, առաջին նիստը չփակված, Ահմեդ Բիզայի, խալիլ պեյի, Թալեաթի ձեռքով Ատանան և Ատանաներ ըստեղծվեց:

Դեռ «Բարենորոգումներ»-ի ստորագրության մելանը չի չորացած, դեռ Պողոս Նուբար փաշայի շնորհավորական հեռագիրը վեհերին չհասած,— ահա դպրոցների իրավունքի խլումը, հայ զինվորների կանանց անդամ առևանգումը, ազգային և մասնավոր սեփականության գրավումը, ահա «Առևտրական Զարթումը», ահա և Սամսոնից 23/5 հունիսի հեռագիրը իր ամբողջությամբ.

«Ոսմիկան-զինվորների պետը Քարաղլը գյուղը գնալով շրջակա յոթ գյուղերի քրիստոնյաներին սպառնացել է այրել իրենց տները, եթե Մակեդոնիայի խալամ դաղթական-

ները չընդունվին իրենց տների մեջ։ Գյուղացիները, որ համախմբվել էին Քարազլը, պատասխանում են՝ մեր տները փոքր են, նոր բնակիչ չենք կարող ընդունել, որով ոստիկան-զինվորների պետի հրամանով սպանում են երկու հոգի, վեց հոգի էլ վիրավորում»։

Եվ Բալեաթ պեյ՝ ներքին գործոց նախարարը, ինքը՝ ամեն բանի թելադրիչը, գյուղերը ընկած խոստումներ է անում։ Մեծ նպարքոսը կրկնում—հաստատում է նրա խոստումները, իսկ նախարարների խորհուրդը, որ նույնն է քան Իթթիհադի շեֆերը, հետևում է՝ իր խաբեբա խոստումների հաջողությունները տեսնելով։

«Մի՛ վստահացեք Թուրք կառավարության խոստումներին ...»։

Այո՛, մի՛ վստահացեք. սա լոկ հնչյուն չէ, ատելության ժայթքը չէ և ոչ էլ դիտումնավոր կարգախոս։ Դարերն են իրենց ծոցից հանել այդ աբզացը, քաղաքական հետամնացության դեմ դատավճիռը և դրել Մեծ Ներունու սրտախորշին մեջ—մնկի՞ն, որո՞շ, միադիմի՞։

Պատմության հստակ դասն է սա, իրականության զգացումը՝ օրենքի ուժ ստացած տաճիկ վանդալականության դեմ—բնական՞լ, ամենակո՞ւլ, ստորնացուցի՞չ։

Թուրքը չունի հայրենիք, Թուրքը չունի ազգություն, որովհետև չունի Հայրենիքի և ազգության դաղափարը, հետևաբար նրանց բարգավաճելու, զարգացնելու ձգտումը։

Դարերի ամբոխակերպը նրան այդ չի տվել։ Որպես նոմադ, հորդա, Բնական Համայնք, ծնված ու սնված Շամի անապատում և մոդոլյան «ստեպներում»՝ միջավայրի ազդեցությունը տվել է նրան իր ինքնատիպությունը։ «Ստեպների» ուրադան-փոթորիկը իր տարերային խաղերի մեջ բոպեապես ավազի բլուրներ է կազմել և բոպեապես ցրվել, վրանները փոթորիկի հարվածների տակ ցան ու ցրիվ արել, և նոմադը իր հոտը քշել է այլուր արածելու, այնտեղի բուսականությունը—որի լինելու մասին հոգածություն չի ունեցել—ևս ոչնչացնելու, սպառելու և ուրադանի նույն խա-

զերին իր բնազդները ենթարկելու։ Նա հորդա էր առաջ, հորդա է և այժմ, տարբերությունը նրա մեջ է, որ առաջ ուներ նիզակ, ձի ձար և վրան, այժմ ունի հրացան, կշլա նույն ձարով։ Առաջ կերակուր եփում էր իր ձիան թամբի տակ, այժմ եփում է հայի օջախի վրա։ Կյանքի գծերը նույնն են մնացել։

Քրքրեցեք օսմանյան բոլոր էնցիկլոբ-բառագրքերը և դուք կկարդաք «վաթան» բառի դիմաց. «Ոչխարներ արածացնելու և վրան զարնելու վայր, յուրդ»—Հայաստանի զողանը, յայլան։ «Միլլեթ» բառի դիմաց՝ «Ցեղ և նրա տղաները, սեյիդներ»—Հայաստանի աշիրաթները և նրանց թոսունները։ Դավառացի թուրք մայրերի անեծքը՝ «Վաթանը քեռ, յուրդի քեռ, նե՞ քեռթի մելլեթ սին», այժմ ևս դեռ անհատական, մասնավոր բնույթ են կրում։ Հունական առածը, թե «Աստվածներն անգամ չեն կարող փոխել անցյալը», այս նոմադային կառուցվածքի եզրակացությունն է։

Այսպես էլ սովորեցնում են իրենց զավակներին՝ տաճիկի մտայնությունը իրենց ուսերին առած երկիր կառավարողներին։ Հավաքական ստեղծագործության իղձը չէ, որ ստեղծել է այդ բառերը՝ Հայրենիք, Ազգություն., հորդայական բնազդներն են տվել այդ «կանչը» համապատասխան իրենց հոգու և ոգու փխրունության։

Եվ Ռուտինան՝ պապական ահավորության սովորությունները ուղղի բջիջների և երակի գնդակների մեջ տեղավորված, բնական համայնքը, կույր բնազդի մեկ խաղով—Եփրատի հանցագործությամբ—Հայաստան եկավ մեր ծաղիկների մեջ միմիայն արածելու, մոգոլյան «ստեպ»-ի ուրագանի խաղերը խաղացնելու մեր շեն-շեն քաղաքների, բարգավաճ գյուղերի, ծփծփուն հանդերի գլխին։ Եվ աստվածային պատուհաս դարձավ մեղվի նման ժրաջան, մրջյունի նման հոգնասեր հայի գլխին. պատուհա՞ս, որը իր հարվածին մթերքները ձեռք է բերում իսլամություն կոչվող մթերանոցից, իր հոգևոր սնունդը եղող բավեղից, լաբյուրինթոսից՝ կառուցված միևնույն, իրեն համապատասխան հանգամանքներում, միանման միջավայրի մեջ, միայն թե ոչ

ուրագանների «ատելում», այլ սամումների «անապատում»։ Որքա՜ն գեղեցիկ է պատկերացնում դա պատմաբան Շվայնֆուրթ. «Իսլամությունը,— ասում է նա,— անապատների մեջ ծնած, ամենուրեք արշավից ու քայքայից։ Ուր որ մուտք գտավ, անապատ դարձրեց՝ Նուբիո և Արաբիո ժայռերի նման չոր ու լերկ։ Իր աղդեցության տակ ամեն աղդ, Մարոքից մինչև Սունդայի կղզիները, միաձույլ զանգված դարձան ու տատեցան»։

Մարմնական և հոգեկան այսպիսի կազմվածք ունեցող Տաճիկն էր, որ ինչպես վերջին պատերազմի առթիվ գրեց իրենց «Բազմինաթ» թերթը, «500 տարի սրանից առաջ մտավ Եվրոպա մի ղույգ հին տրեխներով, և այսօր նույն տրեխներով վերադառնում է Ասիա»։

Եվ ա՜խ պիտի լինի մեր բախտը անօրինողը, «Բարենբոգումների» դործադրողը։

Մի վատահացեք տաճիկ կառավարության խոստումներին։

* * *

Քսան ու հինդ միլիոն այլատարբ ժողովուրդ, իրերամերժ, իրենց շահերով, ղդացումներով, ղդայողական ունակով և ազդային ավանդական ոդիով, բաղկացնում են Օսմանյան Պետության քաղաքական զանգվածը։ Չորս միլիոն Թուրանական ցեղեր,— Թուրք, Թուրքմեն, Թաթար, Ավշար, բռնի իսլամացած, բայց մայրենի լեզվով խոսող քրիստոնյաներ,—որոնք չունին իրար զոդող, իրար լրացնող և մի ազդություն կերտող հոդը, որոնք կղզիացած են մի քանի քաղաքների մեջ, կառավարում են որպես Տիրող Ազդ և Տիրող Պետություն, այդ քսան և հինդ միլիոն այլացեղ ժողովուրդների հոծությունը։

Պետական դիտության իմաստությունը չէ, որ հիմք է կազմում այդ կառավարելակերպին և ոչ էլ քաղաքացիական առաքինությունը, ո՛չ, այլ փոքրամասնության ինքնազոյության բնազդը, «միևնույն տրեխներով հետ դառնալու» երկյուղի բնազդը, և այդ բնազդից ծագող հակապատմա-

ելան, հակամարդկային, բոլոր սադրանքները, որոնք ամփոփված՝ «Տիրող Ցեղի Մտայնություն», «Տիրող Կրոնի Մտայնություն» խորագրին տակ, իրավունք են տալիս Գլադստոնին ասելու՝ «Մի՛ վստահացեք Թուրք կառավարության խոստումներին ...»:

Տիրող Ցեղի մտայնությո՛ւն ...
Տիրող Կրոնի մտայնությո՛ւն ...

Դեռ նոր, Օսմանյան Պարլամենտի մեջ օրենքների քննադատության միջոցին մեպուսներից մեկի միամիտ հարցին՝ «ուրեմն Շերիա՞թը պիտի զբաղվի մաքսանենգության, օղիի խնդիրներով», ավելի աչքառու և հայտնի պաշտոններ վարող մի մեպուս հրճվանքով պատասխանեց՝ «Այո՛, Շերիաթը պիտի զբաղվի մաքսանենգության, օղիի և ամեն խնդիրներով»:

Ո՛չ Պառլամենտի նախագահը, ո՛չ մեպուսներից որևէ մեկը, ո՛չ նույնիսկ տեղեկաբեր Ջոնրապը ոչ մի նկատողություն չարեցին: Ասել է, ուրեմն, ընդունում են, որ Շերիաթը երկրի համար պիտի լինի տիրող ու հիմնական օրենք:

Ի՞նչ է Շերիաթը ինքնըստինքյան և ի՞նչ է թաքնված նրա անտառի մեջ:

— Շերիաթը կրոնական այն անմարդասեր, այլամերժ, ասոված ապետական օրենքների ամբողջացումն է, որ իր հիմքն առած է Ղուրանից և շաղված ձևված նրա վրա, այն Ղուրանի, որը ոչ իսլամի համար ունի հետևյալ անփոխարինելի աստվածակույս հրամաններն ու պատգամները.

Ղուրանն է Ալլահի սահմանած կարգերի և օրենքների մատյանը, որով պիտի կարգադրվին աշխարհի վրա ապրող ժողովուրդների բոլոր գործերը (Ղուրան, Սուրե Դ. Նիսսա, 109 այեթ):

Ղուրանն է մահմեդական համայնքների երկրային և երկնային օրենսդրությունը (Սուրե ԺԴ, 17 այեթ):

Անձի տեղ անձ, աչքի տեղ աչք, քթի տեղ քիթ, ականջի տեղ ականջ, ատամի տեղ ատամ և ձիրքի տեղ համապատասխան վերք (Սուրե Ե, 49 այեթ):

Մահմեդական համայնքից դուրս բոլոր կրոնական հաստատությունները պիղծ են։ Եթե նրանք իրենց ունեցածը կտան իսլամին, այն ժամանակ միայն կխնայվի նրանց կյանքը, այն էլ եթե իսլամները կամենան (Սուրե Դ, 9 այեթ։ Սուրե Բ, 27 այեթ և Սուրե Ը, 68 այեթ)։

Կռվիր գյավուրների դեմ վրեժխնդրությամբ և անդութ եղիր դեպի նրանց (Սուրե Զ, այեթ 9)։

Զինվեցեք պաշտպանելու իսլամի դուքը և նորանոր նվաճումներով օր օրի վրա ընդարձակեցեք այդ Պետության սահմանները (Սուրե Բ, 212 այեթ և Սուրե Դ, 151 և 152 այեթներ)։

Ամենահզոր Ալլահը թող օգնի, որ անհավատների մարմինը կտրատեք, նրանց հաղթահարեք, որ իրենց նպատակին չհասնին (Սուրե Դ, 122 այեթ)։

Սրանց նման բազմապիսի ոճրագործության և անհամբերատարության դրդող պատգամների վրա ավելացրեք և հետևյալ զլուխ գործոց հրամանը—Թադիայի Օրենքը—, որը կազմում է Շերիայի ամենափափուկ մասը, այն է՝ սուտ վկայության թույլատվությունը և օսմանյան կեղծիքը, այն ժամանակ կստանաք Շերիաթի մանրանկարը։

Հավատացյալնե՛ր, ոչ ոքի հետ անկեղծ բարեկամություն չկապեք, բացի դուք ձեզ հետ։ (Սուրե Դ, 114 այեթ)։

Այսպիսի սկզբունքներից բխած Շերիաթն է, որ հայի վկայությունը չի ընդունում, որպես պիղծ, զազիր մի առարկա, իսկ մեղմացուցիչ պարագային՝ մեկ թուրքի դեմ պահանջում է երեք հայի վկայություն, որ հայոց կրոնական և կրթական հաստատությունները անարգում է, հայի սեփականությունը դիտակցորեն բռնադրավում, որ հայ զինվորի և պաշտոնյաների վրա խարականորեն է նայում, բռնի իսլամացումներ է կատարում, հայերը զինաթափում, իսլամներին զինում և այլն, և այլն։ Մյուս կողմից Շերիաթի հրամանով Իթթիհադը Սահմանադրության 35-րդ հոդվածը փոխում է ու նրա տեղ զետեղում՝ «Խալիֆայության և Սուլթանության իրավանց նվիրականությունը» (հոդված 9),

«Օսմանցիության պատմական ավանդությունների շարունակումն ու պահպանումը» (հոդված 7), «Աշխատություն ցեղերի միացման» (հոդված 5)։ Այսինքն՝ Շերիաթը պաշտոնապես դարձավ Օսմանյան Սահմանադրության միջուկը, նրա պորտը, որի միջոցով բաղկացուցիչ ազգերը դեռ շատ անմաքուր արյուններ պիտի ծծեն։

Շերիաթը Ղուրանի բանաձևն է և ամենաուժեղ զենքը համիսլամության, որով և համաթրքության գաղափարին։ Դա հետամնաց և «ամեն ինչ սառցակույտ դարձնող» թուրքի գործն է՝ բաղկացուցիչ ազգությունները ղանգելու օսմանցիության մեջ։ Դա այն գործոնն է, որ իր հեղկ տրամաստությամբ և ճակատագրական ձգտումով պատրաստել է ձրիակերների և գաղանների մի հոծ ոհմակ, որի էությունը և անօրինությունը շատ լավ պատկերացրել են Հանրի Ռոշֆորի հետևյալ տողերը.

«Վպիրշ, կին բռնաբարող և երեխաների փորը ճեղքող թուրքը պետք չէ հուսա նահանջի որևէ վայր։ Հանուն քաղաքակրթության և ժողովուրդների անդորրության, կարգը եկած է, որ բնաջնջողները բնաջինջ լինեն։ Սրանց և Մուլայի-Հաֆիտի վայրի անասունների մեջ տարբերություն չկա»։

Բնավ խիստ և հակամարդկային չէ այս փղձուկը. հայ մայրերին հարցրեք։

Եվ քանի որ Շերիաթն ու իսլամությունն են, որ պիտի տնօրինեն Օսմանյան պետության քաղաքական և քաղաքացիական իրավասությունները, քանի որ նա է միակ ելակետը թուրք տիրող տարրի և բաղկացուցիչ ազգությունների փոխհարաբերության, և քանի որ նա էր կարմիր թելի նման անցնում Իթթիհադ-գերմանական «Բարենորոգումների» պատասխան հենքի արանքով՝ «Մի՛ վստահացեք թուրք կառավարության խոստումներին», որովհետև՝ «Հավատացյալնե՛ր, ոչ ոքի հետ անկեղծ բարեկամություն մի՛ կապեցեք, բացի դուք ձեզ հետ»։

* * *

Կեղծ են եղել միշտ Թուրքերի խոստումները: Պատմությունը մեր առջևն է՝ Իթթիհադի պատմությունը—Թուրք կառավարության այսօրվան պատմությունը: Դեռ 1880-ի հուլիսի 5-ին, դարձյալ կոտորածից, առևանգումից, թալանից հետո, Աբդի փաշան պատասխանում է Պոլսի դեսպաններին.

«Հայկական բարենորոգումները վճռական կերպով ձեռնարկվել են: Հանձնախումբ է ուղարկվել ոճրագործները հետապնդելու: Հրամայվել է բաժանել Դատական Իշխանությունը Վարչականից: Բարեփոխվել է հարկահանությունը: Կազմակերպվել է ժանդարմերիան և ոստիկանությունը: Ձևնարկվել է համայնքների խորհրդի և Նահանգային Դատարանների կազմություն: Դեսպանները կարող են համոզվել ու վստահանալ, որ Բ. Դուռը արել է ամեն բան ... և ազգաբնակությունը խոստովանում է, որ այսուհետև իր կյանքի և ինչքի անձեռնմխելիությունը լիովին ապահովված է»:

Թե երբեք եղե՞լ են այս ամենը, մենք չգիտենք, միայն այն գիտենք, որ միայն Տաճիկ Կառավարության լպիրշ անամոթությունը կարող է այսպիսի առասպելներ հյուսել, ինչպես ներկայումս հյուսում է Թալեաթը՝ հիմնված «Թալիայի Օրենքի» վրա:

1880 թվի բարենորոգումների նմանը այս ամառ ևս գործադրել սկսեցին «Հայաստանի Բարենորոգումները Հոֆ և Վեսթենենք վերահսկիչներով» խորագրին ներքև: Թե ի՞նչ էին «Բարենորոգումները» և ի՞նչ էր վերահսկիչների հարաբերությունը, բավ է նկատել տալ, թե հայ ժողովուրդը այդ վերահսկիչների անունները դուց չարած, նրանք հեռացան մեր երկրից և դարձյալ նախկին պատմությունը՝ իր բոլոր շարավներով, իր հոլովներով:

Ինչո՞ւ:

Այս հարցի պատասխանը տալիս է Տիրող Ցեղի մտայնությունը, որի միակ նպատակն է տարբեր տարրերը ձուլել իր մեջ՝ ուժեղ թուրք ազգություն և պետություն կազմելու, հակառակ պարագային, նա վստահ է, որ պատմության

անողոք դատավճիռը դալու է ասելու՝ «էվվելի Շամ, ախերի Շամ»։

Պետության բարձր պաշտոնյաների, հայտնի գիտնականների, Իթթիհադի իդեոլոգների գրածներից մի քանի նշմուշ տանք նրանց մտայնությունը հաստատող, որով և Բարենորոգումների կարիքությունը ժխտող։ Ահա տալիս ենք «Բարենորոգումներից» հետո գրածները.

«Մեր երկրի մեջ քրիստոնյաներ ևս կան, մենք նրանց կսիրենք և կարևորություն կտանք, երբ նրանք մեզ կսիրեն և հավասարմությամբ կծառայեն իսլամության» (Ամասիայի կառավարիչը, Իթթիհադական)։

«Հայերի պատճառով պետք չէ նեղացնել բրդերին» (Հազրը փաշա, նախկին նպարքոս)։

«Հայ Ազգային ժողով չի կարող լինել, որովհետև հայ ազգ չկա։ Թուրքիայի մեջ կա մեկ ազգ, այն է Օսմանյան Ազգ» («Թանին», Իթթիհադի օրգանը)։

«61-րդ հոդվածի գործադրությունը՝ բարեկարգել տալու համար Օսմանյան Կայսրության Արևելյան նահանգները, մեզ համար անկարելի է և երբեք չենք նեղիլ այդ տեսակ խնդիրներով մեզ զբաղեցնել» (Հյուսեին Ջահիդ)։

«Հայկական հարց ասելով պետք է հասկանալ իտարեսիզ լինելու հարց» (Նուրի պեյ, Իթթիհադական իդեոլոգ)։

«Հայկական Հա՞րց։ Այդպիսի խնդիր չունինք ... Կառավարության նպատակն է Քրդերի և Հայերի դժտությունները կարգադրել ... Մենք ամեն բան անելու ենք ուժով, մեկ Օսմանյան Կայսրություն հիմնելու համար» (Մահմուդ Մուխթար փաշա, Բեոլինի դեսպանը)։

«Այն վայրերում, ուր իսլամները փոքրամասնություն են կազմում, անհրաժեշտ է զինաթափ անելով բոլոր բնակիչներին, ծածուկ վերադարձնել իսլամներին իրենց զենքերը» (Իթթիհադի Սելանիկի ժողովի որոշումը, այս տարի ևս ընդունված)։

«Այդ նահանգների մեջ մենք բարենորոգումը Հայերի հաշվի համար չէ, որ պիտի անենք, այլ բոլոր օսմանցիների, մանավանդ իսլամների» (Աբդուրահման պեյ)։

«Հայաստանի բարենորոգումներով մեզ չեն կարող վախեցնել։ Եվրոպայի հավասարակշռության համար Թուրքիայի հարատևությունը ամեն տարակույսից վեր է» (Ասքմ պեյ, իթթիհադական երեսփոխան)։

«Եթե արտաքին պետությունները փորձեն մեր երկրի վրա հարձակում գործելու՝ բարեփոխելու մտքով, նրանք միայն մոխրակույտ տեր կդառնան» (Էմրուլլահ պեյ, կրթական նախարար)։

«...Երբ մի ազգ հավաքում ունենա, բնական է իսկույն բաղձանքներ կծնին։ Օսմանյան Պետության տկարացման պատճառը սա է։ ...Մի երկրի մեջ առանձին Ազգային Բարձրագույն Վարժարան հիմնելը վտանգավոր է։ ...Օսմանյան Կառավարության անփութությունն է, որ իր Պետության մեջ առանձին բաղձանքների հետամուտ ազգություններ իրենց հատուկ վարժարաններն ունեցան։ Մեր երկրի մեջ տարբերտարբեր վարժարանները Օսմանյան Միության արգելք են։ Այսուհետև ժամանակ է, որ ազգային քաղաքականության հետևինք» («Իդտամ», «Վնասակար է ոչ իսլամ համախմբումների կոչումը» խմբագրականի մեջ)։

«Հայերը իրավունք չունին հողային հարցի մեջ։ Երկրի մեկ օրենքին համաձայն, հողային ոևէ սեփականություն երբ 7 տարի լքված է մնում, դադարում է նրա սեփականությունը լինելուց» (Հագդը փաշա)։

«Իսլամության բնավ չվայելող այդ տոնորության (կիրակի օրը Իզմիրի մեջ դադարի օր լինելու նկատմամբ) վերջ պիտի տրվի, վերջապես» («Թանին»)։

«...Այս անտրամաբանական կետերից բացի, մեր ազգային և կրոնական բարքերից և ոչ մեկը թույլ կտա, որ կիրակին իբրև դադարի օր նկատվի» («Թասֆիրը էֆքյար»)։

«Թեպետև քննիչների պարտականությունները սահմանող կանոնադրությունը դեռ չենք տեսել (մի՛ վախեցեք, երբեք էլ պիտի չտեսնեք,—Փ.), միայն կարծում ենք, թե Եվրոպայի մասնագետների և պաշտոնյաների մեջ ամիսներով փընտրելուց հետո մեր գտած և Անատոլուի հեռավոր անկյունները ուղարկվելիք քննիչները չենք բերել նրա համար, որ

հայերուն պաշտոն պատրաստեն։ Եթե այս լիներ միայն նպատակը, նեղություն չէինք քաշիլ Եվրոպայից այստեղ բերելու այս քննիչները, որոնք տարակույս չկա, թե մեր հայ հայրենակիցների ընդունակության և կարողության մեղ չափ ծանոթ չեն։ ...Եվ պնդել, թե այդ շրջանի զորձերի կանոնավորումը միայն պաշտոնությունները ազգության հիման վրա և նավասար համեմատության բաշխումով կարող է իրականանալ,— սա առաջ է գալիս բարենորոգումների ոգին ճասկացած չլինելուց» («Թանին», ժանդարմերիի, ոստիկանության, Թափուի, մարդահամարի, երկրագործական բանկայի և դատարանների մեջ հայերի մասնակցության առթիվ խմբագրական։ Ընդգծվածները մերն են)։

«Դաշնակցությունը, մխրճված պաշտոնական աթոռների մեջ, Օսմանցիության վտանգավոր չի կարող լինել։ Հնչակյաններն են մեր թշնամիները, նրանց վրա էլ տեռորի սարսափով պիտի ազդել և իրենց մտադրությունը իրենց հետ մեռցնել» (Թալեաթ պեյ, ներքին գործոց նախարար)։

Ահա այն նմուշները, որոնք աքսիոմայի նման ցցված են մեր առջև որպես հայտարար նշան Տիրող Ցեղի մտայնության։

Թող որքա՜ն կամենում են «շնորհավորական հեռագիրներ» տեղացնեն միամիտներն ու սինլքոբ ուղեղները։ Որքան կամենում է թող Թալեաթը—Իթթիհադի հոմանին—վստահության խոստումներ փրփրա, ժամանակի մի փոքր տվյալի մեջ բնավորության փոփոխություն ընդունելը՝ հակահոգեբանական է, որպես և Իթթիհադական Կառավարության՝ անտեսական տագնապից ճնշված, բարենորոգումների դիջումը իրական ընդունելը՝ անտրամաբանական։ Իթթիհադը իր մեթոդավոր գործելակերպից տեղի տալու ո՛չ ցանկություն և ո՛չ կարողությունը ունի։ Եվ այսօրվան տաճիկը նույնն է, ինչ որ երեկվանը։ Եվ այսօրվան հանգամանքները նույնն են, ինչ որ երեկվանը։

Ու Հայն է, որ զոհ է դարձել բռնապետության ամենասոսկալի—Հայի արյունով ձեռքերը ներկած Իթթիհադին...

...Բայց և այնպես՝ «Միայն մի միջոց կա կրճատելու, կեդրոնացնելու սպանիչ տանջանքները և նորածնի արյունոտ չարչարանքները— ԴԱ. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄԻՋՈՑՆ Է»: Այս է ավանդում մարդասերների մարդասեր Կ. Մարքսը։

Հեղափոխական միջոց. դա վերջ պիտի դնե քո տանջանքներիդ, մարտիրոս արտադրող Հայ, ուստի՝ մի վստահացիր թուրք կառավարության խոստումներին և մի՛ վախեցիր ստիպողական միջոցների դիմելու։

ՀԱՅՐ ՄԻ ԱՆԳԱՄ ԷԼ ՊԻՏԻ ՄԵՌՆԻ, ՈՐ ՀԱՅՐ ԱՊՐԻ։

(«Հնչակ», № 2, դեկտեմբեր, 1914)

Փ. Ա. Զ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սարգսյան-Փարամազյան Մատթեոս (Փարամազ) (1863—1915) 3

Փարամազ. Իմ դատավարությունը Տաճիկաստանում 1898 թվին . 56

Հայի պահանջը 70

«Բարենորոգումները Հայաստանում» 77

ՀԱՅԿԱԶ ՄԱՆՈՒԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

ՓԱՐԱՄԱԶ

Հրատ. խմբագիր Ա. Լ. Սահակյան
Նկարիչ Հ. Ն. Գործակցյան
Տեխ. խմբագիր Զ. Հ. Սարգսյան

Հանձնված է շարվածքի 31, 03 1992 թ.։ Ստորագրված է տպագրության 15. 05. 1992 թ.։ Չափը 84×108 1/32 թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 4,83 մամ., տպագր. 6,0 մամուլ։ Ներկ. մամուլ 4,83։ Հրատ.-հաշվարկ. 4,05 մամուլ։ Տպարանակ 15 000։ Հրատ. № 7965։ Պատվեր № 18։ Գինը 10 ռ.։

ՀԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24 գ.։

Издательство АН Армении. 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна 24.

ՀԳԱ հրատարակչության տպարան,
375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24։

Типография Издательства АН Армении. 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна 24 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0220161

A II
82697

10 п.